491.99-53
Ք-48

ՔԵՐԱԿԱՆԿԱՆ

ԼՈՒԾՈՒՄ

ՍՏՈՒԳՎԱԾ է 1961 թ.

ԵՒ

ՀԱՄԱՌՕՏ ԾԱՂԿԱՔԱՂ

Ի ՆԱԽՆԵԱՑ

Ի ԼՈՅՍ ԸՆԾԱՑԵԱԼԱՐԴԵԱՄԲՔ

ՀԱՅԿԱԶԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՈՐ Ի ՊԷՏՈՒԹԱՆ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Տ.Տ. ՄԱՏԹԷՈՍԻ

ՍՐԲԱԶՆԱԿԱՏԱՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

ՏՊԵԱԼ

ԾԱԶԳԱՑԻՆ ՏՊԱՐԱՆԻ

1861

ՀԱՅԿ ԴԱՍՏԻԱՐԱՆ
ԾՈՒՆԴՍԵՆՏԱԼ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

A 1/2012

ԲԱՌԱՋԱԲԱՆ

Քերականական լուծումը լեզուի մը գլխաւոր բանալիներուն մէկն է. անով է որ լեզուին բնութիւնը, անոր կազմութիւնը՝ ոգւոյն և գաղտնիացը կը թափանցենք. անով կանոնաւորն ու անկանոնը, օրինաւորն ու ապօրինաւորը կը ճանչնանք. վերջապէս քերականական կանոններն առանց լուծման մեզ լեզուի մը լիովին հասու ընել չեն կրնար։ Ամէն կանոնաւոր դպրոցներու մէջ լուծումը քերականութեան ուսման մէկ էական ճիւղը համարուած է. և գրեթէ որչափ քերականութեան նոյնչափ լուծման դասագիրքներ կան։ Լուծումը մեր ազգային դպրոցներուն մէջ ալ անծանօթ չէ, այլ գրեթէ ամէն վարժապետ աս միջոցին կարևորութիւնն ճանչցած է ու անիկա կը գործածէ։ Աս գիտնոլով համառօտ լուծման դասատետր մը տպագրութեամբ ի լոյս տալու յորդորուեցանք։ Եւ որպէս զի մեր երկասիրութիւնը նպատակին յարմար և օգտակար ըլլայ, լուծման նիւթական օրինակներուն որոնք համառօտ ըրած ենք, լուծման կանոնները նախընթաց ըրած ենք։

Լուծման համար տղոց պէտք եղած մէկ բանն ալ հեղինակաց ընտիր կտորներն են. ուստի ասոր ալ դիւրութիւն մը տալու մտօք՝ մեր աս դասագրքին մէջ քանի մը ընտիր նախնեաց գործքերէն քաղուածներ բերինք։ Աս քաղուածները տղոց միանգամայն հայերէն լեզուին մէջ մարզուելու հատակտորներու տեղ կրնան ծառայել. կը յուսանք թէ հատակտորները բուն գործերը ձեռք բերելու ու կարդալու հայերենասէր աշակերտաց դրդիռ մը պիտի ըլլան. քանզի հայերէն գրաբար լեզուն հեղինակաց մէջն է. աս լեզուին այնչափ աւելի հմուտ կ'ըլլայ մէկը, որչափ աւելի և ստէպ հեղինակ կը կարդայ։

Մեր ուսումնասէր և ներողամիտ հասարակութիւնը գործին նպատակին կարևորութեանն ու օգտակարութեանը նայելով կը յուսանք թէ թերութիւններուն ներողամիտ կ'ըլլայ։ Գործին ընդունելութիւնը մեզի քաջալերութիւն պիտի տայ։ որ երկրորդ տպագրութիւնն աւելի ընդարձակ ու կանոնաւոր ընելու աշխատինք։

Ա. Մ. Գ.

ՀԱՄԱՌՕՏ ԾԱՂԿԱՔԱՂ

ՔԱՆԻ ՄԸ ԸՆՏԻՐ ՄԱՏԵՆԱԳԻՐՆԵՐԷ

ՀԱՆԴԵՐՁ ՎԵՐԼՈՒԾՈՒԹԵԱՄԲ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՍՈՐՎՈՂՆԵՐՈՒՆ ԴԻՒՐՈՒԹԵԱՆԸ ՀԱՄԱՐ

Այս համառօտ գրքին նպատակն է մեր նախնեաց ընտիր մատենագրութիւններէն քանի մը հատուածներ քաղելով, համառօտ ծաղկաքաղ մ՝ընել, որոնք տղոց ընթերցանութեան դասագիրք ըլլալէ զատ՝ անոնց քերականական վերլուծութեան համար ալ ծառայէ։ Այս նպատակով քերականական վերլուծութեան կանոններ ու վերլուծութեան գործնական օրինակներ ալ տուին մէկ մասին կամ հատուածին սկիզբը պիտի դնենք։

Խօսք մը քերականօրէն վերլուծելը՝ խօսքն իր տարրներուն կամ մասունքներուն բաժնել, իբր թէ խօսքին շէնքը միրսումիոջէ քակել է։ Տղայք քերականութեան մէջ կը սորվին նախ բառերուն բնութիւնը ճանչնալ, այսինքն թէ՝ անունը կամ գոյականը, ածականը, դերանունը, բայը, մակբայը, եայլն, ինչ են։ Ասոր հետ միանգամայն կը

սորվին ամեն մէկ տեսակ բառին հանգամանքները. զոր օրինակ՝ թէ անուն մը կամ գոյական մը յատուկ է թէ հասարակ, եզակի է թէ յոգնակի, կամ ինչ հոլով է։ Կամ դերանուն մը ինչ տեսակ է, և ինչ թիւ, ինչ դէմք և ինչ հոլով։ Եւ կամ բայ մը ինչ տեսակ է, ներգործական՝ թէ կրաւորական թէ չեզոք. կամ թէ ինչ եղանակի, ժամանակի, խուսոյ, դէմքի և լծորդութեան բայ է։ Նոյնպէս ուրիշ տեսակ բառերու համար իմանալու է։

Ասոնց ամենը սորվելէն ետքը՝ տղաք քերականութեան երկրորդ մասին կամ բաղդատութեան մէջ կը սորվին թէ՝ բառերը խօսքին մէջ ինչ պաշտօն կը կատարեն. օրինակի համար՝ թէ անուն մը կամ դերանուն մը և կամ ուրիշ մասն բանի մը խօսքին մէջ անուն բայի թէ խնդիր է. և թէ ինչ տեսակ խնդիր է. և թէ ամեն տեսակ խնդիր խօսքին մէջ ինչ ձև և ինչ դիրք պիտի ունենայ, և ուրիշ այսոնց նման բաներ։

Տղաք վերլուծութեան մէջ պիտի տեսնեն ինչ որ քերականութեան մէջ սորված են, բայց հակադարձ կերպով։ Քերականութիւնը պարզէն բաղադրեալի կ՚երթայ. այսինքն նախ խօսքին մասունքը, և ապա անոնցմով ամբողջ խօսք մը կազմելու կերպը կը սորվեցընէ. ասոր հակառակ վերլուծութիւնը բաղադրեալէն պարզին կ՚երթայ. այսինքն՝ ամբողջ խօսքէն անոր մասունքնե-

բուն։ Այս մեթոդը կրթութեան համար ամենէն աղէկ մեթոդն է։

Այս ըսուածներէն հասկըցուեցաւ թէ՝ ազգաբ խօսքը մը վերլուծած առեններն գլխաւորապէս երկու բան պիտի ընեն. Ա. Բառաշնորհութիւն, և Բ. Վերլուծութիւն։

Բառաշնորհութեան մէջ դարձեալ երկու բան պիտի ընեն.

1. Բառերուն բնութիւնը ցուցընել, այսինքն թէ խօսքին մէջի բառերն ինչ տեսակ կամ ինչ ման բաներ են. գոյականն թէ ածական, դերանունն թէ բայ, և այլն։

2. Բառերուն հանգամանքները ցուցընել. այսինքն անոնց բաժանումները, թիւը, հոլովը, դէմքը, եղանակը, ժամանակը և այլն։

Մ Ա Ն Ա ·

ԲԱՌԱԶՆՆՈՒԹԻՆ

1 · ԱՍՏԻՃԱՆ

ԲԱՌԵՐՈՒՆ ԲՆՈՒԹԻՒՆԸ ՑՈՒՑԸՆԵԼ

Ոչ հատուած մը գտնենք ու անիկա Բառազննութեան 1. աստիճանին համեմատլուծենք · Եթէ գրուելու հատուածները կը թողունք որ աշակերտներն ինքնին լուծեն ·

Լա՛ւ՝ ի ծնանելն Յիսուսի՝ ի Բեթղահէմ Հրէաստանի յաւուրս Հերովդի արքայի, ահա մոգք յարևելից եկին Յերուսաղէմ, և ասեն · Ուր է որ ծնաւ արքայն Հրէից, զի տեսաք զաստղն նորա յարևելս, և եկաք երկիր պագանել նմա ·

Եւ	ըշ.	Հրէաս տանի	գոյ.
՝ի	նախ.	յ	նախ.
ծնանել	բայ.	աւուրս	գոյ.
ն	դէմ.	Հերովդի	գոյ.
Յիսուսի	գոյ.	արքայի	գոյ.
՝ի	նախ.	ահա	մակ.
Բեթղահէմ	գոյ.	մոգք	գոյ.

	նախ.	Հրէից	գոյ.
յ		զի	՚ՐՐ.
արևելից	գոյ.	տեսաք	բայ.
եկին	բայ.		նախ.
յ	նախ.	զ	
Երուսաղէմ	գոյ.	աստղ	գոյ.
և	՚ՐՐ.	ն	դէմ.
ասեն	բայ.	նորա	դեր.
Ուր	մակ.	յ	նախ.
է	բայ.	արևելս	գոյ.
որ	դեր.	և	՚ՐՐ.
ծնաւ	բայ.	եկաք	բայ.
արքայ	գոյ.	երկիր պագնել	բայ.
ն	դէմ.	նմա	դեր.

Եւ իբրև լուաւ արքայ Հերովդէս, խռովեցաւ, և ամենայն Երուսաղէմ ընդ նմա։

Եւ	՚ՐՐ.	և	՚ՐՐ.
իբրև	մակ.	ամենայն	ածա.
լուաւ	բայ.	Երուսաղէմ	գոյ.
արքայ	գոյ.	ընդ	նախա.
Հերովդէս	գոյ.	նմա	դերա.
խռովեցաւ	բայ.		

Եւ ժողովեալ զամենայն զքահանայապետսն և զդպիրս ժողովրդեանն հարցանէր՝ի նոցանէ թէ ուր ծնանիցի Քրիստոսն։

Եւ	՚ՐՐ.	զ	նախ.
ժողովեալ	ընդա.	քահանայապետս	գոյ.
զ	նախ.	ն	դէմ.
ամենայն	ածա.	և	՚ՐՐ.

զ	նախ.	նոցանէ	տէր.
դպիրս	գոյ.	թէ	ՀՀ.
ժողովրդեան	գոյ.	ուր	հայ.
ն	տիմ.	ծնանիցի	բաց.
հարցանէր	բաց.	Քրիստոս	գոյ.
'ի	նախ.	ն	տիմ.

Եւ նոքա ասեն ցնա 'ի Բեթղահէմ Հրէաստանի։ Յայնժամ Հերովդէս գաղտ կոչեաց զմոգսն, և ասուցեաց 'ի նոցանէ զժամանակն աստեղն երևելոյ։ Եւ արձակեալ զնոսա 'ի Բեթղահէմ, ասէ. Գընացէք ստուգեցէք վասն մանկանն, և յորժամ գտանիցէք՝ ազդ արասջիք ինձ, զի և ես եկեալ երկիր պագիցս նմա։ Եւ նոքա իբրև լուան 'ի թագաւորէն՝ գնացին. և ահա աստղն զոր տեսին յարևելս՝ առաջնորդեաց նոցա, մինչև եկեալ եկաց 'ի վերայ՝ ուր էր մանուկն։ Իբրև տեսին զաստղն, խնդացին յոյժ ուրախութիւն մեծ։ Եւ իբրև մտին 'ի տուն, տեսին զմանուկն հանդերձ Մարիամաւ մաւրն իւրով, և անկեալ երկիր պագանէին նմա. և բացեալ զգանձս իւրեանց՝ մատուցին նմա պատարագս՝ ոսկի և կնդրուկ և զմիւռոն։ Եւ հրամայեալ առեալ 'ի տեսլեանն չդառնալ անդրէն առ Հերովդէս, ընդ այլ ճանապարհ գնացին յաշխարհն իւրեանց։ Եւ իբրև գնացին նոքա անտի, ահա հրեշտակ տեառն երևէր 'ի տեսլեան Յովսեփու, և ասէր. Արի առ զմանուկդ և զմայրն իւր՝ և փա-

խիր Յեգիպտոս, և անդ լինիջիր՝ ցորժամ ասացից քեզ. քանզի 'ի խնդիր է Հերովդէս կորուսանել զմանուկդ։ Եւ նա յարուցեալ առ զմանուկն և զմայր իւր գիշերի՝ և գնաց Յեգիպտոս, և անդ էր մինչև ցվախճան Հերովդի։

Յայնժամ իբրև եռեալ Հերովդէս թէ խաբեցաւ 'ի մոգուց անտի, բարկացաւ յոյժ. և առաքեաց կոտորեաց զամենայն մանկունս որ էին 'ի Բեթղահէմ և յամենայն սահմանս նորա՝ յերկեամենից և 'ի խոնարհ, ըստ ժամանակին զոր ստուգեաց 'ի մոգուցն։ Եւ 'ի վախճանելն Հերովդի, ահա հրեշտակ տեսանն 'ի տեսլեան երևէր Յովսեփայ Յեգիպտոս, և ասէր. Արի առ զմանուկդ և զմայր իւր, և գնա յերկիրն Իսրայէլի. զի մեռան որ խնդրէին զանձն մանկանդ։ Եւ նա յարուցեալ առ զմանուկն և զմայր նորա, և եկն յերկիրն Իսրայէլի։ Եւ իբրև լուաւ եթէ Արքեղայոս թագաւորեաց Հրէաստանի փոխանակ Հերովդի հօրն իւրոյ, երկեաւ երթալ անդր. և հրաման առեալ 'ի տեսլեան, գնաց 'ի կողմանս Գալիլեացւոց։ Եւ եկեալ բնակեցաւ 'ի քաղաքին՝ որ կոչէր Նազարեթ։

Դուք էք աղ երկրի. եթէ աղն անհամի՝ ի՞նչ յաղեցի. ոչ իմիք ազդիցէ այնուհետև, բայց եթէ ընկենուլ արտաքս՝ և կոխան լինել 'ի մարդկանէ։ Դուք էք լոյս աշխարհ.

հի. ոչ կարէ քաղաք թաքչել՝ որ 'ի վերայ լերին կայցէ։ Եւ ոչ լուցանեն ճրագ՝ և դնեն ընդ գրուանաւ, այլ 'ի վերայ աշտանակի. և լոյս տայ ամենեցուն՝ որ 'ի տանն իցեն։ Այնպէս լուսաւորեսցէ լոյս ձեր առաջի մարդկան, որպէս զի տեսցեն զգործս ձեր բարիս, և փառաւորեսցեն զՀայրն ձեր որ յերկինսէ։ Եթէ մատուցանիցես զպատարագ քո 'ի վերայ սեղանոյ, և անդ յիշիցես՝ եթէ եղբայր քո ունիցի ինչ խէթ զքէն, թող զպատարագն քո առաջի սեղանոյն. և երթ նախ հաշտեաց ընդ եղբօր քում, և ապա եկեալ մատուսջիր զպատարագն քո։ Լեր իրաւախոհ ընդ ոսոխի քում վաղագոյն, մինչդ եռ ի ճանապարհի. դուցէ մատնիցէ զքեզ ոսոխն դատաւորի, և դատաւորքն դահճի. և արկանիցիս 'ի բանտ։ Ամեն ասեմ քեզ. ոչ երանիցես անտի, մինչև հատուցանիցես զյետին նաքարակիտն։ Լուարուք զի ասացաւ առաջնոցն. Մի երդնուցուս սուտ, բայց հատուսցես տեառն զերդմունս քո։ Այլ ես ասեմ ձեզ՝ ամենևին մի երդնուլ. մի յերկինս՝ զի աթոռ է Աստուծոյ. և մի յերկիր՝ զի պատուանդան է ոտից նորա. և մի յԵրուսաղէմ՝ զի քաղաք է մեծի արքայի։ Եւ մի 'ի գլուխ քո երդնուցուս, զի ոչ կարես մազ մի սպիտակ առնել կամ թուխ։ Այլ եղիցի ձեր բան, այո՝ այո, և ոչն՝ ոչ. զի աւելին քան զայն 'ի չարէն է։ Լուարուք զի ասացաւ. Ակն ընդ ակն, և

առաձն ընդ առաման։ Այլ ես ասեմ ձեզ, Մի կալ հակառակ չարին։ Այլ եթէ ոք ա-ծիցէ ապտակ յաջ ծնօտքո՝ դարձո նմա և զմիւսն։ Եւ որ կամիցի ոք դատել և առնուլ զշապիկս քո, թող 'ի նա և զբաճկոն քո։ Եւ որ տարապարհակ վարիցէ զքեզ մղոն մի, երթ ընդ նմա երկուս։ Որուն խնդրէ 'ի քէն՝ տուր. և որ կամի փոխ առնուլ 'ի քէն՝ մի դարձուցաներ զերեսս։ Լուարուք ապա-քէն զի ասացաւ. Սիրեսցես զընկեր քո, և ատեսցես զթշնամին քո։ Այլ ես ասեմ ձեզ. Սիրեցէք զթշնամիս ձեր. օրհնեցէք զանի-ծիչս ձեր. բարի արարէք ատելեաց ձերոց, և աղօթս 'ի վերայ այնոցիկ՝ որ լկեն զձեզ և հալածեն։ Զի եղիջիք որդիք հօր ձերոյ որ յերկինսն է. զի զարեգակն իւր ծագէ 'ի վե-րայ չարաց և բարեաց, և ածէ անձրև 'ի վերայ արդարոց և մեղաւորաց։ Զի եթէ սիրիցէք զայնոսիկ որ սիրեն զձեզ՝ զի՞նչ վարձք իցեն, ոչ ապաքէն և մաքսաւորք ըզ-նոյն գործեն։ Եւ եթէ ասացէք միայն ողջոյն բարեկամաց ձերոց՝ զինչ աւելի առ-նէք. ոչ ապաքէն մաքսաւորք և մեղաւորք զնոյն գործեն։

Եւ յորժամ պահիցէք՝ մի լինիք իբրև զկեղծաւորսն տրտմեալք, որ ապականեն զերեսս իւրեանց. որպէսզի երևեսցին մարդ-կան թէ պահիցեն։ Այլ դու՝ յորժամ պա-հիցես, օծ զգլուխ քո՝ և լուա զերեսս քո, զի

մի երևեսցիս մարդկան իբրև զպահօղ, այլ հօրքում 'ի ծածուկ. և Հայրն քո որ տեսանէ 'ի ծածուկ, հատուսցէ քեզ։ Մի գանձէք ձեզ գանձս յերկրի, ուր ցեց և ուտիճ ապականեն, և ուր գողք ական հատանեն և գողանան։ Այլ գանձեցէք ձեզ գանձս յերկինս, ուր ոչ ցեց և ոչ ուտիճ ապականեն, և ոչ գողք ական հատանեն և գողանան։ Զի ուր գանձք ձեր են, անդ և սիրտք ձեր լիցին։ Մի հոգայք վասն ոգւոց ձերոց՝ թէ զինչ ուտիցէք՝ կամ զինչ ըմպիցէք. և մի վասն մարմնոց ձերոց՝ թէ զինչ ագանիցիք. ոչ ապաքէն ոգի առաւել է քան զկերակուր՝ և մարմին քան զհանդերձ։ Հայեցարուք 'ի թռչունս երկնից՝ զի ոչ վարեն և ոչ հնձեն և ոչ ժողովեն 'ի շտեմարանս. և Հայրն ձեր երկնաւոր կերակրէ զնոսա։ Ո՞չ ապաքէն դուք առաւել էք քան զնոսա։ Իսկ արդ՝ ո՞'ի ձէնջ առ հոգալ իւրում՝ յաւելուլ կարիցէ 'ի հասակ իւր կանգուն մի։ Եւ վասն հանդերձի զի՞ հոգայք. հայեցարուք 'ի շուշանն վայրենի՝ որպէս աճէ. ոչ ջանայ, և ոչ նիւթէ։ Ասեմ ձեզ՝ զի և ոչ Սողոմոն յամենայն 'ի փառսն իւրում զգեցաւ իբրև զմի 'ինոցանէ։ Իսկ եթէ զխոտն 'ի վայրի, որ այսօրէ և 'ի վաղիւ 'ի հնոց արկանի, Աստուած այնպէս զգեցուցանէ. ո՞րչափ ևս առաւել զձեզ թերահաւատք։ Մի այսուհետև հոգայցէք և ասիցէք. Զինչ կերիցուք՝ կամ զինչ արբցուք՝ կամ զինչ զգեցցուք։

Օ՛ր տեսանես զշիղ յական եղբօր քոյ, և 'ի քում ական զգերանդ ոչ նշմարես։ Կամ զիաՀրդ ասես ցեղբայր քո, թող Հանից զշիղդ յականէ քումմէ. և ահաւադիկ 'ի քում ականդ գերան կայ։ Կեղծաւոր՝ Հան նախ զգերանդ յականէ քումմէ, և ապա Հայեսցիս Հանել զշիղն յականէ եղբօր քոյ։ Ո՞ իցէ 'ի ձէնջ մարդ՝ զոր խնդրիցէ որդի իւր Հաց, միթէ քար տայցէ նմա. և կամ խնդրիցէ ձուկն, միթէ օ՞ձ տայցէ նմա։ Արդ՝ եթէ դուք որ չարքդ էք՝ գիտէք պարգևս բարիս տալ որդւոց ձերոց, որչափ ևս առաւել Հայրն ձեր որ յերկինս է տացէ բարիս այնոցիկ որ խնդրեն զնա։ Զամենայն զոր միանգամ կամիջիք՝ թէ արասցեն ձեզ մարդիկ՝ այնպէս և դուք արարէք նոցա. զի այս իսկ են օրէնքն և մարգարէք։ Մտէք ընդ նեղդուռն. քանզի ընդարձակէ դուռն՝ և Համարձակ ճանապարհն՝ որ տանի 'ի կորուստ, և բազումք են որ մտանեն ընդ նա։ Քանզի անձուկ է դուռն՝ և նեղ ճանապարհն՝ որ տանի 'ի կեանս, և սակաւք են որ գտանեն զնա։ Ամենայն որ լսէ զբանս իմ զայսոսիկ և առնէ զսոսա, նմանեսցէ առն իմաստնոյ, որ շինեաց զտուն իւր 'ի վերայ վիմի։ Իջին անձրևք և խաղացին գետք, շնչեցին հողմք և բախեցին զտունն, և ոչ կործանեցաւ, քանզի 'ի վերայ վիմի հաստատեալ էր։ Եւ ամենայն որ լսէ զբանս իմ զայսոսիկ՝ և ոչ առնէ զսոսա, նմանեսցէ

առն յիմարի, որ շինեաց զտուն իւր 'ի վերայ աւազոյ։ Իջին անձրևք, յարեան գետք, շնչեցին հողմք, հարին զտունն և անկաւ. և էր կործանումն նորա մեծ յոյժ։

Եւ իբրև եմուտ 'ի նաւն, գնացին զկնի նորա աշակերտքն նորա։ Եւ ահա շարժումն մեծ եղև 'ի ծովուն՝ մինչ նաւին ծածկել յալեաց անտի, և ինքն ննջէր։ Եւ մատուցեալ աշակերտքն յարուցին զնա և ասեն. Տէր՝ փրկեա զմեզ զի կորնչիմք։ Եւ ասէ ցնոսա. Ընդէր վատասիրտք էք, սակաւահաւատք։ Յայնժամ յարուցեալ սաստեաց հողմոցն և ծովուն, և եղև խաղաղութիւն մեծ։ Եւ մարդիկն զարմացան՝ և ասէին. Որպիսի ոք իցէ սա, զի և հողմք և ծով հնազանդին սմա։

Եւ իբրև անցին յանկոյս յերկիրն Գերգեսացւոց, պատահեցին նմա դիւահարք երկու՝ ելեալք 'ի գերեզմանացն՝ չարաչարք յոյժ. որպէս զի չէր հնար անցանել ումեք ընդ այն ճանապարհ։ Եւ ահա աղաղակեցին և ասեն. Զի՞ կայ մեր և քո՝ Յիսուս որդի Աստուծոյ, եկիր տարաժամ տանջել զմեզ։ Եւ էր հեռագոյն 'ի նոցանէ երամակ մի խոզից արօտական։ Եւ դևքն աղաչէին զնա և ասէին. Եթէ հանես զմեզ աստի, հրամայեա տուր մեզ երթալ յերամակ խոզից։ Եւ ասէ ցնոսա. Երթայք։ Եւ նոքա ելեալ գընացին յերամակն խոզից։ Եւ դիմեաց ա-

մեծայն երամակն 'ի դարէ անտի 'ի ծով, և մեռան 'ի ջուրսն։

Լսեալ խոզարածքն փախեան, և երթեալ 'ի քաղաքն պատմեցին զամենայն, և զիրս դիւահարացն։ Եւ ահա ամենայն քաղաքն ելն ընդ առաջ Յիսուսի։ Իբրև տեսին զնա՝ աղաչեցին զի գնասցէ 'ի սահմանաց նոցա։

Ոչ ինչ է 'ի ծածուկ՝ որ ոչ յայտնեսցի, և գաղտնի՝ որ ոչ ծանիցի։ Զորս ասեմ ձեզ 'ի խաւարի՝ ասացէք 'ի լոյս. և զոր լսիցէք յականջս՝ քարոզեցէք 'ի վերայ տանեաց։ Եւ մի երկնչիք յայնցանէ՝ որ սպանանեն զմարմին, և զոգի ոչ կարեն սպանանել։ Այլ երկերուք դուք առաւել յայնմանէ՝ որ կարող է զոգի և զմարմին կորուսանել 'ի գեհենի։ Ոչ ապաքէն երկու ճնճղուկք պանդի մլոջ վաճառին, և մի 'ի նոցանէ յերկիր ոչ անկցի առանց հօր ձերոյ։ Այլ ձեր և ամենայն իսկ հեր գլխոյ թուեալէ։ Եւ արդ՝ մի երկնչիցիք՝ զի լաւ էք քան զբազում ճնճղուկս։

Յաւուր յայնմիկ ելեալ Յիսուս 'ի տանէն՝ նստէր առ ծովեզերն։ Եւ ժողովեցան առ նա ժողովուրդք բազումք, մինչև մտանել նմա 'ի նաւն և նստել. և ամենայն ժողովուրդն կայր առ ծովեզերբն։ Եւ խօսէր ընդ նոսա բազումս առակօք, և ասէր. Ահա ելսերմանահան սերմանել. և 'ի սերմանելն

իւրում, էր որ անկաւ առ ճանապարհաւ, և եկն թռչուն երկնից և եկեր զնա։ Եւ այլն անկաւ յապառաժի, ուր ոչ գոյր հող բազում, և վաղվաղակի բուսաւ. առ 'ի չգոյէ հիւթոյ երկրին՝ 'ի ծագել արևուն տապացաւ. և զի ոչ գոյին արմատք՝ չորացաւ։ Եւ այլն անկաւ 'ի մէջ փշոց, և ելին փուշքն և հեղձուցին զնա։ Եւ այլն անկաւ յերկիր բարի, և տայր պտուղ. էր՝ որ հարիւրաւոր, և էր՝ որ վաթսնաւոր, և էր՝ որ երեսնաւոր։

Այլ առակ ասէ նոսա և ասէ. 'Նմանեցաւ արքայութիւնն երկնից առն՝ որ սերմանիցէ սերմն բարի յագարակի իւրում։ Եւ 'ի քուն լինել մարդկան եկն թշնամի նորա. և ցանեաց 'ի վերայ որոմն 'ի մէջ գորեանոյն՝ և գնաց։ Եւ իբրև բուսաւ խոտն և արար պտուղ, ապա երևեցաւ և որոմն։ Մատուցեալ ծառայք տանուտեարն ասեն ցնա. Տէր՝ ոչ սերմն բարի սերմանեցեր յագարակին քում, արդ՝ ուստի՞ ունիցի զորոմն։ Եւ նա ասէ ցնոսա. Այր թշնամի արար զայն. ասեն ցնա ծառայքն. Կամիս՝ զի երթիցուք քաղեսցուք զայն 'ի բաց։ Եւ նա ասէ ցնոսա. Մի. գուցէ մինչ քաղիցէք զորոմն, զցորեանն ընդ նմին 'ի բաց խլիցէք։ Թոյլ տուք երկոցունց աճել 'ի միասին մինչև 'ի հունձս. և 'ի ժամանակի հնձոց ասացից ցքնձողսն. Քաղեցէք նախ զորոմն, և կապե-

ցէք զայդ խրձուն առ 'ի յայրել. և զցորեանն ժողովեցէք 'ի շտեմարանս իմ։

Յայնմ ժամանակի լուաւ Հերովդէս չորրորդապետ զլուր Յիսուսի։ Եւ ասէ ցծառայս իւր. Նա՝ է Յովհաննէս մկրտիչ, նա՝ յարեաւ 'ի մեռելոց, և վասն այնորիկ զօրութիւնք լինին նովաւ։ Քանզի Հերովդէս կալաւ զՅովհաննէս, կապեաց զնա և եդ 'ի բանտի՝ վասն Հերովդիայ կնոջ Փիլիպպոսի եղբօր նորա։ Զի ասէր ցնա Յովհաննէս. Զէ արժան քեզ ունել զդա։ Եւ կամէր զնա սպանանել, բայց երկնչէր 'ի ժողովրդենէ անտի. քանզի իբրև զմարգարէ ունէին զնա։ Եւ իբրև եղեն ծնունդք Հերովդի, կաքաւեաց դուստրն Հերովդիայ 'ի մէջ բազմականին. և հաճոյ թուեցաւ Հերովդի. ուստի և երդմամբ խոստացաւ տալ նմա զինչ և խնդրեսցէ։ Եւ նա յառաջագոյն խրատեալ 'ի մօրէ իւրմէ, Տուր ինձ, ասէ, այսր՝ 'ի վերայ սկտեղ զգլուխն Յովհաննու մկրտչի։ Եւ տրտմեցաւ թագաւորն. բայց վասն երդմանցն և բարձակցացն՝ հրամայեաց տալ նմա։ Լուս առաքեաց գլխատեաց զՅովհաննես 'ի բանտի։ Լուս բերաւ գլուխն նորա սկտեղաւ՝ և տուաւ աղջկանն, և տարաւ առ մայր իւր։ Լուս մատուցեալ աշակերտքն նորա, բարձին զմարմինն և թաղեցին. և եկեալ պատմեցին Յիսուսի։

Լ,մանեցաւ արքայութիւն երկնից առն թագաւորի, որ կամեցաւ համար առնել ի մէջ ծառայից իւրոց։ Լ,և իբրև սկսաւ առնուլ,մատուցաւ առ նա պարտապան մի բիւր քանքարոյ։ Իբրև ոչ ունէր հատուցանել, հրամայեաց զնա վաճառել տէր նորա, և զկին նորա և զորդիս, և զամենայն որ զինչ և ունէր՝ և հատուցանել։ Լ,և անկեալ ծառայն երկիր պագանէր նմա և ասէր, Երկայնամիտ լեր առ իս, և զամենայն հատուցից քեզ։ Գթացեալ տէր ծառային այնորիկ՝ արձակեաց զնա, և զփոխն եթող նմա։ Լ,և ելեալ ծառայն՝ եգիտ զմի ի ծառայակցաց իւրոց, որ պարտէր նմա հարիւր դահեկան. և կալեալ զնա՝ խեղդէր և ասէր. Հատո՛ ինձ զոր պարտիսդ։ Անդ՝ անկեալ ծառայակցին առ ոտս նորա, աղաչէր զնա՝ և ասէր. Երկայնամիտ լեր առ իս և հատուցից քեզ։ Լ,և նա ոչ կամէր. այլ չոգաւ արկ զնա ի բանտ՝ մինչև հատուցցէ զպարտսն։ Իբրև տեսին ծառայակիցքն նորա զոր ինչ եղեն՝ տրտմեցան յոյժ, և եկեալ ցուցին տեառն իւրեանց զամենայն որ ինչ եղեն։ Յայնժամ կոչեաց զնա տէրն իւր՝ և ասէ. Ծառայ չար, զամենայն զպարտսն թողի քեզ՝ վասն զի աղաչեցեր զիս։ Իսկ արդ՝ ոչ էր պարտ և քեզ ողորմել ծառայակցին քում՝, որպէս և ես քեզ ողորմեցայ։ Լ,և բարկացեալ տէրն նորա՝ մատնեաց զնա դահճաց, մինչև հատուցցէ զամենայն զպարտսն։

Բանզի նման է արքայութիւն երկնից առն տանուտեառն, որ ել ընդ առաւօտս ի վարձու ունել մշակս յայգի իւր։ Եւ արկ վարձս մշակացն աւուրն դահեկան, և առաքեաց զնոսա յայգի իւր։ Եւ ելեալ զերրորդ ժամուն՝ եառեալ այլս զի կային դատարկք ի հրապարակս. ասէ և ցնոսա. Երթայք և դուք յայգի իմ, և զոր ինչ արժան իցէ՝ տացից ձեզ։ Գնացին և նոքա։ Եւ դարձեալ՝ ելեալ զվեց ժամուն, և զինն ժամուն՝ արար այնպէս։ Եւ զմեռամանեներորդ ժամուն ելեալ, եգիտ այլս՝ զի կային դատարկք, ասէ ցնոսա. Ընդէր կայք ամենայն զօրս ցերեկ դատարկք։ Ասեն ցնա. Զի ոչ ոք կալաւ զմեզ ի վարձու։ Ասէ ցնոսա. Երթայք և դուք յայգին, և որ ինչ արժան է՝ առնուցուք։ Եւ իբրև երեկոյ եղև՝ ասէ տէր այգւոյն ցգաւառապետս իւր. Կոչեա զմշակսն և տուր նոցա վարձս, սկսեալ ի յետնոցն մինչև զառաջինսն։ Իբրև եկին որք զմեռամանեներորդ ժամուն, և առին մէն մի դահեկան, եկեալ և առաջինքն՝ համարէին թէ աւելի առնուցուն. և առին մէն մի դահեկան և նոքա։ Իբրև առին՝ տրտնջէին զտանուտեառնէն՝ և ասէին թէ՝ Դոքա յետինքդ մի ժամ գործեցին, և հաւասարեցուցիր մեզ զարարեալս զդոսա, որ զծանրութիւն աւուրն բարձաք և զոսոխ։ Նա պատասխանի եառ միոյմ՝ ի նոցանէ՝ և ասէ. Ընկեր՝ չզրկեմ զքեզ, ոչ դահեկանի միոջ սակ արկեր ընդ իս։ Առ զքոյդ և երթ.

Հ 2012

եթէ կամիմ յեռանոցս տալ որպէս քեզ, մի-
թէ չիցէ՞ ինձ իշխանութիւն յիմաս առնել
զինչ և կամիմ. կամ թէ ակն քո չար է, զի
ես առատս եմ։

Ելանեցաւ արքայութիւն երկնից՝ առն
թագաւորի, որ արար հարսանիս որդւոյ իւ-
րում։ Եւ առաքեաց զծառայս իւր կոչել
զհրաւիրեալսն ՝ի հարսանիս. և ոչ կամեցան
գալ։ Դարձեալ առաքեաց այլ ծառայս՝
և ասէ. Ասացէք հրաւիրելոցն. ահաւասիկ
զճաշ իմ պատրաստեցի, զուարակք իմ պա-
րարակք զենեալ են, և ամենայն ինչ պատ-
րաստ է, եկայք ՝ի հարսանիս։ Եւ նոքա
յուլացեալ՝ գնացին ոմն յագարակ իւր, և
ոմն ՝ի վաճառ իւր։ Եւ այլք կալան զծա-
ռայս նորա, թշնամանեցին և սպանին։ Իսկ
թագաւորն իբրև լուաւ՝ բարկացաւ, և ա-
ռաքեաց զզօրս իւր և սատակեաց զսպանող-
սն զայնոսիկ, և զքաղաքն նոցա այրեաց։
Յայնժամ ասէ ցծառայս իւր. Հարսանիքս
պատրաստ են, և հրաւիրեալքն չէ՞ին արժա-
նի։ Արդ՝ երթայք յանցս ճանապարհաց, և
զորս միանգամ գտանիցէք՝ կոչեցէք ՝ի հար-
սանիս։ Եւ ելեալ ծառայքն ՝ի ճանապար-
հսն՝ ժողովեցին զամենեսեան զոր և գտին
զչարս և զբարիս, և լցան հարսանիքն բազ-
մականօք։ Եւ մտեալ թագաւորն հայել
զբազմականօքն, ետես անդ այր մի՝ որ ոչ էր
զգեցեալ հանդերձ հարսանեաց։ Եւ ասէ

ցնա. Ընկեր՝ զիարդ մտեր այսր, զի ոչ ունէ-
իր հանդերձ հարսանեաց. և նա պապան-
ձեցաւ։ Յայնժամ ասէ թագաւորն ցսպա-
սաւորսն. Կապեցէք զդորա զոտս և զձեռս՝
և հանէք զդա 'ի խաւարն արտաքին, անդ
եղիցի լալ և կրճել ատամանց։ Զի բազումք
են կոչեցեալք՝ և սակաւք ընտրեալք։

Յայնժամ նմանեսցի արքայութիւն երկ-
նից տասն կուսանաց, որոց առեալ զլապ-
տերս իւրեանց՝ ելին ընդ առաջ փեսայի և
հարսին։ Հինգն 'ի նոցանէ յիմարք էին՝ և
հինքն իմաստուն։ Յիմարքն առին զլապտեր-
սին, և ձէթ ընդ իւրեանս ոչ բարձին։ Իսկ
իմաստունքն առին և ձէթ ամանօք ընդ լապ-
տերս իւրեանց։ Եւ 'ի յամել փեսային՝ նիր-
հեցին ամենեքեան և 'ի քուն մտին։ Եւ 'ի
մէջ գիշերի եղև բարբառ, Ահա փեսայ գայ
արիք ընդ առաջ նորա։ Յայնժամ յարեան
ամենայն կուսանքն, և կազմեցին զլապտերս
իւրեանց։ Ասեն յիմարքն ցիմաստունսն.
Տուք մեզ յիւղոյդ ձերմէ, զի ահա շիջա-
նին լապտերքս մեր։ Պատասխանի եառին իմ-
աստունքն՝ և ասեն. Գուցէ ոչ իցէ մեզ և
ձեզ բաւական, այլ երթայք 'ի վաճառա-
կանս՝ և գնեսջիք ձեզ։ Իբրև նոքա գնացին
գնել՝ և եկն փեսայն և պատրաստքն մտին ընդ
նմա 'ի հարսանիսն՝ և փակեցաւ դուռն։
Յետոյ գան և այլ կուսանքն՝ և ասեն. Տէր
տէր՝ բաց մեզ։ Նա պատասխանի ետ և ա-

սէ. Ամէն ասեմ ձեզ, թէ ոչ գիտեմ զձեզ։

Եւ ասէ. Առն միոջ էին երկու որդիք. ասէ կրտսերն 'ի նոցանէ զհայրն. Հայր՝ տուր ինձ բաժին որ անկանի յընչից։ Եւ նա բաժանեաց նոցա զկեանսն։ Եւ յետ ոչ բազում աւուրց՝ ժողովեալ զամենայն կրտսերոյն՝ գնաց յաշխարհ հեռի, և անդ վատնեաց զինչս իւր, զի կեայր անառակութեամբ։ Եւ իբրև սպառեաց զամենայն, եղև սով սաստիկ յաշխարհին յայնմիկ, և սկսաւ ինքն չքաւորել։ Եւ գնացեալ յարեցաւ 'ի մի ոմն 'ի քաղաքացւոց աշխարհին այնորիկ, և յղեաց զնա յագարակ իւր արածել խոզս։ Եւ ցանկայր լնուլ զորովայն իւր յեղջերէն զոր խոզքն ուտէին, և ոչ ոք տայր նմա։ Եւ եկեալ 'ի միտս իւր՝ ասէ. Քանի վարձկանք ինչեն 'ի տան հօր իմոյ հացակից, և ես սատ սովամահ կորնչիմ։ Յարուցեալ գնացից առ հայր իմ, և ասացից ցնա. Հայր՝ մեղայ յերկինս և առաջի քոյ, և ոչ ես եմ արժանի կոչել որդի քո. արա զիս իբրև զմի 'ի վարձկանացդ քոց։ Եւ յարուցեալ եկն առ հայր իւր։ Եւ մինչդեռ հեռագոյն էր, եռեռս զնա հայրն՝ և գթացաւ. յարեաւ և ընթացաւ ընդառաջ, անկաւ զգարանոցաւն նորա, և համբուրեաց զնա։ Եւ ասէ ցնա որդին, Հայր՝ մեղայ յերկինս և առաջի քոյ, և ոչ ես եմ արժանի կոչել որդի քո։ Ասէ հայրն ցծառայսն իւր, Վաղվաղակի հանէք զպատ-

մուՀանն առաջին, և ապուցէք նմա, և տուք զմատանին 'ի ձեռն նորա, և կօշիկս յոտս նորա։ Եւ ածէք զեզն պարարակ, զենէք, կերիցուք և ուրախ լիցուք. Զի այս որդի իմ մեռեալ էր՝ և եկեաց, կորուսեալ էր՝ և գտաւ. և սկսան ուրախ լինել։ Եւ էր երէց որդի նորա յագարակի. և մինչդեռ գայր և մերձ եղև 'ի տունն, լուաւ զձայն երգոց և զպարուց. և կոչեցեալ առ ինքն զմի 'ի ծառայիցն՝ հարցանէր թէ զի՞նչ իցէ այն։ Եւ նա ասէ ցնա. Զի եղբայր քո եկեալ է, և եզեն հայր քո զեզն պարարակ, զի ողջամբ ընկալաւ զնա։ Բարկացաւ և ոչ կամէր մտանել։ Եւ հայրն ելեալ արտաքս՝ աղաչէր զնաւ։ Պատասխանի ետ՝ և ասէ զհայրն. Այս քանի ամք են՝ զի ծառայեմ քեզ, և երբէք զպատուիրանաւ քով ոչ անցի. ուրվ մի երբէք ոչ ետուր ինձ՝ զի ուրախ եղէց ընդ բարեկամս իմ։ Յորժամ եկն որդիդ քո այդ, որ եկեր զկեանս քո ընդ պոռնիկս, զետեր դմա զեզն պարարակ։ Եւ ասէ ցնա. Որդեակ, դու հանապազ ընդ իս ես. և ամենայն որ ինչ իմ է՝ քո է. Այլ ուրախ լինել և խնդալ պարտ էր, զի եղբայր քո այս մեռեալ էր, և եկեաց. կորուսեալ էր, և գտաւ։

Ընդ ժամանակն ընդ այնոսիկ արկ Հերոդէս արքայ ձեռն՝ չարչարել զոմանս յեկեղեցւոյն։ Եւ սպան զՅակովբոս զեղբայրն Յովհաննու սրով։ Տես եթէ հաճոյ է Հրէ-

էին, յաւել և ասել զՊետրոս. և էին ա-
ւուրք բազարքակերացս։ Զոր իբրև կալաւ՝
եդ 'ի բանտի, և մատնեաց չորից չորրորդաց
զինուորաց պահել զնա. և կամէր յետ զատ-
կին ածել զնա ժողովրդեանն։ Եւ Պետրոս
'ի պահեստի էր 'ի բանտին. և աղօթք սուէպ
լինէին յեկեղեցւոյն վասն նորա առ Աստ-
ուած։ Իբրև կամեցաւ զնա ածել Հերոդ-
էս, 'ի գիշերին յայնմիկ էր Պետրոս 'ի քուն
'ի մէջ երկուց զինուորաց՝ կապեալ կրկին շղ-
թայիւք. և պահապանքն առաջի դրանն պա-
հէին զբանտն։ Եւ ահա հրեշտակ տեառն
եկն եկաց՝ 'ի վերայ, և լոյս ծագեաց՝ 'ի տանն,
և խթեաց զկողն Պետրոսի, յարոյց զնա՝ և
ասէ. Արի վաղվաղակի. և անկան շղթայքն
'ի ձեռաց նորա։ Եւ ասէ ցնա հրեշտակն.
Գօտի զգօտի քո, և արկ զհողաթափս յոտս քո։
Եւ արար այնպէս։ Եւ ասէ ցնա. Արկ զձոր-
ձըս քո, և եկ զկնի իմ։ Եւ ելեալ երթայր
զհետ, և ոչ գիտէր՝ եթէ ճշմարիտ իցէ որ
ինչ եղէն 'ի հրեշտակէն. զի համարէր երազ
տեսանել։ Եւ իբրև անցին նոքա բաց մի
պահ և բաց երկուս, եկին մինչև 'ի դուռն
երկաթի՝ որ հանէր 'ի քաղաքն, և որ ինքնին
բացաւ նոցա։ Եւ մտեալ անցին ընդ փողոց
մի. և վաղվաղակի 'ի բաց եկաց 'ի նմանէ
հրեշտակն։ Եւ Պետրոս իբրև 'ի միտս եղև,
ասէ. Արդ գիտեմ ճշմարիտ եթէ առաքե-
ցաց տէր զհրեշտակ իւր, և փրկեաց զիս 'ի
ձեռաց Հերոդի, և յամենայն ակնկալու-

թենէ ժողովրդեանն Հրէից։ Եւ լեալ 'ի միում՝ եկն 'ի տուն Մարիամու մօր Յովհան-նու, որ կոչեցաւն Մարկոս, ուր էին բա-զումք ժողովեալ՝ և աղօթս առնէին։ Եւ բախեաց զդուռս տանն. մատուաւ աղախին մի ունկն դնել, որում անուն էր Հռովդէ։ Եւ ծանուցեալ զձայնն Պետրոսի՝ 'ի խընդալոյն ոչ եբաց զդուռն. 'ի ներքս ընթացեալ պատմեաց, եթէ Պետրոս առ դրանն կայ։ Նոքա ասեն ցնա՝ Մոլիս։ Եւ նա ևս պնդէր՝ թէ Այդպէս է. և նոքա ասէին՝ Հրեշտակ նորա իցէ։ Եւ Պետրոս ստէպ բա-խէր. իբրև բացին, տեսին զնա և զարմա-ցան։ Եւ նա ձեռամբ ցուցանէր նոցա լռել. և պատմեաց որպէս տէր եհան զնա 'ի բանտէն. և ասէ՝ Պատմեցէք Յակոբայ և եղբարց զայս։ Եւ ելեալ գնաց յայլ տեղի։ Եւ իբրև եղև այգ, էր խռովութիւն մեծ 'ի մէջ զինուորացն, թէ զի՞ արդեաք Պետրոսն եղև։ Իսկ Հերովդէս իբրև խնդրեաց զնա և ոչ եգիտա, հարցեալ զպահապանսն՝ հրա-մայեաց սպանանել. և իջեալ 'ի Հրէաստանէ 'ի Կեսարիայ՝ և անդ լինէր։ Եւ էր Հերով-դէս ցասմամբ ընդ Տիւրացիս և ընդ Սիդով-նացիս. և նոքա առ հասարակ եկին առ նա. 'ի բանի արարեալ զՌղաստոս սենեկապետ արքայի՝ խնդրէին զիաղաղութիւն վասն կերակրելոյ երկրին նոցա յարքունուստ։ Յա-ւուր միում յերևելի՝ Հերովդէս զգեցեալէր զհանդերձ թագաւորութեան և նստէր յա-

անէր, և խօսէր ընդ նոսա հրապարակաւ։ Եւ ամբոխն աղաղակէր՝ թէ Աստուծոյ բարբառ է, և ոչ մարդոյ։ Եւ անդէն եհար զնա հրեշտակ տէրառն, փոխանակ զի ոչ եւ փառս Աստուծոյ. և եղեալ որդնալից՝ սատակեցաւ։

Եւ եղեալ 'ի Տրոմոդայ՝ գէպ ուղիղ գնացաք 'ի Պամոմիրակէ. և 'ի վաղիւ անդր 'ի Նորքաղաք. և անտի 'ի Փիլիպպուս, որ է առաջին վիճակ Մակեդոնացւոյ՝ քաղաք Կողոնիայ։ Եւ անդ 'ի քաղաքին զարդարեալ մեր աւուրս ինչ՝ յաւուր շաբաթու եկաք արտաքոյ քաղաքին առ գետափնն՝ ուր համարէր աղօթս մատուցանել Պաւղոս. և նստեալ խօսէաք ընդ ժողովեալ կանայսն։ Եւ կին ոմն անուն Լիդիա ծիրանապաճառ՝ 'ի Թիւատիր քաղաքէ, երկիւղած յԱստուծոյ՝ լուաւ. զորոյ տէր խակ եբաց զսիրտն անսալ խօսիցն Պաւղոսի։ Եւ իբրև մկրտեցաւ ինքն և տուն իւր, աղաչէր և ասէր. Լիթէ համարիք զիս հաւատացեալ տէառն, մտեալ 'ի տուն իմ ագերուք. և բռնադատեաց տարաւ զմեզ։ Եւ եղէ մինչդեռ երթայաք մեք յաղօթս, պատահեաց մեզ աղախին ոմն՝ զոր ունէր այս հարցուկ, որ շահս բազում տայր տերանց իւրոց մոլելովն։ Նա զհետ եղեալ Պաւղոսի և մեր՝ աղաղակէր ասէր. Արքս այս ծառայք Աստուծոյ բարձրելոյ են, որ պատմեն ձեզ զճանա-

պարհս փրկութեան. և զայս առնէր 'ի բա-
զում աւուրս։ Զայրացեալ Պաւղոս՝ դարձաւ և ասէ ցոյսն. Պատուիրեմ քեզ յանուն Յիսուսի Քրիստոսի ելանել 'ի դմանէ. և ել այսն 'ի նմին ժամու։ Իբրև տեսին տերքն նորա եթէ հատաւ յոյս շահնոցա, առեալ զ Պաւղոս և զՇիղա՝ ձգեցին 'ի հրապարակն առ իշխանսն։ Եւ տեսեալ զնոսա առ զօրագլուխսն՝ ասեն. Ընդ այս խըռովեցուցանեն զքաղաքս մեր. հնդիանք Հրեայք են, և պատմեն մեզ օրէնս, զոր չէ արժան մեզ ընդունել և ոչ առնել. զի Հռովմայեցիք եմք. և կուտեցաւ ամբոխն 'ի վերայ նոցա։ Եւ զօրագլուխքն պատուաստեցին ըզհանդերձս իւրեանց, և հրամայեցին գան հարկանել։ Եւ բազում վէրսեղեալ 'ի վերայ նոցա արկին 'ի բանտ, պատուիրեցին բանտապետին զգուշութեամբ պահել զնոսա։ Որոյ առեալ զայսպիսի պատուէր՝ արկ զնոսա 'ի ներքին բանտն, զոտս նոցա պնդեաց 'ի կոճեղ։ Եւ 'ի մէջ գիշերոյն Պաւղոս և Շիղա կային յաղօթս՝ և օրհնէին զԱստուած. ուկն դնէին նոցա կապանաւորքն։ Եւ եղև յանկարծակի շարժուածն մեծ, մինչև շարժել հիմանց բանտին, և բացան անդրէն դրունքն ամենայն, և ամենեցուն կապանքն լուծան։ Իբրև զարթեաւ բանտապետն՝ և եռեաս բացեալ զդուռս բանտին, ձգեաց զսուսերն՝ և կամէր երթալ զիւրոյսն. կարծէր փախուցեալ զկապեալսն-

Եւ կոչեցեալ 'ի ձայն մեծ Պաւղոս և ասէ։ Մի՛ ինչ գործեր ընդ անձն քո չար։ քանզի ամենեքին ասա եմք։ խնդրեաց լոյս՝ և գիմեաց 'ի ներքս, և զահի հարեալ՝ անկաւ առաջի Պաւղոսի և Շիղայի. և ածեալ զնոսա արտաքս՝ ասէ Տեարք՝ զի՞նչ պարտ է ինձ առնել՝ զի ապրեցայց։ Եւ նոքա ասեն. Հաւատա 'ի տէր Յիսուս Քրիստոս, և ապրեսցիս դու և ամենայն տունդ քո։ Եւ խօսեցան նմա զբանն տեառն, և ամենեցուն որ էին 'ի տան նորա։ Եւ առեալ զնոսա 'ի նմին ժամու գիշերուոյն՝ լուաց 'ի վէրսն անտի. և մկրտեցաւ ինքն և իւրքն ամենեքեան անդէն վաղվաղակի։ Եւ ածեալ զնոսա 'ի տուն իւր՝ եդ առաջի նոցա սեղան. և ուրախ եղև ամենայն տամքն հաւատացեալ Աստուած։ Եւ իբրև այդ եղև՝ առաքեցին զօրագլուխքն զնուիրական, և ասեն. Արձակեա զարսդ զայդոսիկ։ Եւ պատմեաց բանտապետն Պաւղոսի զբանսն՝ եմէ Առաքեցին զօրագլուխքն զի արձակիցիք. արդ՝ ելէք և երթայք խաղաղութեամբ։ Իսկ Պաւղոս ասէ ցնոսա. Զան հարեալ զմեզ հրապարակաւ՝ արս անմեղս Հռովմայեցիս՝ արկին 'ի բանտ, և արդ լռելեաւն հանեն զմեզ. ոչ այդպէս, այլ եկեսցեն ինքեանք իսկ հանցեն զմեզ։ Եւ պատմեցին զօրագլխացն նուիրակքն զբանսն. զահի հարանիցին լուան եմէ Հռովմայեցիք են. և եկեալ ազաչեցին զնոսա։ Եւ իբրև հանին, ազաչեցին գնալ

'ի քաղաքէն։ Եւ երեալ 'ի բանտէն՝ մտին 'ի Լիւդիա, և տեսեալ զեղբարս՝ մխիթարեցին զնոսա, և գնացին։

Եւ Յաթէնս 'ի մնալն նոցա Պաւղոսի՝ գայրանայր հոգի նորա 'ի նմա, զի տեսանէր 'ի կռապաշտութեան զքաղաքն։ Եւ խօսէր 'ի ժողովրդեանն ընդ Հրեայսն և ընդ պաշտօնեայսն, և 'ի հրապարակն զամենայն օր՝ որոց և պատահէին։ Ոմանք յեպիկուրեանցն և 'ի ստոյիկեանց փիլիսոփայից հակառակէին ընդ նմա. և ոմանք ասէին, Զի՞նչ կամիցի սերմանաբարձ այս խօսել. իսկ այլք՝ թէ Օտարոտի իմն Դևից թուի պատմիչ լինելոյ. քանզի զՅիսուս և զյարութիւնն աւետարանէր։ Եւ առեալ զնա ածին յԱրիսպագոսն, և ասէին. Կարասցո՞ւք իմանալ՝ թէ զինչ է նոր վարդապետութիւնդդ որ 'ի քէն պատմի։ Օտարացուցիչս իմն բերես 'ի լսելիս մեր. կամիմք գիտել թէ զի՞նչ կամիցի այս լինել։ Զի Աթենացիք ամենեքին՝ և եկեղն օտարք՝ ոչ յայլ ինչ պարապէին, քայց ասել ինչ, կամ լսել նորագոյնս։ Եկաց Պաւղոս 'ի մէջ Արիսպագին՝ և ասէ. Արք Աթենացիք, ըստ ամենայնի իբրև պաշտօնասէրս տեսանեմ զձեզ։ Քանզի շրջեալ և տեսեալ զպաշտամունս ձեր, գտի բագին մի՝ յորում գրեալ էր. Անծանօթի Աստուծոյ։ Զոր դուք յանծանօթս պաշտէք, ես զնոյն պատմեմ ձեզ։ Աստուած՝ որ արար

զաշխարհս և զամենայն որ 'ի նմա, նա երկ-
նից և երկրի է տէր. ոչ 'ի ձեռագործ տա-
ճարս բնակէ, և ոչ 'ի ձեռաց մարդկան
պաշտի իբրև կարօտ իմիք. նա տայ ամե-
նայնի կեանս և շունչ՝ և զամենայն ինչ. ա-
րար 'ի միոջէ արարեալ զաւերնայն ազգս մարդ-
կան՝ բնակել 'ի վերայ երեսաց ամենայն
երկրի. հաստատեալ կարգեալ ժամանակս
և սահմանս բնակութեան նոցա՝ խնդրել զԱստուած, զի թերևս զնա ի-
ցեն զնա՝ և գտանիցեն. նա՝ և ոչ հեռի իսկ
է յիւրաքանչիւր ումեքէ 'ի մէնջ. Զի նո-
վաւ կեամք և շարժիմք և եմք, որպէս ո-
մանք 'ի ձերոց ճարտարաց ասացին, թէ
Նորա և ազգ իսկ եմք։ Լուս արդ՝ որովհետև
ազգ եմք Աստուծոյ, ոչ պարտիմք համա-
րել ոսկւոյ՝ կամ արծաթոյ՝ կամ քարի, որ
'ի ճարտարութենէ և 'ի մտաց մարդկան
քանդակեալ իցէ, զաստուածականն լինել
նմանօղ։ Բայց զժամանակս անգիտութեա-
նէն անտես արարեալ Աստուծոյ՝ արդ զայս
պատուիրէ մարդկան՝ ամենայն ումեք ա-
պաշխարել։ Քանզի հաստատեաց օր, յո-
րում պարտէ դատել զաշխարհս արդարու-
թեամբ 'ի ձեռն առնն՝ որոյ սահմանեաց
տալ հաւատս ամենեցուն՝ յարուցեալ զնա
'ի մեռելոց։ Իբրև լուան զյարութիւն մե-
ռելոց, ոմանք ծաղր առնէին. կէսքն ասէ-
ին՝ Լուիցուք 'ի քէն վասն այդորիկ միւսանգամ։ Եւ ապա Պաւղոս ել գնաց 'ի միջոյ

նոցա։ Լ։ ոմանք արք անկեալք 'ի նա հաւատացին. ընդ որս էր և Դիոնեսիոս արիսպագացի, և կին մի անուն Դամարիս և այլք ընդ նոսա։

Լ։ իբրև կատարեցաւ այս, եկ Պաւղոս 'ի մտի շրջել ընդ Մակեդոնիսիա և ընդ Ա-քայիա՝ և գալ յԵրուսաղէմ. ասէր եթէ՝ Յետ երթալոյն իմ անդր, պարտ է ինձ և զՀռոմ տեսանել։ Առաքեաց 'ի Մակեդոնիա երկուս 'ի պաշտօնէիցն իւրոց, զՏիմոթէոս և զԵրաստոս. և ինքն մնաց ժամանակս ինչ յԱսիա։ Լ։ եղև 'ի ժամանակին յայնմիկ խռովութիւն ոչ սակաւ վասն ճանապարհին։ Իսկ Դեմետրիոս ոմն անուն՝ արծաթագործ, գործէր մեհեանս արծաթիս Արտեմիսի գիւց, և տայր ճարտարացն լինել ոչ սակաւ շահ. որ ժողովեացն իսկ և զձեռագէտս արուեստին, և ասէ. Արք՝ դուք ձեզէն իսկ գիտէք զի յայսմ գործոյ է շահ մեզ։ Լ։ տեսանէք՝ և լսէք եթէ ոչ միայն զԵփեսացւոց, այլ գրեթէ ամենայն իսկ Ասիացւոց՝ Պաւղոս այս հաւանեցուցեալ շրջեցոյց բազում ժողովս, ասել թէ Ոչ են աստուածք ձեռագործք։ Լ։ ոչ միայն այս ճգնէ զմերկողմն գալ 'ի յանգիմանութիւն, այլ և զմեծին աստուծոյ Արտեմեայ զմեհեանն յոչինչ համարել. նա՝ և քակեալոց ևս իցէ մեծութիւն նորա, զոր ամենայն Ասիա՝ և տիեզերքք պաշտեն։ Լ։ զայս իբրև

բուան, յի եղեն բարկութեամբ, աղաղակէ-
ին և ասէին. Մեծ է Արտեմիս Եփեսացւոց։
Լս լցաւ քաղաքն խռովութեամբ. դիմե-
ցին առ հաւասարակ 'ի թեատրոնն, յափշ-
տակեցին զԳայոս և զԱրիստարքոս Մա-
կեդոնացիսն զուղեկիցսն Պաւղոսի։ Բայց
Պաւղոս իբրև կամեցաւ մտանել յամբոխն,
ոչ թոյլն զնա աշակերտքն։ Ոմանք և յա-
սիարգեստացն՝ որ էին նորա բարեկամք,
յղէին առ նա՝ և աղաչէին, մի տայր զանձն
'ի թեատրոնն։ Ապէք այլ ինքն աղաղակէին
յամբոխին. զի էր ժողովն նոցա խռովեալ. և
բազումք 'ի նոցանէ ոչ գիտէին թէ վասն ո՞ի
ժողովեալ իցեն։ Լս յամբոխին բազմու-
թենէ յառաջ կային զԱղէքսանդրոս. և
իբրև ածին զնա յառաջ Հրեայքն։ Աղէք-
սանդրոս շարժեաց զձեռն՝ և կամէր պա-
տասխանի առնել ամբոխին։ Իբրև գիտացին
թէ այրն Հրեայ է, միաբերան եղեալ
ամենեցուն՝ իբրև ժամն երկուս աղաղա-
կեցին. թէ Մեծ է Արտեմիս Եփեսացւոց։
Լուեցուցեալ զդպրապետն զամբոխն՝ և ասէ. Արք
Եփեսացիք. իսկ ո՞վ է 'ի մարդկանէ՝ որ ոչ
գիտէ զԵփեսացւոց քաղաքս մեհենապարտ՝
մեծին Արտեմեայ դիցին և Դիոսդեսեայ. և զի
այդ այդպէս է անշուշտ, պարտ է ձեզ հան-
դարտել, և մի ինչ յանդգնութեամբ գործել։ Ածէք
զարտդ զայդոսիկ այսր. ոչ մեհենակապուտս՝ և ոչ հայհոյիչս առուծոյն
մերոյ։ Զի եթէ Դեմետրիոս և որ ընդ նմա

Հարատարք՝ ունելցին ինչ ընդ ուժեք բանս, յատեան երթիցեն, և գատաւորք գան, և ամբաստան լիցին զմեծեանց։ Ապա թէ զան այլ երիք խնդիր իցէ, յորմէնաւոր ժողովն զՀարեսցեն։ Քանզի և մեզ միշտ զատանցիս ընդ կռուոյս այսր աւուր՝ առանց երիք յանցանաց լինելոյ՝ զոմէ ոչ կարացուք պատասխանի տալ զսան ժողովոյս այսորիկ։ Եւ զայս ասացեալ՝ արձակեաց զժողովն։

Եւ երբեմն այդ եղև՝ արարեալ ժողով Հրէիցն, նզովեցին զանձինս ոչ ուտել և ոչ բմպել՝ մինչև սպանցեն զՊաւղոս։ Եւ էին աւելի քան զքառասուն՝ որոց զայս ընդ միմեանս երդմունս արարեալ էր։ Որք մատեան առ քահանայապետսն և երիցունս՝ և ասեն. Նզովիւք նզովեցաք զանձինս ոչինչ ճաշակել՝ մինչև սպանցուք զՊաւղոս։ Բայց դուք զգացուցէք հազարապետին հանդերձ առնելոյն, զի իջուցէ զնա առ ձեզ, որպէս թէ կամիցիք ճշմարտագոյնս ինչ գիտել զնմանէ. և մեք յառաջ քան զմօտել նորա՝ պատրաստ եմք՝ խոպանանել զնա։ Եւ լուեալ քեռորդւոյն Պաւղոսի զդաւաճանութիւնն՝ եկն և եմուտ՝ ի բանակն անդր, պատմեաց Պաւղոսի։ Եւ կոչեցեալ Պաւղոսն առ իւր զմի ի հարիւրապետացն ասէ՝ ասէ. Զկապտանիս զայս տար առ հազարապետն, զի ունի ինչ պատմել նմա։ Եւ նորա առեալ զնա տարեալ առ հազարապետն՝ և ասէ. Կապեալն

Պաւղոս կոչեաց զիս, և աղաչեաց զպատա-
նիս զայս ածել առ քեզ. ունի ինչ խօսել
ընդ քեզ։ Առեալ զձեռանէ նորա հազա-
րապետին գնաց մեկուսի, հարցանէր՝ թէ
Զի՞նչ ունիս խօսել ընդ իս։ Նա ասէ.
Հրեայք միաբանեցին աղաչել զքեզ, զի
վաղիւ զՊաւղոս իջուսցես յատեան, իբրև
թէ կամիցին ինչ ճշմարտապէս հարցանել
վասն նորա. արդ՝ դու մի անասցես նոցա.
քանզի դարան դրծեալ է նմա 'ի նոցանէ
արանց աւելի քան զքառասուն, որք նզովե-
ցին զանձինս՝ ոչ ուտել և ոչ ըմպել՝ մինչև
սպանցեն զնա. արդ՝ պատրաստ են, և սպա-
սեն քոյ հրամանի։ Ապա հազարապետն
արձակեաց զպատանին, պատուիրեալ մի ու-
մեք ասել՝ թէ զայս զգացուցեր ինձ։ Նա
կոչեաց երկուս 'ի հարիւրապետացն և ասէ.
Պատրաստեցէք զօրականս երիւրիւր, որպէս
զի երթիցեն մինչև 'ի Կեսարիա. և հեծեալս
եօթանասուն և աւիգաւորս երկերիւր, յե-
րից ժամու գիշերուոյն։ Նա գրաստս պատ-
րաստական, որպէս զի իջուցեալ զՊաւղոս
սպրեցուսցեն. և առ Փերիքս դատաւոր
գրեաց թուղթ, որ ունէր օրինակ զայս։
« Կղաւդիոս Լիւսիաս, առ քաջ դատաւոր
Փելիքս, ողջոյն։ Զայրս զայս կապեալ 'ի Հրէ-
ից՝ և մերձ 'ի սպանանել 'ի նոցանէ, հաս-
եալ 'ի վերայ զօրականաւ սպրեցուցի. ի-
մացեալ թէ հռովմայեցի է։ Կամեցայ գի-
տել զվնասն՝ վասն որոյ ամբաստանէին զնա-

դմանէ, իջուցիցդա յատեանն նոցա։ Զոր գտի ամբաստանեալ վասն խնդրոյ իրիք իւրեանց օրինաց. և ոչինչ արժանի մահու կամ կապանաց ունէր ինաս։ Իբրև ազդ եղև ինձ նենգութեան յայրդ լինելոյ՝ ի նոցանէ՝ յղեցի առ քեզ. հրամայեալ և չարախօսացն խօսել զդմանէ առաջի քոյ. ողջ լեր։» Եւ զօրականացն ըստ հրամանի նորա՝ առեալ զՊաւղոս՝ ածին գիշերեայն յԱնտիպատրիս, և՝ ի վաղիւ անդր արձակեալ զհեծեալսն զընդ նմա երթեալ, դարձան՝ ի բանակն։ Նոքա մտին՝ ի Կեսարիա. և տուեալ ցդատաւորն զթուղթն, առաջի կացուցին նորա և զՊաւղոս։ Իբրև ընթերցաւ, և հարց թէ յորմէ՞ նահանգէ իցէ. և առուգեալ երթէ՝ ի Կիլիկեայ է. Լուայց քեզ, ասէ, յորժամ և չարախօսքն քո եկեսցեն. և հրամայեաց յապարանսն Հերովդի պահել զնա։

2 · ԱՍՏԻՃԱՆ

ԲԱՌԵՐՈՒՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ ՑՈՒՑՆԵԼ

Ինչպէս վերը (8 · 2) ըսինք, Բառաջնեութեան երկրորդ աստիճանին մէջ տղայք իւրաքանչիւր մասին բաներ հանգամանքները պիտի ցուցնեն. զոր օրինակ թէ՝ գոյական մը ինչ տեսակ է, յատուկ թէ հասարակ. ինչ թիւ, ինչ հոլով է։

Ածական մը ինչ տեսակ է, որակական*

* Պէտք է գիտնալ որ մինչև հիմա Հայերէն քերականութեանց մէջ ածականները կատարեալ գրութեան վերածուած չեն։ Ինչպէս յայտնի է, Դասդիպիչք, Նոյնպէս Գերմանաստիք, Անդգիպիչք և ուրիշ եւրոպական ազգեր որ քերականութեան կատարեալ գրութիւն ունին, ածականները հետևեալ տեսակներու կը բաժնեն։

1. Որակական (ՔՈԼԻՖԻՔՈՒՆ), այսինքն որպիսութիւն ցուցնող ածականներ. ինչպէս են հասարակ ածականները, մեծ, փոքր, բարի, չար, իմաստուն, ոգեւոր, երկայն, կարճ, ճերմակ, սև, կարմիր, և այլն։

2. Թուական ածականներ, այսինքն ան բառերը որ գոյականին թուական յարաբերութիւնները կը ցուցնեն. ինչպէս են բացարձակ թուականները, մէկ, երկու, երեք, չորս, տասը, հարիւր, հազար, և այլն։ և դասական թուականները որ կարգի յարաբերութիւն կը ցուցնեն. ինչպէս՝ առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ, հարիւրորդ, և այլն։

Հայերէն լեզուն ուրիշ բանի մը տեսակ թուական յարաբերութիւն ցուցնող թուական ածականներ ալ ունի. ինչպէս՝ երկոքին, երեքին, չորեքին, և այլն. որոնք երկու, երեք, և այլն, կը նշանակեն։ Երկուքին, երեքկին, չորեքկին, հնգեկին, վեցկին, և այլն. կամ՝ կրկնապատիկ, երեքապատիկ, չորեքապատիկ, եօթնապատիկ և այլն։ որոնք միութիւն մը երկու, երեք, չորս, և այլն, անդամ առնուած կը նշանակեն։ Եռկեակ, երրեակ, չորեակ, հնգեակ, եօթնեակ, և այլն որոնք երկու, երեք, չորս, հինգ, եօթ հատէ կազմուած ամբողջ մը կը նշանակեն։

3. Ցուցական ածականներ, ինչպէս են՝ այս, այդ, այն։

4. Սեպական ածականներ, ինչպէս՝ իմ, քո, իւր, մեր, ձեր. Տուն իմ, տան իմոյ, տան իմում, Ի տանէ իմմէ, տամբ իմով, և այլն։ Ասոնք երեք դէմքի վերաբերեալ սեպական ածականներ են. Հոգիս խոսակով յատկացուցիչ չեն, այլ ածական են, և հոլովում ունին։ Բայց Դոլա, Դոցա, Իւրեանց. յատկացուցիչ են. այսինքն՝ Դա, Իւր գերանուններուն սե-

թէ թուական. գոյական թէ սահմանական, թէ անորոշ. կամ թէ ինչ թիւ և ինչ հոլովի։

Տղաք բառագիտութեան աս սահմանին մէջ ածականին տեսակը, թիւը և հոլովը բաւել է որքը՝ պարտին իմացընել նախ թէ ածականը ո՞ր գոյականին կը վերաբերի բաւելով. Ածական այս ինչ անուան. կամ՝ Այս ինչ անուան կը վերաբերի։ Կամ՝ եթէ ածականը գոյականաբար* առնուած է, բաւելու են Ածական գոյականաբար առնուած։

ուական են, ոչ թէ ածական. քանզի հոլով չունին. զոր օրինակ՝ տուն նորա, տան նորա, ի տանէ նորա, տամբ նորա։ այսպիսի են՝ նոցա և ի-ցէ-ն։

Ե. Անորոշ ածականներ։ Եւրոպացիք անորոշ ածականներ կը կոչեն ան տեսակ ածականները որոնք անորոշ քանակութիւն կամ հատը կը գուշակեն. ինչպէս են՝ ոմն, որ. իմն, ինչ. ամենայն, իւրաքանչիւր. այլ. միւս. նոյն եւայլն։ Առանք Հայերէն քերականութեանց մէջ դէջ կամ դէջ-ն անուն կոչուած են։ Մինչ մեր քերականութեանը մէջ զոր գիպոշ առթով ի լոյս կ'ընծայենք, աս և ասորնման հարիւրաւոր փոփոխութիւններ ըրած ենք։ Բայց առայժմ ազգը աս և ասանց նման բառերու իրենց քերականութեանը մէջ տրված անունը պիտի տան. զոր օրինակ եթէ անորոշ ածականները դէջ անուամբ տրված են, դէջ անուն կոչելու են։

* Տղաք գիտնալու են որ բառերը երբեմն իրենց բնութիւնը իրարի մէջ կը փոխեն. զոր օրինակ՝ գոյականը երբեմն ածականաբար առնուիլ, կամ իրը բայանուն։ Ածական մը գոյականաբար. կամ իրը մակբայ։ Բայի մը անարեւոյթն՝ իրը գոյական. մակբայ մը կամ շաղկապ մը՝ իրը գոյական կրնան առնուիլ։

Հզաք դերանուն մը ցուցուցած ատեն, պարտին ցուցընել անոր տեսակը, այսինքն թէ էական (անձնական) դերանուն է, թէ յարաբերական։ Ընդհէս էական դերանունին դէմքը, ամենուն ալ հոլովն ու թիւը պարտին ցուցընել։ Յարաբերական դերանուան խօսքին մէջ որ բառի յարաբերիլն ալ պարտին իմացընել, ըսելով թէ՝ Այս ինչ բառը կը յարաբերի, կամ՝ Այս ինչ բառը յարաբերեալն է։ Եւ որովհետև ամեն դերանուն գոյական անունի մը տեղ կը դրուի, որնոր խօսքին մէջ յառաջագոյն ըսուած կամ յիշուած է, վերլուծութեան ատեն ամեն դերանունի ինչ բանի տեղ կեցած ըլլալն ալ իմացընելու է, ըսելով. Այս ինչ բառը Ներքնթացն է. քանզի քերականական բառով ան բառը՝ որուն տեղ դերանուն մը կը կենայ, անոր Ներքնթացը (անդէպան) կը կոչուի. ինչպէս որ յարաբերականին նախնթացը՝ յարաբերեալ կը կոչուի հայերէն քերականութեանց մէջ։

Հզաք բայերը ցուցուցած ատեն՝ պարտին իմացընել անոնց տեսակը, այսինքն թէ ներգործական են թէ կրաւորական կամ թէ չէզոք. գործեալ թէ ինչ եղանակ, ժամանակ, դէմք, թիւ են, և որ ըմբռդութեան կը վերաբերին։

Ընդունելութեանց համար ըսելու են թէ Դերբայն թէ ածականաբար առնուած են։

Ներապրութեանց համար Բառաշնուա-

թեան աս առոյգանին մէջ բաւական է բ-սել թէ՝ Այս ինչ բառը նախադրութիւն է։

Մակբայի, Հաղկապի և Միջարկութեան համար, Բառաջնութեան աս առոյգանին մէջ բաւական է ըսել թէ՝ Այս ինչ բառը մակբայ է, հաղկապ է կամ միջարկութիւն է։

ՕՐԻՆԱԿ ԲԱՌԱՋՆՆՈՒԹԵԱՆ

2. առոյգանին լուծմանը։

Յայնմ ժամանակի լուաւ Հերովդէս զորրորդապետն զլուր Յիսուսի, և ասէ ցծառայս իւր. Սա է Յովհաննէս Մկրտիչ, նա յարեաւ՝ի մեռելոց, և վասն այնորիկ զօրութիւնք լինին նովաւ։

Ց	նախդիր։
այնմ	ցո-ց. աջ. էջ. պր. ժամանակ բառին կը վերաբերի։
ժամանակի	հասարակ գոյ. էջ. պր։
լուաւ	ներգ. բայ. առհմ. խոպար. էջ. գ. երէմն. ա. ընդդէմ. ընդդառնշի ըսեմ։
Հերովդէս	յատուկ անուն. էջ. ո-ջ։
զորրորդապետն	հսկի. գոյ. էջ. ո-ջ։
զ	նախդիր։
զլուր	հսկի. գոյ. էջ. հայց։
Յիսուսի	յատուկ անուն. էջ. ուղղ։
և	շաղ։

ասէ	ՆԵՐԳ. ԲԱՅ. ԱՍԱՀՄ. ՆԵՐԻ. ԵՂ. Գ. ԳԷՄՔ. Ա. ԼԵՌՈՒԹ. ՂԱՐԳ. ասեմ։
ց	Նախադիր։
ծառայս	Հարի. Գոյ. յոգ. հայց։
իւր	սպասյական աջ. ծառայ Բառին իր վերաբերի։
նա	ԷՅՆ. ԳԵՐ. Գ. ԳԷՄՔ. ԵՂ. ՈՒՂ։
է	ԷՅՆ. ԲԱՅ. ԱՍԱՀՄ. ՆԵՐԻ. ԵՂ. Գ. ԳԷՄՔ. եմ։
Յովհաննէս	յատուկ անուն. ԵՂ. ՈՒՂ։
Մկրտիչ	Հարի. Գոյ. ԵՂ. ՈՒՂ։
նա	ԷՅՆ. ԳԵՐ. Գ. ԳԷՄՔ. ԵՂ. ՈՒՂ։
յարեաւ	ՀԵՂՈՒ ԲԱՅ. ԱՍԱՀՄ. ԽՈՐԵԼ. ԵՂ. Գ. ԳԷՄՔ. Ա. ԼԵՌՈՒԹ. ՂԱՐԳ. յառնեմ։
Ի	Նախադիր։
մեռելոց	ԸՆԴԱՆԵԼՈՒԻՆ ԱՆՑԵԱԼ. ՄԵՌԱՆԻՄ ԲԱՅԻՆ. ԳՈՅԱԿԱՆԱԲԱՐ ԱՌՆՈՒԱՅ. ԲԱՑԱԿԱՆ ՀՈԼՈՎ յոգնակի։
և	ՀՂԿ։
վասն	Նախադրություն։
այնորիկ	ցուց. աջ. ԳՈՅԱԿԱՆԱԲԱՐԱՌՆՈՒԱՅ. ԵՂ. ԱԵՏ։
զօրութիւնք	Հարի. Գոյ. յոգ. ՈՒՂ։
ինքին	ԷՅՆ. ԲԱՅ. ԱՍԱՀՄ. ՆԵՐ. յոգ. Գ. ԳԷՄՔ. Բ. ԼԵՌՈՒԹ. ինքեմ։
նոքաւ	ԷՅՆ. ԳԵՐ. Գ. ԳԷՄՔ. ԵՂ. ԲՅՈՒ։

Բանդի Հերոմոգենեսկաւաւ զՅովհաննէս,

կապեաց զնա և եդ 'ի բանտի վասն Հերոդ-
դիայ կնոջ Փիլիպպոսի եղբօր նորա. զի ա-
սէր զնա Յովհաննէս. Զէ արժան քեզ ու-
նել զդա. և (Հերոդէս) կամէր զնա սպա-
նանել. բայց երկնչէր 'ի ժողովրդենէ անտի.
քանզի իբրև զմարգարէ ունէին զնա։

Քանզի	ՇՇԻ.
Հերոդէս	յոպոս-ի անուն. էջ. ուղ։
կալաւ	ՆԷՐԳ. ԲՈՅ. ՈՒՀՄ. ԻՍՊԸԷԼ. ԷՋ. Գ. ԳԷՄՔ. Բ. ԼՅ. ՂՍՐ. ՈՒՆԻՄ։
զ	ՆԱԽԴԻՐ։
Յովհաննէս	յոպոս-ի անուն. էջ. հայց։
կապեաց	ՆԷՐԳ. ԲՈՅ. ՍՈՒՀՄ. ԻՍՊԸ. ԷՋ. Գ. ԳԷՄՔ. Ա. ԼՅ. կապեմ։
զ	ՆԱԽԴԻՐ։
զնա	ԷՅՆ. ԳԵՐ. Գ. ԳԷՄՔ. ԷՋ. հայց։
և	ՇՇԻ։
եդ	ՆԷՐԳ. ԲՈՅ. ԱՈՒՀՄ. ԻՍՊԸ. ԷՋ. Գ. ԳԷՄՔ. Ա. ԼՅ. ՂՍՐ. դնեմ։
'ի	ՆԱԽԴԻՐ ԻՍՄ ՆԱԽԱԳԴՐՈՒԹԻՒՆ։
բանտի	ՀԱՍՐ. ԳՈՅ. ԷՋ. ՊՐ. ('Ի ՆԱԽԱԳԴՐՈՒԹԻԱՄԲ, դադարուամ* կը ցուցընէ բանտի մէջ ըլլալ)։
վասն	ՆԱԽԱԳԴՐՈՒԹԻՒՆ։
Հերոդիայ	յոպոս-ի անուն. էջ. ան։
կնոջ	ՀԱՐԻ. ԳՈՅ. ԷՋ. ան. կին։
Փիլիպպոսի	յոպ. ան. էջ. ան։
եղբօր	ՀԱՐԻ. ԳՈՅ. ԷՋ. ան. եղբայր։
նորա	ԷՅՆ. ԳԵՐ. Գ. ԳԷՄՔ. ԷՋ. ան։

զի	ՀՀԻ։
ասէր	ՆԵՐԳ. ԲԱՅ. ԱՀՀՄ. ԱՆԿԱՊՐ. ԵՂ. Գ. ԳԷՄՔ. Ա. ԼՅ. ՀԱՐՊ. ասեմ։
Յ	ՆԱԽԳԻՐ։
Նա	ԷՅՆ. ԳԵՐ. Գ. ԳԷՄՔ. ԵՂ. ՀԱՅՅ։
Յովհաննէս	ՅԱՊ. ԱՆ. ԵՂ. ՈՒՂ։
Հ	ԲԱՅԱԱԱԿԱՆ ՄԱՅԲԱՅ։
է	ԷՅՆ. ԲԱՅ. ԱԱՀՄ. ՆԵՐ. ԵՂ. Գ. ԳԷՄՔ. եմ։
արժան	ՀԱՐՅ. ԳՈՅ. ԵՂ. ՈՒՂ։
քեզ	ԷՅՆ. ԳԵՐ. Բ. ԳԷՄՔ. ԵՂ. ՊՐ։
ուՆել	ՆԵՐԳ. ԲԱՅ. ԱՆԵՐԼՈՅԼ. Բ. ԼՅ. ՀԱՐՊ. ուՆելմ։
Զ	ՆԱԽԳԻՐ։
ՀՂԱ	ԷՅՆ. ԳԵՐ. Գ. ԳԷՄՔ. ԵՂ. ՀԱՅՅ։
և	ՀԱՅԻԱՊ։
կամէր	ՆԵՐԳ. ԲԱՅ. ԱԱՀՄ. ԱՆԿԱՊՐ. ԵՂ. Գ. ԳԷՄՔ. Բ. ԼՅ. կամիմ։
Զ	ՆԱԽԳԻՐ։
ՀՆԱ	ԷՅՆ. ԳԵՐ. Գ. ԳԷՄՔ. ԵՂ. ՀԱՅՅ։
ապաՆաՆել	ՆԵՐԳ. ԲԱՅ. ԱՆԵՐԼՈՅԼ. Ա. ԼՅ. ապաՆաՆեմ։
բայց	ՀԱՅԻԱՊ։
երկնչէր	ՀԷՐՍԱ ԲԱՅ. ԱԱՀՄ. ԱՆԿԱՊՐ. ԵՂ. Գ. ԳԷՄՔ. Բ. ԼՅ. ՀԱՐՊ. երկնչիմ։
Ի	ՆԱԽԳԻՐ։
Ի ժողովրդենէ	ՀԱՐՅ. ԳՈՅ. ԵՂ. ԲԱՅԱԱԱԿԱՆ։
անտի	ՄԱՅԲԱՅ. ԱԾԱԿԱՆԱԲԱՐ ԱԱՆՈՒԱԾ, ԻԲՐ ՅՈՒՅԱԿԱՆ ԱԾ. ԲԱՅ

	յառաջան. 'ի ժողովրդենէ
	Բոյին կէ Վերաբերէ։
քան զի	ըստ։
իբրև	նախագրոնիան։
զ	նախդիր։
ըմարգարէ	հրէ. գոյ. էջ. հայց։
ուանէին	ներգ. բայ. սահմ. անկատ. յոգ.
	գ. դէմք. բ. ըն. ըստ. ուանիմ։
զ	նախդիր։
ընա	էին. դէր. գ. էջ. հայցական։

Եւ յետ հինգ աւուր էջ քահանայապետն Անանիա հանդերձ ծերովք ոմամբք, և ճարտարախօսաւ Տերտիղեաւ ոմամբ. որք և զգացուցին դատաւորին վասն Պաւղոսի։ Եւ 'ի կոչելն զնա, սկսաւ Տերտիղոսն ամբաստան լինել և ասել։ «Բազում խաղաղութիւն գտեալ 'ի քէն, և իրաց ուղղութիւն ազգիս այսորիկ քով խնամով, ամենայնիւ և ամենայն ուրեք շնորհակալ եմք, քաջդ Փելիքս, ամենայն գոհութեամբ։ Բայց զի մի և աւելի աշխատ արարիցս զքեզ, ապաչեմ լսել մեզ կարճ 'ի կարճոյ քոյին հեզութեամբ։ Քանզի գտաք զայրս զայս ապականիչ և խռովիչ ամենայն Հրէից՝ որք են ընդ տիեզերս, և առաջնորդ Նազովրացւոց հերձուածոյն. որ և զտաճարն իսկ կամեցաւ պղծել. զոր և կալաք, և ըստ մերոց օրինացն դատել կամեցաք։ Եկեալ Լիւսիաս

հազարապետ՝ մեծաւ բռնութեամբ 'ի ձեռաց մերոց եհան. հրամայեաց և չարախօսացն նորա գալ առ քեզ. յորմէ դու իսկ բաւական լինիցիս, վերատին դառնալ, ամենայնի հասու լինել՝ զոր մեքս ամբաստանեմք զդմանէ։ Մխաքանեցին և Հրեայքն, ասեն՝ Այդ այդպէս է։ Պատասխանի եառ Պաւղոս, յակին արկանելն նմա դատաւորին խօսել։ «Ի բազում ամաց լինել քեզ դատաւոր ազգիս այսորիկ գիտեմ. յօժարութեամբ վասն իմոց իրաց պատասխանի առնեմ. քանզի կարող ես գիտել, զի ոչինչ աւելի է իմ քան զաւուրս երկոտասան, յորմէ հետէ ելի երկիրպագանել Յերուսաղէմ. և ոչ 'ի տաճարի անդ գտին զիս ընդ ումեք խօսեցեալ, և կամ ժողովս արարեալ բազմաց. ոչ 'ի ժողովուրդս, և ոչ 'ի քաղաքի, և ոչ յանդիման առնել կարեն քեզ, վասն որոյ այժմս չարախօսեն զինեն։ Բայց զայս խոստանամ քեզ, եթէ ըստ ճանապարհին զոր ասեն հերձուած, այնպէս պաշտեմ զԳհայրենի Աստուածն. հաւատացեալ ամենայնի՝ որ ինչ յօրէնսն և 'ի մարգարէս գրեալ է։ Ունիմ յոյս առ Աստուած որում և դոքա իսկ ակնուանին, թէ յարութիւն լինելոց է արդարոց և մեղաւորաց. յորում և ես իսկ ձգնիմ անխիղճ միտս ունել առ Աստուած և առ մարդիկ յամենայն ժամ։ Ի բազում ամաց ողորմութիւնս եկի առնել յազգդ իմ, և եառս պատարագիս, որովք

գոյն զիս սրբեալ 'ի տաճարին, ոչ բազմօք և ոչ ամբոխիւ։ Ոմանք Ասիացւոց անտի հրեայք, որոց պարտ էր գալ առաջի քոյ և ամբաստան լինել, եթէ ունիցին ինչ զինէն. և կամ ինքեանք ասքա ասասցեն, զի՞նչ գըտին յիս անիրաւութիւն՝ մինչդեռ կայի յատենին. բայց միայն վասն միոյ բարբառոյս այսորիկ՝ զոր աղաղակեցի մինչ կայրն 'ի մէջ նոցա, եթէ Վասն յարութեան մեռելոց դատիմ ես այսօր 'ի ձէնջ»։ Եւ յապաղեաց ըզ նոսա Փելիքս, զի ստուգագոյնս գիտէր վասն ճանապարհին. ասէ. Յորժամ Լիւսիաս հազարապետ իջցէ այսր, տեղեկացայց վասն ձեր։ Հրամայեաց Հարիւրապետին պահել զնա. և ունել յընդարձակի, և մի զոք յիւրոց անտի արգելուլ 'ի պաշտելոյ զնա։ Եւ յետ աւուրց ինչ եկն Փելիքս հանդերձ Դրուսիլաւ կնաւ իւրով՝ որ էր հրեայ. կոչեաց զՊաւղոս, և լուաւ 'ի նմանէ վասն որ 'ի Յիսուս Քրիստոս հաւատոցն։ Եւ 'ի խօսելն նորա վասն արդարութեան և ժուժկալութեան և հանդերձեալ դատաստանին, զահի հարեալ Փելիքս՝ ետ պատասխանի. Դու առ այժմ երթ, և յորժամ ժամ լինիցի, կոչեցից զքեզ։ Մինչդամայն և ակն ունէր, թէ տացի ինչ նմա 'ի Պաւղոսէ. վասն որոյ և առէպ կոչեցեալ զնա՝ խօսէր ընդ նմա։ Եւ 'ի կատարել երկուց ամաց, եկն փոխանակ Փելիքսի՝ Փեստոս Պորկիոս։ Իբրև կամեցաւ շնորհս առնել Հրէից Փե-

ինքս, եթող զՊաւղոս կապեալ։

Փեստոս իբրև եհաս յիշխանութիւնն, յետ երից աւուրց ել Յերուսաղէմ 'ի Կեսարիայ. և զգացուցին նմա քահանայապետքն և գլխաւորք Հրէից զՊաւղոսէ. և աղաչէին՝ խնդրեալ շնորհս 'ի նմանէ զի կոչեսցէ զնա Յերուսաղէմ, զարան գործեալ սպանանել զնա 'ի ճանապարհի։ Իսկ Փեստոս արար պատասխանի՝ պահել զնա 'ի Կեսարիա, թէ ինքն իսկ ընդ հուզ անդր երթալոց էր. և Որ 'ի ձէնջ կարօղքդ իցեն, ասէ, ընդ իս իջցեն, և թէ իցէ ինչ յառնն ինչս՝ ամբաստան լիցին զնմանէ։ Այլ լեալ անդ աւուրս ոչ աւելի քան զութ կամ զտասն, եկն էջ 'ի Կեսարիա. և 'ի վաղիւ անդր նստեալ յատենի, հրամայեաց ածել զՊաւղոս։ Այլ իբրև եկն, կացին շուրջ զնովաւ որ Յերուսաղէմէ իջեալ էին Հրեայքն. բազում և ծանր ինչս դնէին, զորս ոչ կարէին ցուցանել, քանզի առնէր պատասխանի Պաւղոս, եթէ Ոչ յօրէնս Հրէից, և ոչ 'ի տաճարն, և ոչ 'ի Կայսր ինչ ինաստակար եմ։ Բայց Փեստոս կամեցեալ Հրէից շնորհս առնել. պատասխանի ետ Պաւղոսի՝ և ասէ. Կամի՞ս Յերուսաղէմ երանել, և անդ վասն դոցին իրաց դատել առաջի իմ։ Այլ ասէ Պաւղոս. Յատենի Կայսեր հասեալ կամ, ուր պարտ է ինձ դատել. Հրէից ինչ չեմ ինաստակար, որպէս և դու իսկ քաջ գիտես. ապա եթէ ինաստակար եմ՝ և արժանի ինչ մա-

հու գործեցի, ոչ զանգիտեմ 'ի մեռանելոյ. իսկ եթէ ոչինչ է՝ զորոց սոքա ամբաստան լինին զինէն, ոչ ոք կարէ զիս դոցա շնորհել. 'ի Կայսր բողոքեմ։ Յայնժամ Փեստոսի խօսեցեալ ընդ խորհրդակցին՝ արար պատասխանի. Ի Կայսր բողոքեցեր, առ Կայսր երթիջիր։

Իբրև անցին աւուրք ինչ, Անդրիպպաս արքայ և Բերենիկէ եկին 'ի Կեսարիա՝ յողջոյն Փեստոսի։ Եւ իբրև աւուրս բազումս հանէին անդ, Փեստոս զեկոյց արքայի ըզ Պաւղոսէ՝ և ասէ. Այր մի է ասա մնացեալ կապեալ 'ի Փելիքսէ. վասն որոյ իբրև չոքայ Յերուսաղէմ, զգացուցին ինձ քահանայապետքն և գլխաւորք Հրէից. և խնդրէին յինէն առնել նմա պատուհաս. որոց ետուս պատասխանի, եթէ Չէ օրէն Հռոմայեցւոց շնորհել ումեք զոք, մինչև ամբաստանեալն յանդիման ունիցի զդատաւորսն, և տեղի պատասխանւոյ առնուցու վասն ամբաստանութեանն։ Եւ իբրև եկին այսր, ոչինչ յապաղեցի, այլ 'ի վաղիւն նստեալ յատենի՝ հրամայեցի ածել զայրն։ Վասն որոյ մատուցեալ ամբաստանքն, և ոչ մի ինչ վնաս չարութեան 'ի մէջ բերին՝ զորոց ես կարծէի, բայց խնդիրս ինչ որ վասն իւրեանց պաշտաման ունէին ընդ նմա. և վասն Յիսուսի որումն մեռելոյ, զորմէ ասէր Պաւղոս թէ կենդանի է։ Իբրև յանհնարս մտի վասն այնպիսի իրաց քննութեան, ասեմ եթէ

Կամիցի՞ երթալ Յերուսաղէմ, և անդ դա-
տել վասն նոցին իրաց։ Բայց 'ի Պաւղոս
մի բողոքելն՝ զի պահեցցի 'ի Քաջի Արան-
ցին յանդիմանութիւն, հրամայեցցի պա-
հել զնա մինչև ասց տանել առ Կայսր։
Ագրիպպաս ցՊեստոս ասէ. Կամէի և ես
լսել առն. և նա ասէ. 'Ի վաղիւ լուիցես։
Լս 'ի վաղիւ անդր իբրև եկին Ագրիպպաս և
Բերենիկէ բազում և երևելի ապառաւք, և
մտին յատեանն հանդերձ հազարապետօքն
և արամբք պատուաւորօք քաղաքին, հրա-
մայեալ Փեստոսի՝ ածին զՊաւղոս։ Լս
ասէ Փեստոս. Արքայ Ագրիպպա և ամե-
նայն արք որք ընդ մեզ էք, տեսանէք զսա.
վասն որոյ ամենայն ժողովք Հրէից ամ-
բաստան եղեն ինձ Յերուսաղէմ, և ասա ա-
ղաղակէին՝ թէ Չէ պարտ զմա կեալ. բայց
ես 'ի վերայ հասի, թէ ոչինչ է զորս արժա-
նի մահու գործեալ. և զորս ինքնին բողոք
կալեալ առ Քաջ Արանցն, խորհեցայ յղել։
Վասն որոյ ասու զուխտեամբ ինչ գրել տեսան
իմոյմ ոչ ունիմ. վասն այնորիկ ածի զդա ա-
ռաջի ձեր, և մանաւանդ առաջի քոյ, արքայ
Ագրիպպա, որպէս զի վերատին քննեալ՝
մարթացիցի ինչ գրել. քանզի անպատեհ ի-
մրն թուի ինձ՝ առանց տանել կապեալ մի, և
ոչինչ ինաս զնմանէ նշանակել։

Լս Ագրիպպաս ասէ ցՊաւղոս. Հրամայ-
եալ է վասն քո խօսել։ Յայնժամ Պաւղոս

սի ձգեալ զձեռն՝ առնէր պատասխանի։ «Վասն ամենայն ամբաստանութեանն Հրէից զինէն, ասէր Ագրիպպա, համարիմ զանձն երանելի, զի քո առաջի այսօր տալոց եմ պատասխանի. մանաւանդ զի գիտակ իսկ ես ամենայն կրօնից և խնդրոց Հրէից. վասն որոյ ազաչեմ երկայնմտութեամբ լսել ինձ։ Քանզի կենդանոյ իմոց որ 'ի մանկուէ, իսկզբանէ լեալ յազգի անդ իմում Յերուսաղէմ, տեղեակ են ամենայն Հրեայք։ Յառաջագոյն գիտեն 'ի վաղուց հետէ, եթէ կամիցին վկայել, զի ըստ ճշմարտագոյն կրօնից օրինացն մերոց կեցեալ եմ փարիսեցի։ Եւ արդ վասն յուսոյն առ Հարսն եղելոյ աւետեացն Աստուծոյ՝ զատեալ կամ յատենի. յոր երկոտասան ազգատոհմին մերոյ անպակաս զցայգ և զցերեկ պաշտեալ ակն ունէին հասանել, վասն որոյ յուսոյ ամբաստանիմ, ասէր, 'ի Հրէից։ Զի՞նչ անհաւատ թուի ձեզ, եթէ Աստուած ըզմեռեալս յարուցանէ։ Եւ իսկ ինքնին պատշաճ համարէի զբազում ինչ հակառակ անուանն Յիսուսի Նազովրեցւոյ գործել. զոր և արարի իսկ Յերուսաղէմ. և զբազումս 'ի սրբոցն ես բանտարգել առնէի, 'ի քահանայապետէն առեալ իշխանութիւն, և զսպանելոցն նոցա բերէի համար։ Եւ ըստ ամենայն ժողովրդոցն բազում անգամ պատժեալ զնոսա՝ բռնադատէի հայհոյել, առաւել ևս մոլեալ 'ի վերայ նոցա՝ հալա-

ձէր մինչև յարտաքին քաղաքն։ Որովք գնացեալ 'ի Դամասկոս՝ իշխանութեամբ և հրամանօք քահանայապետին, զմիջաւորքն 'ի ճանապարհի տեսի, արքայ, յերկնից առաւել քան զլուսաւորութիւն արեգական ծագեալ զինև լոյս, և զնոքօք որ ընդ իսն երթային. և յամենեցուն մեր անկանելն յերկիր, լուայ ձայն որ ասէր ցիս հեբրայեցւոց բարբառովն. Սաւուղ Սաւուղ՝ զի՞ հալածես զիս. խիստ է քեզ ընդդէմ խթանի աքացել։ Եւ ես ասեմ, Ո՞ ես տէր. և տէր ասէ. Ես եմ Յիսուս զոր դուն հալածես. այլ արի և կաց 'ի վերայ ոտից քոց. զի վասն այսորիկ երևեցայ քեզ՝ առնուլ զքեզ 'ի ձեռն պաշտօնեայ և վկայ որոց տեսերդ, և որով երևեցայ քեզ. փրկել զքեզ 'ի ժողովրդենէդ և 'ի հեթանոսաց՝ յորս ես առաքեցից զքեզ, բանալ զաչս նոցա, դարձուցանել 'ի խաւարէ՝ 'ի լոյս, և յիշխանութենէ սատանայի՝ Աստ. առնուլ նոցա զթողութիւն մեղաց, և վիճակ ընդ սուրբսն հաւատովքն որ յիս։ Ասի, արքայ Ագրիպպա, ոչ եղէ անհաւան երկնաւոր տեսլեանն. այլ նախ որոց 'ի Դամասկոս և Երուսաղէմ էին, և ընդ ամենայն գաւառսն Հրէաստանի և 'ի հեթանոսս պատմեցի զղջանալ և դառնալ Աստուած կենդանի. արժանի ապաշխարութեան գործս գործել։ Վասն այսորիկ Հրէից կալեալ զիս 'ի տաճարին՝ կամէին

ապանանել. օգնութիւն հասեալ առ 'ի Աստուծոյ. մինչև գայսօր կացի վկայել փոքու և մեծի. ոչինչ արտաքոյ ասել՝ քան զոր մարգարէքն և Մովսէս խօսեցան վասն հանդերձելոցն լինելոյ. եթէ չարչարելոց է Քրիստոս, եթէ առաջին 'ի յարութենէ մեռելոց՝ լոյս պատմելոց է ժողովրդեանն և հեթանոսաց։ Եւ նորա զայս պնդանելոյ, Փեստոս 'ի ձայն մեծ ասէ. Մորիս Պաւղէ, բազում դպրութիւնդ զքեզ 'ի մոլութիւն դարձուցանեն։ Իսկ Պաւղոս ասէ. Ոչ մոլիմ, քաջդ Փեստոս, այլ զցածութեան և զճշմարտութեան բանս բարբառիմ։ Գիտակ իսկ է այսոցիկ արքայ, ընդ որում համարձակեալդ խօսիմ. քանզի ծածկել 'ի քէն իմիք 'ի սոցանէ՝ չառնում յանձն. զի ոչ եթէ յանկեան ուրեք գործեալ լցէ այս։ Հաւատա՞ս արքայ Ագրիպպա, մարգարէից. գիտեմ զի հաւատաս։ Եւ ասէ Ագրիպպաս ցՊաւղոս. փոքու իմն հաւանեցուցանես զիս լինել քրիստոնեայ։ Եւ Պաւղոս ասէ. խնդրէի յԱստուծոյ և փոքու և մեծաւ՝ ոչ միայն զքեզ՝ այլ զամենեսեան որ լսեն ինձ այսօր, լինել այսպիսի որպէս և ես եմ, բայց 'ի կապանաց սոսին։ Յետոն եկաց արքայն դատաւորն և Բերնիկէ, որք ընդ նոսայն նստէին։ Եւ իբրև գնացին, խօսէին ընդ միմեանս և ասէին. թէ՝ Ոչինչ արժանի մահու կամ կապանաց գործէ այրս այս։ Իսկ Ագրիպպաս ցՓեստոս ասէ. Արձակել

մարթ էր զայրս զայն՝ եթէ ոչ էր բողոքեալ 'ի կայսր։

ԻՐԵՐ հրամայեցաւ մեզ նաւել յԻտալիա, տային զՊաւղոս՝ և զայլս ոմանս կապեալս ցհարիւրապետն մի, որում անուն էր Յուլիոս, 'ի Սեբաստեան գնդէ։ Եւ ելեալ 'ի նաւ մի Անդրամիտեանցի, որ երթալոց էր 'ի կողմանս Ասիացւոց՝ գնացաք. էր ընդ մեզ և Արիստարքոս Մակեդոն Թեսաղոնիկեցի։ Եւ 'ի վաղիւ անդր իջաք 'ի Սիդոն. և մարդասիրութիւն ցուցեալ Յուղեայ առ Պաւղոս, հրամայեաց առ բարեկամսն երթալ և դարման գտանել։ Եւ անտի ելեալ խոնարհագոյն նաւեցաք 'ի Կիպրոս վասն հողմոցն ընդդէմ լինելոյ։ Յայնժամ ընդ մէջ ծովուն Կիլիկեայ և Պամփիլեայ նաւեալ՝ իջաք 'ի Սմիւռայ Լիկիացւոց։ Եւ անդ գտեալ հարիւրապետն նաւ մի Աղեքսանդրացի՝ որ երթայր յԻտալիա, եմոյծ զմեզ անդր։ Եւ 'ի բազում աւուրս ծանրանաւեալք հազիւ հասաք առ Կնիդեաւ. և 'ի չթողացուցանել մեզ հողմոյն՝ նաւեցաք խոնարհագոյն 'ի Կրետէ առ Սաղիմինեաւ. հազիւ անցեալ առ նովաւ՝ եկաք 'ի տեղի մինչ որ կոչէր Գեղեցիկ նաւահանգիստ, յոր հուպ էր քաղաքն Ղասեայ։ Եւ իբրև բազում ժամանակք անցանէին, և սխալ ևս լինէր նաւելոյն, և վասն այն մինչ ևս պահոցն անցանելոյ, տայր խրատ Պաւղոս և ա-

սէր ցնոսա. Ընդ, տեսանեմ թէ թշնամանօք և բազում վնասու՝ ոչ միայն բեռինդ և նաւիդ՝ այլ և անձանց մերոց լինելոց է նաւարկութիւնս։ Իսկ հարիւրապետն նաւապետին և նաւավարին առաւել անսայր քան բանիցն Պաւղոսի։ Իբրև դժպատեհ իմն թուէր նաւահանգիստն առ ձմերել, բազում խորհեցան գնալ անտի. թերևս կարացեն հասանել 'ի Փիւնիկէ, ձմերել 'ի նաւահանգստին Կրետացւոց, որ հայէր ընդ հարաւակողմ և ընդ աշխարհն։ Լուա 'ի շքնչել հարաւոյն՝ համարեցան ուր դիմեալն էին հասանել. և արկեալ՝ մօտ անցանէին առ Կրետեաւ։ Եւ ոչ յետ բազում ժամուց անկաւ գնոմաւ հողմ ուռուցիկ որ կոչի բուրակիկլոն։ Ընդ յափշտակել նաւին և 'ի չհանդուրժել ընդդէմ հողմոյն՝ թոյլ տուեալ երթայաք և գայաք։ Ի կղզի մինչ դիմեալ՝ որ կոչէր Կղաւդա, հազիւ կարացաք ըմբռնել զմակոյկն, զոր առեալ յօգնականութիւն կապէին ընդ նաւն. երկուցեալք թէ գուցէ 'ի յորձանուտն անկանիցին, իջուցեալ զառագաստն՝ այնպէս երթային և գային։ Լուա 'ի սաստկագոյն վըշտանալոյն մերոյ՝ 'ի վաղիւ անդր զկարասին ընկեցիկ առնէին, և յերիր աւուր ընդ իւրեանց ձեռն զգործին նաւին ընկեցին։ Իբրև ոչ արե և ոչ աստեղք երևէին 'ի բազում աւուրս, և ձմեռն ոչ սակաւ կայր 'ի վերայ, ապա բառնայր ամենայն յոյս փրկ-

կուլթեան մերոյ։ Եւ զի բազումաւորքս
նօթի էին, յայնժամ Պաւղոս կացեալ 'ի
մէջ նոցա ասէ. Պարտէր ձեզ, ո՛վ արք, ան-
սալ ինձ, և ոչ երանել 'ի Կրետեայ և
շահել զվիշտս զայս և զվնաս. և արդ՝ խրա-
տեմ զձեզ քաջալերել. զի վնաս անձին և
ոչ մրուտ 'ի ձէնջ լինիցի, բաց 'ի նաւէդ։
Քանզի երևեցաւ ինձ յայսմ գիշերի հրեշ-
տակ Աստուծոյ՝ որոյ եմն եմ և պաշ-
տեմ զնա, և ասէ. Մի երկնչիր, Պաւղէ, կայ-
սեր ևս քեզ պարտէ յանդիման լինել. և
ահա շնորհեալ է քեզ Աստուծոյ զամե-
նեսեան, որ են ընդ քեզ 'ի նաւիդ։ Վասն
այսորիկ քաջալերեցարուք, արք, զի հաւա-
տամ Աստուած եթէ այսպէս լինի, զոր-
օրինակ խօսեցաւ ընդ իս. բայց 'ի կղզի
ինչ հասանէ մեզ անկանել։ Իբրև ջորեք-
տասաներորդ գիշեր լինէր, մինչդեռ ծփէաք
'ի Հանդրին անդուանդս, 'ի մէջ գիշերին կար-
ծէին նաւավարքն եթէ հասեալք իցեն յաշ-
խարհ ուրեք. և ընկեցեալ զդուանդսն՝ գը-
տին զիրիս քսան. և տակաւ ինչ դադարեալ՝
դարձեալ ընկեցին, և գտին զիրիս հնգե-
տասան։ Զահի հարեալ թէ գուցէ 'ի խիտ
ինչ տեղիս անկանիցին, յետուստ կողմանէ
ընկեցին խարիսխս չորս. ըղձանային այգուն
լինելոյ։ Բայց նաւավարքն խնդրէին փախ-
չել 'ի նաւէ անտի. և իջուցեալ զկուրն 'ի
ծով անդր՝ պատճառանօք որպէս թէ առա-
ջոյ կողմանէ զխարիսխն ձգելոց իցեն, ա-

ասէ Պաւղոս ցհարիւրապետն և ցզօրականսն. Եթէ ոչ զոքա մնան 'ի նաւին՝ զուք ապրել ոչ կարէք։ Յայնժամ զօրականքն հատին զլարս կրին, և 'ի բաց ընկեցին։ Եւ մինչդեռ այդն կամէր լինել, աղաչէր Պաւղոս զամենեսեան առնուլ կերակուր, ասէ. Այսչորեքտասաներորդ օր է՝ որում ակն ունիք նօթիս կատարել, և չէ ինչ ճաշակեալ. վասն որոյ աղաչեմ զձեզ ճաշակել կերակուր, զի այն իսկ վասն ձերոյ փրկութեան է. զի ոչ ուրուք 'ի ձէնջ մազ մի 'ի գլխոյ կորիցէ։ Եւ երբեմն ասաց զայս, առեալ հաց՝ գոհացաւ զԱստուծոյ առաջի ամենեցուն. երեկ և սկսաւ ուտել։ Եւ քաջալերեցան ամենեքին, և նոքա առին կերակուր. և էաք ամենայն հոգիք 'ի նաւին՝ երկերիւր եօթանասուն և վեց։ Երբեմն յադեցան կերակրոյն՝ թեթևացուցին զնաւն, թափեալ ընդ ցորեանն 'ի ծով։ Եւ երբեմն այգ եղև, զերկիրն ոչ ճանաչէին, բայց զդոպ մի նշմարէին՝ թէ ոմն ծովուն ելցէ. յոր խորհէին՝ թէ հնար լինչ ելցէ՝ զերծանել զնաւն։ Եւ զխարիսխն հատատեալ ընկեցին 'ի ծովն, թողացուցին զխառնելիս թեղոցն, և 'ի բաց առին զառագաստն, և եռուն հողմոյն յոսին կոյս ծովուն։ Ընկեալ 'ի տեղի մի երկծով՝ թիւրեցին զնաւն. և առաջին կողմն նաւին խրեալ անշարժ մնայր, և յետին կողմն քակէր 'ի բռնութենէն։ Եւ զօրականացն խորհուրդ արարեալ՝ զի զկապիտանն սպանցեն,

և զի մի ոք լուցցի և փախիցէ , հարիւրապետն՝ քանզի կամեցաւ ապրեցուցանել զՊաւղոս՝ արգել զնոսա 'ի խորհրդոյն. հրամայեաց զի որ կարողն իցեն լուզել՝ անկանիցին նախ և 'ի ցամաքն երանիցեն. և այլքն 'ի տախտակս և յայլ ինչ կամ 'ի նաւէ անտի. և այսպէս եղև ամենեցուն փրկանել յերկիր ։

Յայնժամ գիտացաք եթէ Մելիտինէ էր անուն կղզւոյն ։ Բայց բարբարոսքն շնորհեցին ոչ սակաւ մարդասիրութիւն մեզ, քանզի լուցին խարոյկ և ընկալան զամենեսեան զմեզ, վասն անձրևին որ սաստիկ և վասն ցրտոյն ։ Լու 'ի ժողովել Պաւղոսի խռիւ ինչ բազում և դնել 'ի վերայ խարուկին, իժ մի 'ի ջերմութենէն երևալ կալաւ զձեռանէ նորա ։ Լու իբրև տեսին բարբարոսքն կախեալ զգազանն զձեռանէ նորա, ասէին ցմիմեանս. Ուրեմն սպանող է այրս այս. որ թէպէտ ապրեցաւ 'ի ծովէն, իրաւունքն ոչ եռուն կեալ ։ Լու նորա թօթափեալ զգազանն 'ի հուրն՝ եղև նմա չար և ոչինչ. և նոքա ակն ունէին նմա այտնելոյ, կամ անկանելոյ և յանկարծակի մեռանելոյ։ Իբրև շատ ակն կալեալ, և տեսանէին թէ ոչինչ վնաս եղև նմա, դարձեալ դարձուցին զքանան, և ասէին թէ՝ Աստուած ումն է ։ Լու շուրջ զտեղեաւն զայնուիկ էին գեաւղք գլխաւորի կղզւոյն, որում անուն էր Պոպ-

գիտս. որ առ զմեզ յերաշխի զերիս աւուրս
և սիրով ընկալաւ։ Եւ եղև հօրն Պապղեայ
'ի ջերմ և յախտ թանչից հիւանդանալ գնել.
առ որ մտեալ Պաւղոս և կացեալ յաղօ-
թիս՝ եդ ծունր և բժշկեաց զնա։ Իբրև
այս եղև, այլ հիւանդք որ էին 'ի կղզւոջն
գային և բժշկէին. որք և բազում պատ-
ուով պատուեցին զմեզ. և իբրև գնացաք,
եռուն որ ինչ պէտք էին։

Եւ յետ երից ամաց եկաք 'ի նաւ մի
Աղեքսանդրացի որ ձմերեալէր 'ի կղզւոջն
նշանաւորաւ Դիոսկորացւոց։ Եւ իջեալ 'ի
Սիւրակուսաս, եղեաք աւուրս երկուս.
ուստի գնացեալ հասաք 'ի Հռեգիոն։ Եւ
յետ աւուր միոյ 'ի շնչել հարաւոյն, եր-
կօրեայք եկաք 'ի Պատիոլուս, ուր և գը-
տաք եղբարս։ Աղաչեցեալք 'ի նոցանէ լի-
նել աւուրս եւթն, և ապա եկաք 'ի Հռ-
ոմմ. և անտի լուեալ եղբարց զմէնջ, ե-
լին ընդ առաջ մեր մինչև յորգոստայն Ապ-
փիեայ և երիցն կրպակաց. զորս տեսեալ
Պաւղոսի գոհացաւ Աստուծոյ և քաջա-
լերեցաւ։ Եւ իբրև մտաք 'ի Հռոմմ, հրա-
մայեցաւ Պաւղոսի լինել առանձինն հան-
դերձ զինուորաւն՝ պահապանաւ իւրով։

ԼՕՉՆԻԿ

Յ ԲԱՐԵՐԱՐ արարչէն չարիք չիք լեալ. և չիք ինչ չար որ բնութեամբ չար լցէ. և (Աստուած) ոչ է արարիչ չարաց իրաց, այլ բարեաց։

Եւ արդ զոր ինչ յարարածոցն բարի կարծիցեն, կամ զոր չար. զի բազում անգամ զոր բարին կարծիցեն, միայն առանձինն՝ առանց ընկերին խառնութեան՝ ինքնակար լինի, յամենեցուն առհասարակ վնասակար։ Արեգակն թե(պէտ) բարի է, և առանց օդոյ խառնուածոյ այրիչ և ցամաքեցուցիչ է. նոյնպէս և լուսին խոնաւական բնութի, առանց խառնուածոյ ջերմութեան արեգական, ինքնակար և ապականիչ է։ Եւ օդ, առանց ցօղոյ խոնաւութեան և ջերմութեան, ինքնակար և ապականիչ է. և ջուրք զհող երկրի ողողանեն և ապականեն. և երկիր առանց ջրոյ պատառի և խորխորի։ Եւ այնպէս չորեքին բնութիւնքն, ուստի աշխարհս կազմեալ և կայ, առանձինն ապականիչք են միմեանց, և խառնեալ ընդ ընկերին օգտակարք և շահաւորք։ Եւ զի այս այսպէս է՝ ամենեցուն յայտնի է որ կամին ուսանել։

Ապաւորեմն է ինչ զօրութիւն ծածուկ, որ զապականիչսն միմեանց խառնուածովք արար օգտակարս իրերաց։ Եւ որ առողջ միտս ունին, ոչ զշարժունսն՝ այլ զշարժիչն

պարտին փառաւորել. և ոչ ընդ արքանեակ-
սին, այլ ընդ վարիչն պարտին զարմանալ. և
ոչ ընդ գնայուանն, այլ ընդ գնացուցիչն.
քանզի և նոքին իսկ իւրաքանչիւր փոփոխ-
մամբք յայտ առնեն, եթէ է ումն՝ որ փո-
փոխէ զնոսա։ Արեգակն ծագելովն և մե-
բանալով և 'ի մուտս դառնալով. և լուսին
աճմամբ ընլով և նուազելով. և այլք ևս յա-
րարածոցն ըստ իւրաքանչիւր բնութեանց
շարժելովն և դադարելովն։ Եւ արդ չէ ա-
ռողջ մտաց զշարժիչն և զփոփոխիչն թողուլ,
և շարժնացն և փոփոխելեաց պաշտօն տա-
նել և երկրպագութիւն մատուցանել. զի
որ շարժին և փոփոխի՝ չէ էական. այլ կամ
լեալ յուժեքէ և յիմեքէ, և կամ հատեալ
'ի չգոյէ։ Եւ որ էն և շարժէ զամենայն, ինքն
ոչ շարժի և ոչ փոփոխի, քանզի էական է և
անշարժական։

ԻՆԱՐՈՒՈՔ է արեգակն և գեղեցիկ բնու-
թեամբ, և մեզ և ամենայն արարածոց՝ որ 'ի
ներքոյ երկնից՝ յօգուտ և 'ի զարման, իբրև
ճրագ մի 'ի մեծի տան 'ի մէջ ձեղուան և
յատակի լուցեալ՝ առ 'ի գիտաւորն և զառ-
ուերն զերկուց մեծացն անօթոց 'ի բաց 'ի
միջոց փարատելոյ. բայց ինքն եթէ իցէ և ե-
թէ չիցէ՝ զայն ոչ գիտէ, զի չէ 'ի բանաւո-
րաց և 'ի մտաւորաց. նոյնպէս և այլքն յան-
շնչոցն արարածոց։ Եւ թէ ջուր թէ հուր
թէ երկիր թէ օդ, թէ իցեն և թէ չիցեն՝
զայն ոչ գիտեն, և զապառաւորութիւնն՝ յոր

կարգեցան՝ անդադար մատուցանեն, վարելով այնր՝ որ կազմեացն զնոսա։ Եւ մեք ոչ անարգեմք զնոսա, և ոչ պաշտօն մատուցանեմք նոցա. այլ հայեցեալ ընդ նոսա՝ փառաւորեմք զկարգիչն նոցա և զյօրինիչ, զի մեզ 'ի պէտս են, և կարգչին իւրեանց 'ի փառս։

Օ իմարդ պաշտիցեմք զարեգակն, որ մերթ՝ կոչի իբրև զծառայ առ 'ի սպասն՝ յոր կարգեցաւ՝ հասանելոյ, և մերթ երթայ զօղէ իբրև զարհուրեալ, և տայ տեղի խաւարին ընուլ զմիջոց 'ի մեծի տանս. և ընդ ժամանակս ժամանակս 'ի խաւար դառնայ՝ առ 'ի յանդիմանութիւն և յամօթ իւրոցն պաշտօնէից. յայտ արարեալ եթէ Ձեմ ես արժանի պաշտաման, այլ այն՝ որ զիս և զամենայն տիւ լուսաւոր պահէ, և զցայգ զօղեցուցանէ, և երբէք երբէք խաւարեցուցանէ. և իբրև խօսուն բերանով անշշուանչն բողոքէ՝ եթէ Ձեմ արժանի պաշտօն առնլոյ այլ պաշտօն հարկանելոյ։ Կամ զլուսին՝ որ ամսոյ ամսոյ հիւծանի, գրեթէ և մեռանի, և ապա սկիզբն առնու կենդանանալոյ, զի քեզ զյարութեան օրինակն նկարիցէ։ Կամ զօդ՝ որ մերթ գոչիցէ վարազացեալ՝ հրամանաւ, և մերթ սարսէ 'ի գոչելոյն՝ սասանիւ։ Եւ կամ զհուր՝ որում և զքեզ իսկ երկրորդ արարիչ կազմեաց յօրինիչն, զի յորժամ կամիցիս՝ վառիցես, և յորժամ կամիցիս՝ խափանիցես։ Կամ զերկիր՝ զոր հանապազ բրեմք,

և ցանկ կոխեմք, և զաղբ զմեր և զանասնոց մերոց 'ի նա հեղումք։ Կամ զՁուրն՝ զոր հանապազն ըմպեմք, և զանուշութիւն նոցա 'ի ժանտահոտութիւն 'ի փորն մերում դարձուցանեմք, և զներքին և զարտաքին աղտեղութիւնս մեր նոքօք արբեմք։

Այլ այսու ամենայնիւ յայտ է՝ թէ զոր առ ասուածն ունին, անարգեն շատք և անպատուեն։ Զա և զոգուն և սոսկումն ունի զարարածն, յորժամ զպատիւ արարչին որ նոցա մատուցանիցէ. և յայտ առնէ երկիր շարժելովն, և լուսաւորքն խաւարելովն, և օդքն գժդմելովն և քաւմնելով, և ծով սաստկութեան ալեացն սպառնալեօք։ Զի թէ ոչ սաստ արարչին նահանջէր զնոսա, մի մի 'ի նոցանէն բաւական էր զամենեսին սատակել՝ առ 'ի խնդրելոյ զվրէժ անարգանաց հասարակաց արարչին։ Կամ ծով ծածկելով, որ տկար աւազովն պաշարեալ՝ չիշխէ անցանել քան հրաման։ Կամ երկիր կլանելով, որ 'ի վերայ ոչնչի կայ հաստատեալ, և յոչինչ դառնալ և դարձուցանել չէ պատշաճ զիւր զբնակիչսն։ Կամ հողմապարտասեցուցանելով, որ կենդանութիւնն է ամենայն շնչաւորաց, և չիշխէ արգելուլ ըզկենդանութիւնն՝ առանց հրամանի կենդանապահին։ Կամ օդք երբեմն զառամանիսն շնչելով, և երբեմն զխորշակն բերելով. և լինէր ամենայն ինչ ոչ ինչ։

Այլ նա աւասիկ երբեմն զկառս իմն լծեալ

'ի չորից երիսարաց զաշխարհս տեսանելեմք, 'ի ջերմութենէ, 'ի ցրտութենէ, 'ի ցամաքութենէ և 'ի խոնաւութենէ. և զօրութիւն ինն ծածուկ կառավար, որ զչորս կարգեցողն ընդ միմեանս 'ի հաշտութեան և 'ի հաւանութեան պահեալնուածէր։ Ամենայն կառք 'ի համազգեաց երիսարաց լծին, բայց միայն այսց կառաց՝ որ 'ի չհամազգեաց լծեալ են. և որ 'ի համազգեացն լծեալ են՝ երբեմն սայթաքին, երբեմն օձտեն և 'ի տագնապի զկառավարն և զանձինս կացուցանեն. և երբեմն խորտակումն խակ կառացն գործեն. և յորժամ ողջ կառքն իցեն, և ողջ կառավարն, և վարժ երիսարքն, ուշ եղեալ 'ի հանդէպ երեսացն ևեթ արշաւին, և այս կառք զարմանալիք 'ի հակառակ և յանեման երիսարաց լծեալ և ծածուկ ձեռամբ ուղղեալք, ոչ 'ի մի միայն կողմն 'ի հանդէպ երեսացն ևեթ արշաւին, այլ յամենայն կողմանս վարգին, և ընդ հանուր արշաւին, և ընդ բնաւս սլանան, և ամենայնի բաւական են։ Յորժամ ընդ արևելս ընթանան, չէ ինչ արգել թէ ընդ արևմուտս ոչ արշաւիցին. և յորժամ ընդ հիւսիսս վարգին, չէ ինչ արգել թէ ընդ հարաւ ոչ սուրայցեն. զի ձեռն կառավարին քաւական է յամենայն կողմանս դիմեցուցանել, և ընդ չորս անկիւնս տիեզերաց արշաւեցուցանել։

Իսկ մարդիկ, ասեն, յանձանց ինչ ունիցին զայնպիսի շարժմունս, թէ յԱստուծոյ

լեալ լցեն, կամ թէ այլ ոք լցէ՝ որ զայն
'ի մարդիկ արկանիցէ։

ՅԱստուծոյ մարդկան այսպիսի ինչ լի-
նել՝ չթուի պատշաճ ասել, այլ ունել անձ-
նիշխանութիւն և ազատութիւն առաջնոյ
մարդոյն եղելոյ յԱստուծոյ, և 'ի նմանէն
զնոյն իւրոց պայազատացն ժառանգել։
Եւ արդ առեալ զանձնիշխանութիւն, ուստ
կամի՝ ծառայանայ, որ մեծ շնորհն պարգև-
եալ է նմա յԱստուծոյ. քանզի այլն ամենայն
'ի հարկէ ծառայէ աստուածական հրաման-
նին. եթէ զերկնից ասիցես, կայ հաստատ-
եալ և ոչ շարժի 'ի սահմանելոյ նմա տեղ-
ւոյն. և եթէ զարևգականէ կամիցիս ասել,
սակայն և նա կատարէ զզատուցեալ նմա
զշարժումն և չիշխէ խուսափել յընթա-
ցիցն, այլ 'ի հարկէ ծառայէ տէրունական
հրամանին։ Նոյնպէս և զերկիր սեղմացեալ
տեսանեմք, և բարձեալ բերէ զհրաման
հրա-
մանատուին. և զայլն ամենայն համակերտս՝
ծառայացեալս հրամանաց արարչին, և չիշ-
խեն այլ ինչ քան զայն՝ յոր կարգեցանն
գործել. վասն որոյ գոսմեմք զնոսա յաղագս
զսահմանս հրամանացն պահելոյ։

Բայց մարդոյ առեալ զանձնիշխանու-
թիւն, ուստ կամի ծառայանայ. ոչ 'ի հարկէ
բնութեան բռնադատեալ, ոչ 'ի զօրութե-
նէն՝որ նմա վասն լաւութեանց շնորհեցաւ՝
կասեալ, այլ 'ի հնազանդութենէ միայն շա-
հի զօգուտն և յանհնազանդութենէ զվնաս.

և զայն ոչ եթէ առ եղեռանէ ինչ լեալ ա-
սեմք մարդոյն, այլ վասն լաւութեանց։ Զի
եթէ իբրև զմի ինչ յայլոցն բնութեանց լեալ
է՝ որ 'ի հարկէն ծառայեն Աստուծոյ,
ապա և վարձս ընդ կամակարութեանն
առնլոյ չէր արժանի, այլ իբրև զորդի մի
էր արարչին, զոր թէպէտ 'ի չար վարէր և
թէպէտ 'ի բարի, ոչ պարտաւանք ինչ էին
նմա և ոչ գովութիւնք, այլ պատճառ այն
էր՝ որ զնա այնպէսն վարէր. նա և ոչ զլաւ
ինչ գիտէր այնուհետև մարդն, քանզի չէր
հմուտ այլ իմիք, բայց այնմ ևեթ՝ յոր պատ-
շաճեալն էր։ Այլ Աստուած այնպէս պատ-
ուել զմարդն կամեցաւ, զի առ լաւուէն
խելամուտ լինելոյ՝ զանձնիշխանութիւնն
պարգևեաց նմա, որով կարող իցէ առնել
զինչ և կամեցի, և զանձնիշխանութիւնն
նորա 'ի լաւն խրատել դարձուցանել։

Որպէս հայր որ յորժամ զորդի իւր խրա-
տիցէ՝ որ կարող իցէ ուսուցն ինչ ուսանել,
չծուլալ յուսմանէն՝ այլ յառաջադէմ լի-
նել 'ի լաւն ստիպէ. վասն զի գիտէ եթէ
կարող է յառաջադէմ լինել, պահանջէ զու-
սուցն՝ յոր աւանդեցաւ։ Նոյնպէս և զԱս-
տուծոյ պարտ է իմանալ՝ եթէ յօժարեցու-
ցանէ զմարդն անեալ հրամանաց նորա.
բայց զկամակար իշխանութիւնն ոչ հանէ
'ի նմանէ, որով կարողն է անեալ և չանեալ
հրամանացն. այլ խրատէ և յօժարեցուցանէ
զմարդն, զի լաւութեանցն ցանկացող լիցի,

որովք արժանաւոր մեծաց պարգևաց լինիցի, եթէ անապրկէ Աստուծոյ. այլ զի և չանապրոյն իշխանութիւն ունիցի. քանզի ոչ եթէ վայրապար ինչ կամէր Աստուած զայնպիսի պարգևս տալ, որ յաւիտենական աներեւոյթութիւնն է. զի վայրապար իսկ էր այնպիսւոյն տալ՝ որ ոչ ունէր իշխանութիւն երկոցունց, անապրոյ այնմ՝ զոր Աստուածն կամէր, և չանապրոյ այնմ՝ զոր նայն չախորժէր։ Բայց իրաւամբք այն է, յորժամ արժանի ըստ որոց գործեացն ոք ինչ առնուցու։

Եւ արդ զիարդ երևէր ընտրութիւն գործոցն, եթէ ոչ ունէր մարդն իշխանութիւն երկոցունց, և անապրոյն և չանապրոյն։ Եւ արդ յայտ է թէ անձնիշխան եղև մարդն՝ առնել զբարի և ժոռել 'ի չար. իբր ոչ եթէ չար ինչ առաջի կայր՝ յոր ժոռիցի, այլ այն ևեթ առաջի կայր՝ կամ անապալ Աստուծոյ կամ չանապալ, և զնոյն ևեթ պատճառ չարին իմանալ։ Քանզի լեալ մարդն առաջին՝ առնոյր պատուէր յԱստուծոյ, և չհնազանդեալ աստուածականեր հրամանին՝ ժոռաբերէր 'ի չարիս, և անտի լինէր սկիզբն չարեաց։

Արդ և զայն ևս հարցանեն, եթէ չար ինչ չկայր առաջի, ուստի օձն զոր սատանայ կոչէք՝ իմացաւ զհանգամանս չարին։

Ասեմք, եթէ սատանայ չար զատուանգանել մարդոյն Աստուծոյ իմացաւ, վասն որոյ զմարդն յայն յօժարեցոյց։ Որպէս յորժամ

ցէ որ ուրուք թշնամի, և թագուցեալ զթշնամութիւնն՝ գաղտ կամիցի վնասել, և չգիտիցէ զհանգամանս վնասակարութեանն, և շուրջ եկեալ յածիցի հնարս խնդրել. ապա գտեալ ժամանակ՝ յորժամ որ 'ի բժշկաց թշնամւոյն նորա պատուէր տայցէ յայս ինչ չհպել, և յայս ներշ կերակրոց չճաշակել, որով առողջութեանն կարիցէ հասանել, և նորա լուեալ՝ վաղվաղակի 'ի կեղծիս բարեկամութեան կեղծաւորեալ՝ զբժիշկն պարսաւիցէ, և զօջտակարսն նմա վնասակարս թելադրեալ կարծեցուցանիցէ, և հակառակ պատուէրս հրամանաց բժշկին տայցէ, և այնու առնիցէ նմա վնաս. որ ոչ եթէ յառաջագոյն գիտէր զհանգամանս վնասակարութեանն, այլ 'ի պատուիրելոյ բժշկին գտեալ հնարս՝ եղև վնասակար։ Նոյնպէս կարծի և զսատանայէ՝ նախանձելն նմա ընդ նախաստեղծ մարդոյն, և չգիտել զհանգամանս վնասակարութեանն. քանզի ոչ եթէ չար ինչ առաջի կայր՝ ուստի զհանգամանսն մարթէր առնուլ, ուստեալ Աստուծոյ պատուիրանէն՝ որ մարդոյն տուաւ արգելուլ զնա 'ի ճաշակելոյ 'ի ծնկոյ իմեքէ 'ի մահաբերէ, զայն յառաջադրեաց մարդոյն. որ ոչ եթէ անպիտան ինչ 'ի կերակուրս մարդոյ էր, և ոչ բնութեամբ առնէին մահաբեր, և վասն այնորիկ ինչ արգելաւ մարդն 'ի ճաշակելոյ 'ի նմանէ, այլ անուստութիւնն եղև պատճառ մահուան մարդոյն, իբրև յանցա-

ւորին՝ որ անցանիցէ զհրամանաւ հրամանա-
տուին՝ որ նմա կարգեալ իցէ։

Արդ ժամեցոյց թշնամին զմարդն անցա-
նել զհրամանաւն Աստուծոյ, որպէս զի ոչ
եթէ ստուգեալ գիտէր՝ եթէ այնու նմա վը-
նաս ինչ գործել կարիցէ, այլ կարծեօք 'ի
թեթուս մատուցեալ, եթէ լիցի և թէ չլի-
նիցի. և յետոյ Աստուծոյ պատուհասէն՝ որ
առ մարդն եղև վասն պատուիրանազանցու-
թեանն՝ իմացաւ եթէ պատուիրանք նորա
մահ գործեցին, և յիրաւի պատժեցան և
նա և մարդն՝ զոր յօժարեցոյց յանաստուա-
թիւնն, ճաշակել 'ի փայտէն՝ որ ոչ բնու-
թեամբ մահաբերէր, այլ Աստուծոյ սպառ-
նալեացն եղև այնպիսի իրաց պատճառ։

Եւ որպէս բժշկի ոչ կարեմք մեղադիր
լինել վասն յառաջագոյնն զգուշացուցանե-
լոյ որով օրինակաւ կարիցէ մարդն առողջ-
անալ. և նորա թողեալ զպատուէր բժշկին՝
անսայցէ թշնամւոյն՝ որ զվնասարար խրատ-
սին տայցէ նմա, որով ոչ զպատճառս վնա-
սուն 'ի բժշկէն՝ որ յառաջագոյնն գուշակ-
եաց նմա՝ իմանալի է, այլ 'ի թշնամ-
ւոյն որ 'ի պատուիրանէ բժշկին նմա զվնասն
հնարեցաւ։ Նոյնպէս և զստուգանայէ ասեմք
լեալ թշնամի մարդկան՝ որ չև ևս գիտէր
զհանգամանս չարեաց, այլ 'ի պատուիրա-
նէն Աստուծոյ ուսեալ՝ կամեցաւ վնասել
մարդոյն. որպէս զի եթէ առանց Աստուծոյ
կամաց 'ի ծառոյն ճաշակիցէ՝ առնուցու՝ պա-

տիժ զմահ։ Քանզի եթէ յառաջագոյն չէր գուշակեալ Աստուծոյ մարդոյն չուտել 'ի կերակրոյ ծառոյն, և նորա յանդէտս կերեալ, չլինէր նմա պատիժ մահ. կամ որպէս թէ առ 'ի չգիտանս եկեր, կամ թէ առ չըժուժալոյ 'ի կերակրոյ ծառոյն, չէր ինչ պատժի պարտական։ Քանզի և մանուկ կամենակեր՝ որ յայլ ինչ կերակուր մատաբերիցէ, ոչ պատժելի է՝ այլ արդարհատելի, որպէս թէ առ 'ի չգոյէ կամին յայն յօժարեաց։ 'Այս և օձն, որ է սատանայ, յիրաւի պատժեցաւ՝ վասն ընդ անագորոն թշնամութեան ընդ մարդոյն ունելոյ։

'Այս բնաւ իսկ, ասեն, յետ թիւրելոյն սատանայի և խաբելոյ զմարդն՝ ընդէր իսկ ոչ երբարձ 'ի միջոյ, զի մի զբաղումս սպանանիցէ։

Այլ եթէ չէր կարող Աստուած բառնալ զսատանայ 'ի միջոյ, քանզի չէր ամենեին տրկարութիւն զԱստուծոյ. այլ զի չէր ինչ մեծ գործ Աստուծոյ զսատանայ ինքնին անձամբ սպանանել, և զարարած մի զիւր փոքր յոչ-ինչ դարձուցանել, զի մի կարծիցի թէ վասն չժուժալոյ չարութեանն նորա սպան զնա։ Երկրորդ անգամ՝ զի անծանօթ ևս լինէր առ յապայ մարդկան Աստուծոյ բարերարութիւնն, թէ յառաջագոյն սպանանէր զսատանայ. զի ոչ որ ունէր ինչ յայտնի բարերար կոչելոյ զԱստուած։ Այլ թերևս և կարծէր ինչ 'ի մէջ մտանէին՝ թէ հա-

սատար ինչ ոչ էր նա Աստուծոյ և աճապարեաց 'ի միջոյ երարձ. զոմն որոյ պահեաց զնա, և ոչ կորոյս 'ի միջոյ, զի մարդիկ յորժամ բաւութեանցն հմուտ լինիցին, յաղթեսցեն նմա՝ փոխանակ այնոցիկ՝ որք յաւաջնու�ն յաղթեցան 'ի նմանէ։

Այն իսկ մեծ և զարմանալի է, զի մարդն Աստուծոյ՝ զառեալ Աստուծոյ օգնականութեամբն, պատերազմեալ յաղթիցէ սատանայի։ Որպէս մարտուսոյց ոք ամենայն հնարիւք հնարեալ զիւր աշակերտսն թեքել, առ 'ի ցուցանելոյ զհանգամանս մարտիցն, որով մարթիցեն յաղթել ախոյանից, և առաքիցէ զնոսա 'ի հրահանգս մրցել ընդ ախոյանսն, և յաղթութեանցն ուշ առնել խրատիցէ, մինչև զկեանս անդամարհամարհել. զի լաւ համարի թէ զոմն անուան բարիոք մեռանիցին, քան թէ կենդանի կայցեն և զատանուն լինիցին։ Եւ նոցա զթերապրութիւնս մարդապետին 'ի մոխ երդեալ, և զպարգևս ընդ յաղթութեանն, զեր 'ի վերոյ լինիցին ախոյանին, և պատկեալ առ մարդապետին հասանիցեն, և նշանակ ճգնութեան ընդ ախոյանին՝ առ նա զպատկն բերիցեն։ Ապա եթէ զմարտուսոյցն զմտաւ ոչ ածիցեն, և յաղթութեան և պատկի ոչ ցանկանայցեն, կործանին զատանուն յախոյանէ անտի. յիրաւի այնուհետև թշնամանին և ատնջին, և մահու պատիժ փոխանակ ընդ զատութեանն կրեն։

Այնպէս և զԱստուծոյ խմանալն է, թէ իւրովք պատուիրանօք վառէ զեղեցիկ ըզմարդիկ՝ առ 'ի պատկերոյ զյաղթողն, և յամօթ առնելոյ զվատացեալն. իսկ եթէ ոք յոչինչ զԱստուծոյ զպատուիրանն համարիցի, յորժամ մրցել ընդ բանաստիւնն մարտնչիցի՝ վաղվաղակի կործանի, քանզի չունի զնշանակս յաղթութեանն. և յիրաւի կրէ պատիժ պատուհասից այնպիսին, զի ոչ նմանեաց ընկերին՝ որ կառուցաւ և յաղթեաց։

Արդ վասն այնորիկ թողեալ է Աստուծոյ զսատանայ իբրև 'ի հրահանգս կառուցողաց յաշխարհի, զի յորժամ իւր նահատակեալքն կռուիցին և յաղթիցեն նմա՝ պարծանք առաջնոյ յաղթութեանն նորա քակեսցին յայժմուն յայնպիսեացն մարդկանէ, որ բաւութեանցն ցանկութեամբ պարտիցեն զնա, և նշան յաղթութեան զնահատակութեանն կանգնիցեն։ Քանզի կոխան արկեալ ընդ ոտիւք մերովք՝ անկեալ դնի մեռեալ, և կործանի՝ առ 'ի բաւութեանցն ցանկութեան մերոյ 'ի պարտութիւն մատնեալ։

Արդ-յետ այսր ամենայնի հաւանութեանց՝ յամառեալ զնոցն 'ի մէջ բերին. Ընդ թեամբ են՝ չասեն՝ արիք, և ոչ կամաձիք։

Ասեմք. եթէ ընդ թեամբ իցեն, ընդէր օրէնքն 'ի թագաւորաց դնիցին, և սատանք 'ի յիշխանաց, և պատիժք 'ի դատաւորաց. ոչ ապաքէն վասն կարձելոյ ջարեացն։ Եւս,

թէ բնութեամբ իցեն չարիքն՝ ոչ պարտի օրէնսդիրն օրէնս դնել, և ոչ իշխանն պատիժս 'ի վերայ չարագործին ածել։ Ընդէր պատժիցեն զայն՝ որ ոչ կամօքն չար իցէ, որում արդարահատելն պարտ էր, և ոչ պատիժս 'ի վերայ հատուցանել։

Եւ արդ այնպիսոյն եթէ կին շնայցէ, չպարտի մեղադիր լինել. քանզի ոչ կամաւ՝ որպէս ասեն՝ յօժարեցաւ 'ի չարն, այլ բնութեամբ բռնադատեցաւ։ Եւ եթէ որդւոյ իւրոյ սուր առեալ՝ 'ի վերայ խաղայցէ, մի լիցի նմա մեղադիր. զի ոչ իւր կամաւ երթայ, այլ չարն ասնի զնա յայն։ Եւ եթէ 'ի գրացւոյ և 'ի բարեկամէ թշնամանեսցի՝ մի փոխարէն թշնամանեսցէ, այլ առաւել արդարահատեսցէ նա. զի ոչ եթէ նա ինչ թշնամանէ, այլ չարն՝ որ բռնաբար վարէ զնա։ Նոյնպէս՝ յորժամ դուստր զմայր անարգիցէ, և նու զկեսուր իւր, և կին զայր, և ծառայ զտէր, և եղբայր զեղբայր, մի ինչ տարցին մեղք միտ՝ որք անարգեցանն, այլ արդարահատեսցեն նոցա որպէս 'ի չարէն բռնադատելոց։

Իսկ եթէ տեսանեմք՝ թէ թագաւորն զիւրոյ օրինաց վրէժս պահանջէ, և պահանջմամբ վրիժուցն զվնասն կարձէ, և դատաւորն զդոզն և զաւազակն պրկէ և քերէ՝ վասն զվնասակարութիւնն 'ի միջոյ բառնալոյ, և հայր զորդի դժնեայ մահապարտեալ՝ դատաւորաց մատնէ, և այլքն ամե-

ենքեան զիրարանձիւր զանձինքիւր զանարգանաց վրէժս պահանջեն՝ կամ անձամբ կամ իշխանաւք, յայտ է թէ չարիքն որք գործին՝ կամաձիւնք են և ոչ բնականք։ Բայց ապէ՝ զոր զկարին խակ զոր շուայլեալ ցանկութեամբ՝ պրկեա և մարակեա, տես թէ բնաւանենին գանիցի՝ ինձմա յիշատակ ցանկութեանն։ Եւ արդարև ոչ ինչ ընդ վայր ասացեալ է բան Խմաստնոյն, թէ ծառայ որ ընդ ունկն ոչ լսէ՝ ընդ միանուն ասան խնդնեմ։

Զա և յայրուստ ևս մարթեմք խմանալ, զի մարդոյ բնութիւն բարեաց ցանկացող է, և ոչ չարեաց։ Զի շուն, որ շնայ, մինչ զեռ խակ՝ ի գործ շնութեանն իցէ՝ եթէ որ շուն կոչէ զնա, բմբռնաստանայ։ պոռնիկն, որ յայտնիպոռնկի, զանուն պոռնկութեանն չաւորժէ լսել։ նոյնպէս և գողն և աւազակն, և այլ ևս չարագործքն, թէպէտ և զգործ չարագործութեանն գործեն՝ զանուն չարագործութեանն յանձն ոչ կամին առնուլ։ Զա և կեղծաւորն կեղծաւորեալ, որ մեզմեխանաւք ընկերին կամիցի փնտռտանել, թագուցանէ զկեղծաւորութիւնն, և որպէս թէ բարեաց ինչ խրատ տայցէ՝ հրապուրեալ արկանէ ընդ իշատիւք զանձեանցն։ և եթէ ոչ զբարեաց զգէ մարդեցեալ մեզմեցիցէ, չկարէ բառերիւրեալ յիրաւունց զիրաւարէն։

Զա և յորժամ զխրատ ոք իշխան կամիցի ի քաղցրութիւն ածել, չկարէ յայտ երթալ ասել՝ թէ զոր խրատ ես, այլ բաղցրա-

խառն բանիւք մատուցեալ ողոքել՝ թէ զու, ակ, քաղցր ես և բարեբար ամենեցուն, ամենեքին զոհ են զքէն, բոլորք առ իրա-ւագէտս ունին. և այնպէս կարէ մեզմով քաղցրացուցանել զխստութիւն իշխանին, և խոնարհեցուցանել ածել յիրաւն և յարժան։ Ընդ-նէս և առ ցասուցեալն և արտ-մեալն և առ նախանձոտն քաղցրութեամբ զբ մատչի և ցածուցանել. և անոր յայտ է՝ թէ բարեաց ցանկացողէ բնութիւն մարդկան, և ոչ չարեաց։

Եւ եթէ գազանացն գազանութիւն չար ինչ բնութեամբ կարծեցուցանիցէ նոցա, զիտացին՝ զի կէաքն յանուանոցն 'ի պէտս ա-բարան, որպէս և արջառ և ոչխար և ամենայն ինչ որ ուտելի է և կրելի է. և կէաքն վասն երկիւղ 'ի մեռս մարդկան ծնուցանելոյ։ Զի թէ գազանք ահագինք են, և վիշապք և օձք և այլ ձձիք վնասակարք, և մարդն այնքան հպարտացեալ է՝ մինչ ըստ Աստու-ծոյ երկիւղին սահմանս արտաքոյ ելեալ անս-տատ, եթէ այնպիսի զարհուրեցուցիչք չէին՝ որչափ ես առաւել չկայր երբէք յա-կատանի։

Դա և նոքին իսկ, որ չարքն կարծին անմատաց, երբէք երբէք օգտակարք լինին և զերծուցիչք 'ի մահուանէ։ Զի՞նչ չարքան զօձ կայցէ, և 'ի նմանէ թերիակէ. և 'ի ապա-ղող դեղոց, որք 'ի նենգութենէ մարդկան կազմեցան, չև հատուցեալ և անդէն բուժէ։

Եթէ բնութեամբ չար ինչ էր օձ, կամ չարի իրիք արարած, ապա չգտանէր ինչ ամենեին 'ի նմա օգտակար, և ոչ զգօնանայր երբէք 'ի գազանութենէ անտի իւրմէ. նա առանիկ տեսանեմք 'ի հնարագիտութենէ թռչաց զգօնացեալ, և իբրև զչուան խաղալիկ է նոցա, և բազում անգամ բնակեալ 'ի տան՝ չմերձանչեն բնակչացն։

Այդ եթէ գազանք չարի արարածք էին, և երկիր բարւոյ, ծախել պարտ էր ըզնոսա երկրի՝ և ոչ սնուցանել, սպառել և ոչ սերել. ապա եթէ երկիր և զգազանն սնուցանէ և ոչ սպականէ, յայտ է՝ եթէ յորմէ արարչէ երկիր լեալ է, 'ի նմանէ և գազանքն արարեալ են. և չիք ինչ չար բնութեամբ. քանզի չիք ինչ չար արարիչ բնութեամբ։ Եւ մանաւանդ թէ և գազանք իսկ, զորոց ասեն՝ թէ 'ի չարէ արարչէ եղեալ են, ցուցանեն թէ չեն ուստեք՝ այլ յերկրէ, այնուզի յերկրէ կերա՛ին և 'ի նմա բնակեն, և անդրէն 'ի նոյն շրջեալ հոգանան։

Զա թէ և 'ի չարէ ինչ էին չարք արարեալք, ոչ ինչ 'ի նոցանէ օգտակար գտանէր, այլ ամենեին իսկ վնասակար։ Իսկ արդ եթէ տեսանեմք, զի կիսոցն մարթքն պատապարան մերկութեան մերոյ լինին, և կիսոցն ճրագուն դեղեղի լինի, և այլ ինչ յանդամոցն, որպէս առիւծուն և արջոյ և այլոցն՝ ըստ իւրաքանչիւր մի ըստ միոջէ, 'յայտ է՝ եթէ 'ի բարւոյ արարչէ լեալ են, վասն մի-

ոյ իրիք օգտակարին գտանելոյ 'ի նոսա։ Զի որ չար ինչ է, նորա և ամենայն ինչ վնասակար է, և մորթ և միս. այլ նոցա որպէս զմորթն զգենուցք, և ոչ վնասէ, և զմիսն եթէ սիրտ ուրուք առնոյր և ուտէր՝ ոչ վնասէր. որպէս վարազի՝ որ գազանագոյն է քան զամենայն գազան՝ ուտի միսն, և ոչ վնասէ. նոյնպէս և նոցայն, եթէ ուտէր ոք՝ չվնասէր։

Եւ յարիշաւ, զոր ասեն՝ եթէ 'ի բարեոյ արարչէ արարեալ է, գտանի ինչ վնասակարութիւն։ Զոլոր միս ուտել՝ գարման է մարմնոյ, բայց եթէ զարիւնն ոք ըմպիցէ՝ սատակի։ Նոյնպէս և 'ի բանջարս է ինչ՝ որ առանձինն սատակիչ է, և խառնեալ ընդ այլ բանջարս՝ բժշկիչ պէսպէս ցաւոց լինի։ Զմանրագոյն եթէ ոք լոկ ուտիցէ՝ սատակիչ է, և խառնեալ ընդ այլ արմատս՝ քնաձու լինի քնահատաց։ Եւ զհազար՝ եթէ 'ի տօթ ժամանակի ուտիցէ ոք, քանզի զովացուցիչ է, զտապս 'ի փորոյն փարատէ. և եթէ 'ի հով ժամանակի ուտիցէ ոք, վնասէ. և եթէ զջուրն քամեալ անապակ ըմպիցէ ոք, սատակի. և եթէ զսերմն աղացեալ՝ ջրով ըմպիցէ ոք, 'ի ցանկութենէ արկանէ։ Եւ կանեփուկն թոյփ ինչ է, որոյ սերմն նորա գեղ է, և նոյն դարձեալ կասեցուցիչ ցանկութեան։ Եւ մոլախնոտ, որ առանձինն 'ի յայտնի ինչ ժամանակի ապանող է, նոսիմբ զմաղձս հնացեալս հնարին բժիշկք հատա-

նել։ Եւ կազանչանան ազգ ինչ՝ առանձինն ապանող է, և խառնեալ ընդ այլ գեղոյ՝ մաղձապղող է բուժից 'ի մահուանէ։

Արդ այսպիսի իրս անհարթս առ ոչ ուղիղ հայելոյ, կարծեցին եթէ չար ինչ բնութեամբ իցէ. բայց Աստուած այսպէս իմաստուն զմարդն կազմեաց, զի և 'ի գարմանիչն մարթիցէ վայելել. և որք վնասակարքն կարծիցին, և անտի ևս հնարիւք օգտակարութիւնս կարիցէ գտանել, առ 'ի յանդիմանելոյ զբարս անմտացն՝ թէ չիք ինչ որ բնութեամբ չար է։

ԲԱՅՑ թէպէտ և նոքա աստուածական օրինացն ոչ հաւատան, մեք յուզղորդ պատասխանեսցուք զմեր ընտանիս մի զրկեսցուք։

Այնչափ ինչ չար 'ի գազանացն բնութեամբ ոչ գոյր, մինչև ածեալ զնորարարսն առ նորատեղծն՝ նմա նոցա անուանս հրամայէր դնել. և եթէ մօտ ոչ գային, զիարդ միոյ միոյ բառ իւրաքանչիւր ազգաց անուանս յօրինէր. ապա եթէ մօտ գային, և բնութիւն ընդ մարդոյն ունէին, յայտ է՝ թէ ոչ չարք էին, և ոչ մարդոյն վնասակարք. այլ յետ յանցանելոյ մարդոյն զԱստուծոյ պատուիրանսն՝ ուստի նմա զարհուրեցուցիչք առ 'ի չհպարտանալոյ հոգեղինին՝ որ 'ի հողոյ եղև, և 'ի հող դառնալոց էր։

Եւ առաջնոյ չվնասակարութեան գազանացն մարդոյ՝ այժմու համբոյրս և բնութիւնս վկայեն։ Զի ոմն զգայլոյ կորիւն

անուցանէ, և իբր զշան կորիւնս առ ընտ-
լութեան ընդ անձնականին։ Եւ միւսն զա-
ռիւծու կորիւն սնուցեալ՝ ածէ 'ի համբոյր
և 'ի բծին, մինչև պատել զսնուցանելեաւն.
և եթէ այլ ոք 'ի նա հուպ գայցէ, չմոռացե-
ալ զբարս գազանութեանն 'ի վերայ յարձ-
ակի. և նորա սասեալ գազանին իբր շան,
ցածուցանէ յանսասս գազանութենէն։ Եւ
այլ ոք զարջոյ թոժիւն սնուցեալ՝ կաքա-
ւիչս ուսուցանէ, և նմանեցուցեալ բարուց
մարդկան՝ զգազանաբարոյն ցածուցանէ։
Եւ այլ ոք զկապիկս անապատական ըմբռ-
նեալս՝ հոպիտս 'ի ընչապտուկս և ամենաչար
ուսուցանեն։ Եւ այլոց զբարբս իգակերպս
կալեալ թռչնութեամբք յընտերութիւն
մարդկան ածեն, ջրեցուցեալ զթոյնսն սպա-
նողս։

Արդ եթէ չար ինչ էին գազանքն բը-
նութեամբ, չէր հնար վնասակարացն ընդ
իւրեանց վնասակարին ընտերութիւն ունել։
Եւ եթէ զխորշակս և զսառնամանիս 'ի վնա-
սակարութեանն 'ի չարէ արարչէ կարծիցեն,
զիտացեն, եթէ ոչ ձիւն և սառամա-
նիք պնդէին զլերինս, արմատք խոտոց ոչ պա-
տարէին. և եթէ ոչ ոսթ ջեռուցանէր զան-
դամսն, պտուղք ոչ հասանէին։

Եւ արդ քանզի անմարմինք են հրեշ-
տակք և դեւք, յայնմակս և ծնունդք ոչ գոն
նոցա։

Այլ, ասեն, համբարուց ծնունդք գոն

և մեռանին։

Այս զայն տեսցուք, թէ բնաւ գու-
ցե՞ն այլ ինչ արարածք բանաւորք քան
զհրեշտակս և զդևս և զմարդիկ. և ապա է-
կեսցուք յայնր 'ի քնին, թէ իցե՞ն 'ի դիւաց
կէսք մարմնաւորք և կէսքն անմարմինք։
Զի չիք ինչ արարած բանաւոր արտաքսքան
զայս երիս ջոկս, զհրեշտակաց, զդիւաց, և
զմարդկան, յամենայն ասուածատուր գրոց
և 'ի բնութենէ արարածոց յայտնի է։ Բայց
թէպէտ և ասին ինչ անուանք 'ի գրոց յուշ-
կապարկաց կամ համբարուաց կամ պարկաց,
ըստ կարծեաց մտաց մարդկան ասին, և ոչ
ըստ բնութեան. քանզի դիւաց է կերպարանս
կերպարանս ցուցանել, և մարդիկ ըստ կեր-
պարանացն անուանս դնեն. որպէս յորժամ
քաղաքք և գիւղք աւերեսցին, և անդ գեք
բնակիցեն, և կեղծս 'ի կեղծս յայտնիցին, և
մարդկան ըստ կեղծեաց նոցա անուանս եղ-
եալ՝ զոմն յուշկապարկ, զոմն պարկ, զոմն
համբարու կոչիցեն. նոյնպէս և գրոց ըստ
մարդկան կեղծեացն եկեալ՝ առ 'ի նշանա-
կելոյ զասատուութիւն աւերածի աշխարհին,
յուշկապարկաց ասեն բնակել յաւերակսն,
զոր յոյն լեզու իշացուլս ասէ։

Ուրդ ցուցցեն թէ դատանիցի՞ն իշացուլք
'ի Բաբելոնի. ապա ուրեմն յայտ է՝ եթէ
անուանք առանց անձանց են յուշկապար-
կաց և իշացլուց. և գիրք ըստ սովորութեան
մարդկան կարծեաց եկեալ, նոյնպէս անուա-

նեցին՝ առ 'ի զաւերն Բաբելոնի նշանակելոյ, իբրև զծովացուլն՝ զոր 'ի կովէ եղեալ ասեն, և զպայն իմն 'ի մարդկանէ, և զառլեզն 'ի շանէ. և այնոչ եթէ անձինք ինչ են, այլ անուանք զբանդատանաց, և բաղդատանք մոլորելոց մտաց 'ի դիւաց։ Զի 'ի մարմնաւորէ աներևոյթ ինչ ոչ երանէ, որպէս ոչ յաներևոյթէ իմեքէ մարմնաւոր. ոչ երբէք 'ի մարդկանէ եղեալ պայն՝ եթէ առ երես արարած իցէ, և ոչ 'ի կովուց ծովացուլն եղեալ՝ եթէ 'ի ծովակս բնակիցէ։ Զի մարմնաւորի չէ հնար՝ թէ 'ի ջուրս կեցցէ, որպէս և ոչ ջրականին՝ թէ 'ի ցամաքի կեցցէ. և ոչ 'ի շանէ ինչ եղեալ, եթէ ընդ աներևոյթ զօրութիւնս ինչ կեցցէ, և՝ յորժամ վիրաւոր ոք անկեալ 'ի պատերազմի դնիցի՝ թէ լիզիցէ և ողջացուցանիցէ, զոր արալէզն կոչեն. այլ ամենայն՝ առասպելք են, և պառաւանց դրդչիւնք, և մանաւանդ թէ 'ի դիւաց իսկ մոլութենէ։

Այլ և վիճեալ ևս պնտին 'ի բանիցն վերայ։ Մին ասէ՝ թէ 'ի մերում գեղ ծովացուլ զկով գործեաց, և զգոչիւնն հանապազ մեք լսեմք ամենեքեան։ Եւ միւսն ասէ. Զպայն իսկ իմ աչօք տեսեալ է։

Այ՝ թէթ և զարալիզէ՞ն ևս ոք կարիցէ ասել՝ թէ և զայն ուրուք տեսեալ իցէ. և թէ յառաջին ժամանակսն արալէզք լիզէին զվիրաւորս և ողջացուցանէին, արդ ընդէ՞ր ոչ լիզիցեն և ողջացուցանիցեն. ոչ նոյն պա-

սերազգաւոր են, և նոյնպէս վիրաւորք անկանին։

Զ. Յ յայնժամ, ասեն, գիւղացիք էին։

Զ. Սիր զգիլն իսկ պահանջեցուք 'ի նոցանէ։ Պարիսաւորք էին արդեաք գիլն, թէ անմարմին։ Եթէ մարմնաւորք էին, յայտ է թէ մարդիկ էին, և զմարդկան ուրուականս 'ի պաշտան առեալ՝ գիս անուանէին։ ապա եթէ անմարմինք էին, չէր մարթ անմարմնոցն ընդ կանայս մարմնաւորս ամուսնանալ։ Զի եթէ այնմ հնար ինչ էր, ոչ երբէք դադարէր սատանայ 'ի կանանց սատանայածին ծնուցանել։ զի որ անմարմին ոգի է, նա և անսերմն է։ զիսն զի սերմն մարմնաւորաց է, և ոչ անմարմնոց։ և առանց սերմանն 'ի կնոջէ ծնանել միւս ինչ և եթէ մարթ եղլի՝ որ արարիչն է բնութեան մարմնոյ։ և որպէս կամեցաւ, կարող եղլի 'ի կուսէ ծնանել առանց ամուսնութեան։

Ուստի ամենայն իմաստունց արուաքնոց յիւրաքանչիւր գիլն ակարութիւն հայեցեալ, շիշխեցին ասել՝ թէ 'ի կնոջէ որ առանց ամուսնութեան ծնաւ։ Եւ որպէս ոչ գոն ծնունդք գիւաց, նոյնպէս և ոչ մահ։ թէպէտ և անմահ բնութեամբ Աստուածութիւնն եթէ է՝ որ մշանջենաւորն է, և ոչ յուժէ առեալ սկիզբն լինելոյ, այլ և սկզբնաւորաց գրն և բանաւորաց պարգևեաց անեղծ զանմահութիւն, զհրեշտակաց և զդիւաց ասեմ, և զոգւոց մարդկան։ Յորոց մարդիկ,

քանզի յերկուց բնութեանց են 'ի մարմնաւորաց և յանմարմնոց, յիրաւի սերմն ծննդեամբ, և զան յաճուն ամուսնութեամբ. և մեռանին մարմնովք, և ոչ ոգւովք, վասն պատուիրանազանցութեանն։

Այլ հրեշտակք և դևք ոչ յաւելուած ծննդեամբ առնուն, և ոչ պակասութիւն մահուամբ. այլ որպէս հաստատեցան՝ նոյնպէս և նոքին թուով կան, առանց յաւելուածոյ և նուազութեան։ Եւ ոչ այլ ինչ արարած զոյ՝ որ կարիցէ 'ի կերպարանս կերպարանս լինել, որպէս զվիշապացն և զնհանգացն համբաւեն. այլ միայն հրեշտակք և դևք՝ որք կարող են զօրս գնդել և պարզել, և ազգի ազգի կերպարանս երևեցուցանել։

Այլ և վիշապք, ասեն, և նհանգք կեղծս 'ի կեղծս լինին. յորոց մին անձնաւոր է, և միւսն ոչ անձնաւոր։

Վիշապն՝ որ մարմնաւոր է, զիւր կերպարանն ոչ կարէ փոխել։ Զի եթէ հնար ինչ էր մարմնաւորաց զկերպարանս փոփոխել, նախ մարդ՝ որ առաւել քան զնոսա է՝ փոխէր զկերպարանն յինչ և կամէր. այլ որպէս մարդոյ ոչ է հնար փոխել 'ի կերպարանս ինչ՝ յոր և կամիցի, նոյնպէս և ոչ վիշապին։

Այս և ոչ նհանգ ինչ անձնաւոր զոյ, բայց եթէ դև 'ի տեղիս բնակեալ իցէ, և մերթ կերպարանիցի, և մերթ ինչս գործիցէ։ Եւ ոչ վիշապք զառհմանս ապրեանց

կրեն, և ոչ գրաստ գոյնոցա՝ եթէ զարդեն-
նրա 'ի կարոց ուրեք կրեցեն, և 'ի գուբ էկաչ
կաքն ասել ուժեք 'ի կարս՝ և ոչ ամ ամ։ Զի
վիշապն որ ինքն գրաստ է, այնու զի անա-
սուն և անխօսուն է, զիա՞րդ՝ որ ինքն գրաստ
է՝ զայլ գրաստ փարեցէ. զի վիշապի այլազգ
ինչ բնութիւն չէ՝ եթէ ոչ օձի, այն յայտ
իսկ է։ Եւ զօձ յաղթանգամ, կամ զգազան
ինչ ծոփածին, կոչեն գիրք վիշապ. որպէս
զմարդ յաղթանգամ հսկայ անուանեն, նոյն-
պէս և զօձ ցամաքային անձռուն, և զգա-
զանն ծոփական լեռնաձև, զկիսացն ասեմ և
զգերփինաց, վիշապս անուանեն. բաց այնմ՝
թէ Դու Ջախջախեցեր զգլուխ վիշապացն
'ի վերայ ջուրց, և եղուր կերակուր ժողո-
վրդոց Եթիոպացւոց։

Նեսանե՞ս, զի զձկունս մեծամեծս ծո-
փածինս՝ վիշապս կոչեն գիրք. և յայտ անտի
է՝ թէ զձկանց ասէ, այնու եթէ Եղուր կե-
րակուր ազգաց Եթիոպացւոց. թէպէտ և
սատ այլք 'ի սատանայ առակեցին զվիշա-
պքն, որպէս և զայն՝ զոր Յոբն գրեալ է։ Եւ
այլ ինչ ոչ են վիշապք՝ բայց կամ օձք մե-
ծամեծք ցամաքայինք, կամ ձկունք անարիք
ծոփականք. զորոց ասեն, թէ լեռնաբերձք
և մեծամեծք են. և որս և կերակուր նոցա
մանր ձկունք են, որպէս և օձից մեծամե-
ծաց մանր մանր ինչ ձագիք կամ անասունք։
Եւ ոչ որս երբէք՝ որպէս մարդկան՝ արար-
եալ են վիշապաց, կամ առնիցեն. և ոչ տա-

Հարք իրրև մարդկան են նոցա 'ի բնակութիւն. և ոչ ոք 'ի թագաւորազգեաց և 'ի դիւցազանց ունին կապեալ առ իւրեանս կենդանի. զի կենդանիք 'ի մարմնաւորաց երկու և եթ կան, Ենովք և Եղիա։

Այլ որպէս զԱղեքսանդրն խաբէին զեք թէ կենդանի կայցէ, որոց ըստ եգիպտական հնարողութեանն կապեալ արկեալ կախարդանօք զգև 'ի շիշ, կարծեցուցանէին թէ Աղեքսանդրոս կենդանի իցէ և մահ խնդրիցէ. և գալուստն Քրիստոսի խայտառակեաց զնաբէութիւնն, և երարձ 'ի միջոյ զգայթակղութիւնն։ Նոյնպէս և մոլորութիւնն դիւաց խաբեաց զդիւցապաշտս Հայոց, եթէ զոմն Արտաւազդ անուն արգելեալ իցէ դիւաց, որ ցայժմ կենդանի կայ, և նա երանելոյ է և ունելոյ զաշխարհս, և 'ի անոտի յոյս կապեալ կան անհաւատք. որպէս և Հրեայքն՝ որ 'ի զուր ակնկալութիւն կապեալ կան, եթէ Դաւիթ գալոց է՝ շինել զԵրուսաղէմ և ժողովել զՀրեայս, և անդ թագաւորել նմա նոցա։

Եւ այնպէս Ջանայ սատանայ՝ զի զամենայն որ 'ի բարւոք ակնկալութենէ վրիպեցուսցէ, և 'ի անոտի յոյս կապիցէ։ Մեծացուցանէ յաչս մարդկան զվիշապս, զի յորժամ ահագինք երևեսցին ոմանց՝ առնուցուն զնոսա 'ի պաշտօն։ Կարծեցուցանէ թէ և նհանգքն ինչ իցեն գեռաց, և շահապետք վայրաց. և յետ կարծեցուցանելոյ՝ ինքն կեր-

պարանի կամ 'ի վիշապի կերպարանս կամ 'ի նհանգի իմն և 'ի շահապետի, զի այնու ըզմարդն յիւրմէ արարչէն թիւրեսցէ։ Զի եթէ էր ինչ նհանգն անձնաւոր, ոչ երբեմն 'ի կնոջ կերպարանս երևէր, և երբեմն փոկ լինէր և լուզորդաց ընդ ոտս անկեալ՝ հեղձուցանէր. այլ կամ կիներն կին կայր, կամ փոկն փոկ։

Նոյնպէս՝ և զոր շահապետ վայրաց կոչեն, ոչ մերթ մարդ երևէր և մերթ օձ, որով և զօձապաշտութիւնն հնարեցաւ յաշխարհ մուծանել։ Նոյնպէս և վիշապն ոչ մի անգամ օձաձև երևէր, և միւսանգամ մարդակերպ, որպէս յառաջագոյնն իսկ ասացաւ՝ թէ որ մարմնաւոր ինչ է, յայլ կերպարանս չկարէ փոխել։

Այլ թէ 'ի կալս ջորիք և ուղտք երևիցին՝ գիւաց կերպարանք են այն, և ոչ վիշապաց. և եթէ 'ի դաշտս երագազանք ձիգիցին, և հեծեալք իբրև զմարդիկ զհետս երէոյ արշաւիցեն, կեղծիք գիւաց են և ոչ ճշմարտութիւն ինչ իրաց. և եթէ 'ի գետս 'ի կանաց ինչ 'ի կերպարանս երևիցին, սատանայի կերպարանք են։ Քանզի նհանգ ինչ անձնաւոր չիք, և ոչ 'ի մարդ իբրև զգև մտանէ վիշապ, որպէս ոմանք 'ի շչելոյ գիւահարին կարծեցին, քանզի մարմնաւորի 'ի մարմնաւոր չէ հնար մտանել։ Եւս եթէ բառնայցի 'ի վեր այնպիսի վիշապն, ոչ եթէ եզամբք ինչ անուանելովք՝ այլ ծածուկ զո-

բուլթեամբ իւիք յԱստուծոյ հրամանէ, զի մի շոգին մարդոյ կամ անասնոյ մեզանչիցէ. որպէս որ բասիլիսկոսն կոչի ազգ ինչ օձիցն հայելով միայն սատակէ զմարդ կամ զանասուն. ուստի յորժամ 'ի ջրհորս գտանիցի ճրագ առեալ ինչանեն 'ի ներքս ըմբռնել, զի հայեցեալ ընդ ճրագն ոչ մեզանչիցէ մարդոյն օձն։

ՀՐԱՄԱՆԱՒ, ասեն, մեռանիցին մարդիկ, թէ առանց հրամանաց։
Նախ պարտիմք գիտել՝ թէ զի՞նչ հրամանքն իցեն, և ուստի բան հրամանացն ընդ աշխարհ տարածեալ իցէ։

Բրաման կապեալ վասն մահուան՝ յատուածատուր գիրս ոչ ուրեք գտանեմք. քանզի Տէրն մահու և կենաց՝ և կարձել իշխէ զհրամանն իւր և երկայնել։ Որպէս առ Ջրհեղեղաւն ասէ. Եղիցին աւուրք կենաց մարդկանս այսորիկ հարիւր և քսան ամ. և վասն բազմութեան անօրէնութեանն պակասեցոյց 'ի նոցանէ զքսանն։ Եւ որպէս առ Ադամամքն ասէր, Յաւուր յորում ուտես 'ի պտղոյ ծառոյն, 'ի նմին մեռանիս. և առ իւրում բարեբարութեանն, և վասն որդեծնութեան և մարդկան յաշխարհի սերելոյ, ներեաց նմա ինն հարիւր և երեսուն ամ, զի մի գեղեցիկ ստեղծուածն իւր համօրէն ջնջեսցի։ Եւ վասն արտասուացն Եզեկիայի աբբայի՝ յաւելաւ նմա հնգետասան ամ։ Եւ վասն ապաշխարութեան Նինուէացւոցն՝

ոչ կորոյս զքաղաքն յաւուրն երրորդի ըստ քարոզութեան մարգարէին Իւրոյ։

Եւ ոչ որպէս քաւդեայքն աստեղանըշմարք, որ և զծննդոց պատճառս և զմահուանց՝ յաստեղացիբրև 'ի կենդանեաց դնեն։ Որպէս թէ յորժամ ծնանիցին, անդէն և մահուանքն իւրաքանչիւր ուրուք անվրէպ սահմանիցին. և ըստ այն ոչ յառաջել ումեք մեռանել հնար իցէ, և ոչ յամենալ։

Այլ յանդիմանեն զնոսա և պատերազմացն դէպք. զի 'ի միում աւուր բիւրք բիւրուց մարդկան կոտորին այլ և այլ տիւվք, կէսք մատաղօրեայք, և կէսք երիտասարդք, և այլք 'ի կատարեալ հասակի ծերութեան. որոց ծնունդքն 'ի միում ժամու չէին, և մահքն 'ի միասին եղանին։

Եւ դարձեալ՝ թէ յաստեղաց էին պատճառք ծննդոց, ընդէ՞ր 'ի Հնդիկս ոչ ոք երբէք սպիտակ ծնաւ, և ոչ յայլ աշխարհս այնպիսի ինչ երևակ. մի՞ թէ ա՞նդր միայն ոչ եհաս աստղն սպիտակարար, և ոչ յայլ աշխարհս աստղն սևագործ։ Եւ ատամունքն հնդկին ուստի՞ իցեն այնչափ սպիտակ։

Դարձեալ բախտաւորութեանց և չուառութեանց՝ զաստեղսն դնեն պատճառս. որպէս թէ աստեղատունք ինչ իցեն, և ըստ դիպելոյ պատճառաւորաց աստեղացն յաստեղատունսն՝ նոյնպիսիք և ծնունդքն լինիցին։

Մինչդեռ առիւծն, ասեն, յաստեղաստանն իցէ՝ և ծնանիցի ոք, թագաւոր լինելոց է. և մինչդեռ եզն է և ծնանիցի ոք, հզօր և բարենշան գալոց է. և մինչդեռ խոյն է՝ և ծնանիցի ոք, մեծատուն լինելոց է, և որպէս նայն թաւ և ասուեղ է. և յորժամ կարիճն է՝ և ծնանիցի ոք, չար և մեղանչական լինելոց է։ Այլ այլքն ևս այլոց ազգի ազգի իրաց պատճառք լինին։ Որպէս թէ յորժամ Կռոնոսն յաստեղատուն մտանիցէ, թագաւոր մեռանի. որ եղեն իսկ երկիցս, որպէս ասեն, առ Թէոդոսիս կայսերբ. և քաւդեայքն պնդեալ էին՝ թէ մեռանի թագաւորն, և նա ոչ մեռաւ, զի յամօթ լիցի սափատուտ արուեստագիտութիւնն։

Արդ նախ զայն ասասցեն. ո՞ եհան զայնպիսի երկրական անուանս՝ զգիշակեր և ըզխոտակերս յերկինս, զի պատճառք ծննդեան մարդկան լինիցին. զի որ ոք ուրուք պատճառ ծննդեան կարիցէ լինել, նա 'ի վերքան զնա՝ որոյ պատճառն է՝ պարտի լինել իմաստութեամբ։ Արդ հասարակաց մտօք հայեցեալ, տեսցուք ո՞'ի վեր իցէ, մարդն՝ որ անասնոյն տիրէ, թէ անասունն՝ որ մարդոյն 'ի հարկի կայ. և ոչ միայն 'ի հարկի կայ, այլ և կերակուր նորա է։ Այլ գազանացն զկէսն փախստականս եղեալս տեսանեմք, և զկէսն յանտառախիտ մայրիս ամրացեալս՝ յորժամ զբարբառ միայն մարդոյն լսիցեն։ Քանզի զահ և զերկիւղ մարդոյն՝ արկեալ է արար-

չին 'ի վերայ գազանացն և սողնոցն և անասնոցն և թռչնոց, վասն առաւել զնա պատուելոյն. զորոյ և զարարածն նորանշան ինն ընծայեցուցանէ, թէ ստեղծ որպէս ձեռօք, և փչեաց շունչ կենդանի որպէս թէ բերանով. և այնու, զի առաւել պատուական ցուցանիցէ զնա յայտ առնէ։

Այլ զի Աստուած 'ի յօդ ապատ մարմնոց 'ի վեր է, այն յայտնի է ճշմարտից։ Այլ եթէ վասն նորա եղեն գազանքն և անասունքն, որպէս փորձ իրացն իսկ ցուցանէ, զիարդ էր՝ զի յերկինս եղանէին և մարդկան ծննդեան պատճառք լինէին. որք այնչափ հեռի են 'ի կենդանուութենէ, որչափ ճրագ մի՝որ 'ի մարդկանէ կազմեալ իցէ լուսաւոր լինել տան 'ի գիշերի։ Այլ չկենդանիքն զիարդ կարիցեն կենդանեացն պատճառ ծննդեան լինել։

Այլ թէ չէին կենդանիք, ասեն, և ոչ գնայուն էին. բայց զի գնան, յայտ է՝ թէ կենդանիք են։

Արդ լուիցեն. եթէ ամենայն ինչ որ գընայուն է՝ կենդանի իցէ, ապա եկջուրք որ գնան՝ կենդանի համարեսցին. և կրակ վասն շարժելոյն՝ կենդանի կարծեսցի. և օդք և հողմք վասն շնչելոյն՝ կենդանի հաշուեսցին. և առնկք և խոտոց բոյսք, որ թէպէտ յամրագնացք են, սակայն աճելովն երևին՝ թէ գնայուն են. և արդ որպէս ոչ ամենայն գնայուն՝ կենդանուութիւն մատուցեալ և բանաւոր ունի, նոյնպէս և ոչ արեգակն, և ոչ

լուսին և աստեղք, և ոչ երկինք իսկ՝ ընդ որով նոքա շրջին՝ կենդանութիւն ինչ մտաւոր և բանաւոր ունին։ Այլ երկինք և երկիր անօթք ետեղակալք են հաստատեալք յարարչէն, ունել ամփոփ ընդ ինքեամբ զամենայն՝ որ 'ի միջի նոցա է. և լուսաւորքն իբրև ճրագունք լուցեալք, վասն զխաւարն 'ի միջոյ մեծի տանս փարատելոյ։ Այլ են հարկաւորքք բնակաւորքք, հրամանաւ արարչին իւրեանց, 'ի վայելս ամենայն կենդանեաց. և իւրեանց ինքեանք չեն, քանզի ոչ գիտեն՝ թէ լցեն և թէ չլցեն։ Որպէս և երկինք և երկիր և ջուրք և փայտք և քարինք են վասն որոց եղեն, և իւրեանց ինքեանք չեն. քանզի ոչ գիտեն՝ եթէ լցեն և եթէ չլցեն, այնու զի չեն մտաւորք և բանաւորք։

Դարձեալ, որպէս ասեն, թէ յորժամ առիւծն լցէ յաստեղատանն՝ թագաւոր ծընանելոց է. թէ այնպէս էր, բազում անգամ բազում թագաւորաց պարտ էր ծնանել. զի ոչ մի միայն ծնանի՝ յորժամ առիւծն յաստեղատանն լցէ, այլ բազումք։

Այլ եթէ արդարև առիւծն էր պատճառ ծննդեան թագաւորաց, ապա ոչ թագաւորի որդի թագաւոր լինէր, այլ ոյր ուրուք և դիպէր ծնունդն մտանելոյ առիւծուն յաստեղատունն։ Իսկ եթէ տեսանեմք՝ եթէ թագաւորի որդի թագաւոր լինի, որպէս Դաւթայ որդի Սողոմոն 'ի հօրն աթոռ նստաւ,

և նորա որդին 'ի նորա աթոռ. և մի ըստ միոջէ կարգ թագաւորացն Յուդայ ձգեցաւ մինչև զՄակաբէացիսն։ Նոյնպէս զԱսորեստանեայցն և զԲաբելացւոցն՝ որդի 'ի հօրէ առնուին կարգաւ զթագաւորութիւնն։ Որպէս և 'ի Սասանայն ուժեմնէ՝ Սասանականքն որդի 'ի հօրէ կարգաւ առին մինչև ցայսօր զթագաւորութիւնն Սասանականացն. և չգտաւ առիւծն յերկինս մոռեալ յասուզատուն. զի զթագաւորութիւնն յայլ ազգ ուրեք կարասցէ փոխել յերկրին Արևելից։

Եւ յայտ է՝ թէ որպէս թագաւորութեան չէ ասողն պատճառ, նոյնպէս և ոչ զօրութեանն, և ոչ մեծատուն առնելոյ. մանաւանդ իսկ զի տեսանեմք զմեծատուն աղքատացեալս, և զաղքատս մեծացեալս։ Մի թէ զայն ևս կարիցեն ասել՝ թէ մի ևնոյն ասող մեծուն և աղքատութիւն կարէ պատճառք լինել, և զօրութիւն և տկարութիւն. քանզի և ըզհզօրս երբէք երբէք տկարացեալս տեսանեմք, և զտկարսն զօրացեալս. և զչարսն զգօնացեալս, և զգգօնս չարացեալս։ Եւ ուր իցէ այն, զոր ասեն, եթէ որ ինչ 'ի ճակատագրին գրեալ է հրամանացն, այնմ չէ հնար վրիպել. այլ որ փառաւորն գրեցաւ՝ փառաւոր է, և որ չուառն՝ չուառ. և ուր հրամանքն իցեն և յումմէ հրամանքն, ըստ այնմ և մեռանին. և վրիպել չէ հնար 'ի սահմանելոյ հրամանէն։

Ո՛ հրաման տկար, և անզօր սահման, զոր և գողքն և աւազակքն կարեն խախտել, յորժամ 'ի վերայ հասեալ՝ զոմն յընչից և յարևէ արկանիցեն։ Եւ եթէ 'ի սահմանելոյ ինչ հրամանէ իրքն գործիցին, չէ պարտ՝ ոչ թագաւորաց մահու հրաման տալ, և ոչ դատաւորաց քերել և սպանանել զմարդասպանն. որք զպատուհասն 'ի վերայ ածելով յայտառնեն՝ թէ ոչ ըստ սահմանելոյ ինչ հրամանացն եղանին մեղքն մեղանչականացն, այլ 'ի բռնաւորութենէ չարագործութեանն։

Եւ կամ յորժամ հէն յաշխարհաշաւիցէ՝ տեռապերծ առնել և կոտորել զմարդիկ, մի զօրս ժողովեսցեն, և մի գունդս առ գունդս կազմեսցեն՝ հանելոյ զհէնն յաշխարհէ. այլ իրաւունս տացեն՝ թէ Հրամանք են աշխարհին 'ի հինէ կոտորել, մեք ընդէր դառնայցեմք ընդդէմ հրամանացն. այլ գումարելով զզօրսն և հանելով զթշնամին յաշխարհէ, ցուցանեն՝ եթէ ոչ ըստ սահմանելոյ ինչ հրամանի կոտորածքն գործիցին, այլ 'ի բռնաւորութենէ հինին՝ որ եկեալ ժլատութեամբ կոտորէ զաշխարհ, և մերկանայ յընչից և յստացուածոց։

ԱՒՏՏ յայտ է՝ թէ Ստուած զգործուածն ամենեցուն գեղեցիկ գործէ, և 'ի բարութիւն և 'ի չարութիւն դառնալոյ զանձնիշխանութիւնն արար կամակար, զի յոր կողմն և կամիցի՝ կարող իցէ դառնալ։

և ըստ գործոցն և զհատուցումն նոյնպիսի առնուցու. և մի իբրև զանասուն վարիցի, որոց ոչ գործք ինչ բարիք կան, և ոչ հատուցման ակնկալութիւն, այնու զի անասունն է, և չգիտէ ընտրել զչար 'ի բարւոյ խորհրդիւ, բայց 'ի բնական բարուցն. որովք յիշատակօք միայն վարի յօգտակարն, և խորշի 'ի վնասակարէն։

Յորս են և ազգ մուն ինչ բնականք՝ որովք հանդերձելոց իրիք իրաց ազդ լինիցի նոցա. որպէս ձիոյն՝ 'ի սմբակէն վարելոյ. և եզինն՝ ձմերանի ընդ ալուց կողմն նստելոյ, և մօտ 'ի գարունն ընդ դրաց կողմն դառնալոյ. և ծիծառն՝ յառաջ քան զաշունն 'ի ջերին տեղիս 'ի ձմերոց երթալոյ. և խորդոյն՝ իմանալ յառաջագոյն զձմերուն կարեւորս, և վաղ 'ի մարմանդ տեղիս փութալոյ. և ճայիցն՝ վաղագոյն տարմատարմ շրջելոյ. և աղաւնեաց՝ համագունդ երամ երամ խաղալոյ. և ագռաւուց՝ 'ի ծմակաց վաղագոյն 'ի ջերին տեղիս գնալոյ. և անգեղց՝ 'ի հեռաստանէ զգիշոյ ականելոյ դիտաւորութեան։

Եւ այլոցն ևս ամենայն անասնոց և թռչնոց. որպէս և մրջեանն՝ յամարանոյն պատրաստելոյ զկերակուր, և ընդ երկու զհատն կտրելոյ՝ զի մի բուսանիցի, և 'ի ջեր ժամանակս հանելոյ զկտիկն յորջէ անտի և ցամաքեցուցանելոյ. և մեղուաց՝ զդուրս մեղուանոցացն յառաջ քան զցուրտն ականա-

մոմով խնելոյ. և արջոյ՝ յառաջագոյնքան ըզ-
ձմեռն 'ի քայոց մտանելոյ. և էրէոյ՝ կանուխ
'ի լերանց 'ի դաշտ դիմելոյ. և եղջերուաց՝
գտակաւ զժամանակ խառնիցն իմանալոյ.
և իշամայրաց բինացելոց՝ զարու յաւանակս
'ի մատաղութեան կորելոյ։ Եւ այս ամե-
նայն ազդեցութիւնք բնականք են յանա-
սունսն, և ոչ խորհրդականք, որ յարարչէն
նոցա տնկեալ են 'ի նոսա՝ առ 'ի յօժարելոյ
յօգտակարն և խորշելոյ 'ի վնասակարացն։

Այլ ոչ միայն յանասունսն են բնական
ազդեցութիւնք, այլ և 'ի մարդկան, որ խօ-
սունք և իմաստունք են։ Որպէս յորժամ ակն
խաղայցէ, բնական ազդեցութեամբ վասն
զնորոք ոչ տեսանելոյ լինի, ասեն, նշանակ,
որք այնմ սակս միտ դնեն։ Յորժամ յերանս
կամ յայլ անդամս միս խաղայցէ, նշա-
նակ հեծանելոյ ուրուք է՝ ասեն, կամ հան-
դերձս ազնիւս ագանելոյ, կամ սիրելւոյն
պատահելոյ, կամ գան ըմպելոյ։ Նոյնպէս և
յորժամ ոտն կծիցէ կամ ձեռն, մին, ասեն,
Հանապարհի գնալոյ նշանակ է կամ անձրևի,
և միւսն՝ առնլոյ ինչ յուսեալ է կամ տալոյ։
Նոյնպէս և փնչելն, և լեզուին կծել, և ուն-
կանն հարկանել, և ըմբանին կծել, ոչ եթէ
յայսոց իմեալ լինի, այլ 'ի բնական ազդե-
ցութենէ անտի՝ զոր տնկեալ է արարչին
յանդամսն։ Չի յորժամ 'ի խորհրդական
զգուշութենէն զեղծիցի, բնական ազդեցու-
թեամբն պատսպարեսցի։

Եւ յօրանջելն և ձգտել, որպէս կարծեցին ոմանք, ոչ 'ի դիւէ լինի՝ այլ 'ի մեզկութենէ և թուլութենէ մարմնոյն։ Ուստի զատէպ յօրանջելն և ձգտելն՝ հմուտ բժիշկք 'ի մթերելոյ մարդասոց ասեն, զոր և փորձն իսկ յայտ առնէ. զի յորժամ ստէպ ոք յօրանջիցէ, սարսափիւն գայ գոսկերօքն և քրտամուղք գնան ընդ անդամսն։

Եւ ոչ փնչելն 'ի հրեշտակէ, այլ կամ 'ի ցրտոյ՝ կամ վասն այլ իրիք բնական ազդեցութեան է։ Նա և յոգոցն հանել՝ երբեմն յիշատակաւ լինի, և երբեմն առանց յիշելոյ զոք։ Եւ զի բնական ազդեցութիւնք են և ոչ 'ի դիւաց, յայտ անտի է՝ զի և յանասնոց բնութիւնս գտանին նոյնք։ Եւ յոգոցն հանել՝ յորժամ ոչ զոք կամ զինչ ինչ բարի կամ զկարիս յիշելոյ լինիցի՝ բնական ազդեցութիւն է, առ ամփոփելոյ զոմն ընդ երկիւղիւ արարչին, և ճանաչելոյ զիւրոյ բնութեանն տկարութիւն։ Եւ յորժամ յիշատակաւ լինիցի, կամ առ սիրոյ սիրելւոյ լինի, կամ առ անարժանս ինչ և զմնասս աշխարելոյ։ Որպէս յորժամ ոք՝ 'ի լրջեաց ծուլայցէ, գիշերական երազովքն ամփոփի ընդ երկիւղիւ։

Եւ երազոցն այլ և այլ պատճառք են։ Է ինչ՝ զոր ցերեկ ընդ բերան ածիցէ մարդն, 'ի նոյն և 'ի դադարել մարմնոյն և 'ի քունն զբաղնուն միտքն. և է ինչ՝ զոր բնաւ չիցէ ածեալ զմտաւ, և տեսանէ յերազի։

Եւ ոչ ամենայն թալանալ և ցնորել մարդկան 'ի դիւէ, այլ է՝ որ 'ի մաղձոյ է, և է՝ որ 'ի մաղասէ, և է՝ որ յուղղոյն սնանալոյ, և է՝ որ 'ի ստամոքսէ խանգարելոյ, և է՝ որ յորովայնէ խստանալոյ, մինչև ցփրփրել անգամ և զաչս յեղեղուլ։

ԱՅԼ յուղղոյն սնանալոյ՝ և 'ի մտաց խակ անկանի մարդ, և խօսի ընդ որմս, և կագի ընդ հողմս։ Ուստի բժիշկք յամառին՝ թէ բնաւ չիք դև որ'ի մարդ մտանիցէ. այլ ցաւք են այն, և մեք դարմանովք կարեմք բժշկել։

Այլ մեք զայն ոչ ասեմք. քանզի ճշմարիտ է մեզ բան աւետարանին՝ եթէ բազում դևք, իբրև տեսանէին զՅիսուս, աղաղակէին և ելանէին 'ի մարդկանէ. և նա սաստէր 'ի նոսա և ոչ տայր խօսել նոցա. հանդերձ այլովք նոյնպիսեօք։ Եւ լուսնոտքն որք ասին, ոչ եթէ լուսնոյ ՀՆասեալ՝ այնպիսիք կոչին, այլ դաս ինչ է դիւաց՝ որ ըստ լուսնոյ յայտնին։

Եւ փորձել այնչափ իշխէ ստատնայ, որչափ հրաման առնու։ Եւ յայտ 'ի Յովբայ փորձանացն է. զի եթէ ոչ նախ առ հրաման ՅԱստուծոյ, ոչ ժոնցաւ փորձել զնա. և 'ի խոզից երամակէն, յոր ոչ իշխեցին մտանել դևքն՝ եթէ ոչ առին հրաման 'ի Տեառնէ։

Եւ ոչ լուսաւորքն, որպէս յառաջագոյն ասացաք, կենդանիք ինչ են և պատճառք բարեաց կամ չարեաց, այլ միայն յոր կարգեցանն՝ զայն սպասաւորութիւն հարկա-

նեն։ Որպէս ասաց Պաւղոս, թէ արար Աստուած զբազմաբարսն մեծամեծս, և ետ զնոսա 'ի հաստատութեան երկնից՝ բուսանել յերկիր։ Ուստի յայտ է՝ թէ փառն բուսանել յերկրէ մերոյ մարդոյ արարեալ, և 'ի նշանս և 'ի մատնանակս և յաւուրս, յամիսս և 'ի տարիս։ Ոչ իբրև զկենդանիս, այլ իբրև զբուսաւորս բուսանել յերկրէ որպէս 'ի ներկրէ երկնից, և զնշանս ասասուածն զիրաս թեան ցուցանել, և զանձրևաց և զօդոց փոփոխմանցն։ Որպէս և Տէր մեր ասէ։ Յորժամ տեսանիցէք զնեղ ասուածոն զերկինս կարմրացեալ, ասէք՝ թէ Անձրև լինելոց է, և լինի։ և յորժամ հարաւ շնչիցէ, ասէք՝ թէ Խորշակ մեծ լինելոց է, և լինի։

Զանազան բնեալ ծագեալ արեգականէ, օդ ոչն զիրանաւորութիւնն ջուրց առեալ՝ զՀասարակ ամենայն արեւոյ արկանել, և բանեալ չեն և թանձրացեալ և ամպացեալ օդն, սակաւիկ մի արգելուցն զնշոյլսն՝ կարմրացուցանել մարդն զարեն, և ոչ մեռուցանել։ ասասի երեւի՝ թէ անձրևի նշանակ է։

Ամենայն և յաւուրն 'ի հրանաւորութենէ օդոց ներգեալ, ջանայ յիրեն զիրանաւորութիւնն 'ի բաց արարեալ։ ասասի մերձեալ հրանաւորութեան, և 'ի նա չհասեալ՝ բակ առեալ դրանայ շուրջ զնոսա։ որով յայտ առնի անձրևաց նշանակ։ Եւ այն ոչ միայն 'ի բաւնի, այլ և 'ի Հրապի՝ որ նուազագոյն լոյս է՝ և ս երեւի։

Այլ, ասեն, մեք խակ աչօք տեսանելիք, զի 'ի ծոմէ երանէ (արեգակն)։

Եւ զայն ոչ գիտեն՝ թէ փառն զի ցամաքք ուրեք 'ի ծոմէ անտի ոչ երեւի, այլ տակաւ թուի՝ թէ 'ի ծոմէ անտի երանիցի։ Որպէս յորժամ՝ թէ յարևմուտս որ մօտ իցէ, և լեռանն ինչ յարևելից կողմանէ կայցէ, թուի նմա՝ թէ 'ի լեռնէ անտի երանիցի արեգակն։ Եւ յամենայն տեղիս, որ ինչ անիրաւ ինչ ոչ ուրեք կայցէ, թուի նմա՝ թէ անտի ուստեք 'ի մօտէ երանիցի արեգակն։ Այսպէս և նոցա՝ որ մօտ առ ծովուն կայցեն, քանզի ոչ կարէ ակն բաց 'ի ցամաքէ զարծել, թուի՝ թէ 'ի ծոմէ երանիցի։ որ ոչ 'ի ծոմէ անտի երանէ, այլ 'ի ծագաց երկնից։ Որպէս և Դաւթի 'ի Հոգւոյն սրբոյ ուսեալ, ասէ՝ թէ 'ի ծագաց երկնից են ելք նորա, և հանդիպումք նորա մինչև 'ի ծագս նորուն։

Այլ և զօր սատանիկ, ասեն, արկանէ յաչխարհին։ ուստի յայտ է՝ թէ 'ի ծոմէն երանէ։

Եւ զայն ոչ գիտեն՝ թէ զօրն որ ցայգ ուռնու 'ի խոնարհութենէ ջուրց, հասեալ ջերմութեանն ճառագայթիցն արեգականն՝ շքեղացուցանէ 'ի բաց զառաջիս թխութենէ, ուստի ոչ միայն անդ, այլ յամենայն երկրի ընդ արեւածայրս զօր անկանի։

Այլ և երկիր, ասեն, 'ի միջոցի կայ։ Եւ ասեն օրինակ ինչ այսպիսի՝ թէ զփամփուշտ, յորժամ միջոցէ կամիցիս, ընկեա 'ի ներքս հատ մի կորեկան, և փուքն՝ որ 'ի փամփշտին արբ-

գելու՝ առնու զկորեկահատն և՝ ի միջոցի ուն-
նի, ոչ՝ ի վերս տայ գալ և ոչ՝ ի խոնարհ ձգել։
Այնպէս, ասեն, և օդս՝ որ է՝ ի մէջ գնդին
երկնից՝ փակեալ կայ, և ունի զաշխարհս՝ ի
հատարակածի. ոչ՝ ի վերս տայ վերանալ և ոչ
՝ի խոնարհ հակել։

Այս յիւրեանց իսկ բանիցն յանդիմա-
նին. զի ասեն՝ թէ որ ինչ թեթև է, ՝ի վերին
կողմն գնայ, և որ ինչ ծանր է, ՝ի խոնարհ։
Որպէս և փորձ իսկ իրացն յայտ առնէ. զի
ծուխ և շոգի երկրի՝ և բոց հրոյ, քանզի թե-
թեւք են, ՝ի վերս կողմն գնան. և զքար և
զերկաթ և զփայտ և զայլ ևս ինչ նոյնպիսիս,
որչափ և՝ ի վերս ոք ձգիցէ՝ ՝ի խոնարհ միտ-
եալ իջանեն։ Եւ եթէ զսակաւ ինչ զծան-
րութիւնս ոչ կարէ օդն՝ ի վերս առնուլ ու-
նել, որչափ ևս առաւել զայնչափ ծանրու-
թիւն երկրի չէ հնար օդոյ՝ ի վերս ունել։

Լ ՈՒՍԻՆ, ասեն, քան զարեգակն երեսուն
օր անցեալ ընդ ամենայն աստեղատուն,
այս ինքն ընդ ամենայն երկինս, հասանէ՝ ի
նոյն տեղի. և արեգակն՝ ի տարւոջ։ Եւ
երկինք զմի տիւ և գիշեր առաձեալ զինք-
եամբ, շրջին՝ ի նոյն տեղի։ Եւ եօթն աստղ
միայն է գնայուն, և այլն ամենայն
բևեռեալ են յերկինս. և որ գնայուն աս-
տեղքն են՝ արեգակն և լուսին, և այլ ևս
հինգ աստեղք, ոչ եթէ յարևելից յարև-
մուտս գնան՝ այլ յարևմտից յարևելս։

(Որպէս) յորժամ անիւ շրջանակիցին, մբբ-

ջիւն մի 'ի խեցին գնայցէ յարևմտից կողմանէ ընդ արևելս, զոմն անուն արագադոյն ընդ արևմտից կողմն շրջելոյ՝ թուխ թէ մրջիւնն յարևելից յարևմուտս կոյս ընթանայցէ. որ ոչ յարևելից յարևմուտս կողմն գնայցէ՝ այլ յարևմտից յարևելս. և անիւն սաստիպ շրջելումն այնպէս երևեցուցանէ։

Եւ երկինքդ, ասեն, որչափ 'ի վերս են՝ գոյնչափ 'ի խոնարհ են, և գոյնչափ յամենայն կողմանց շուրջ զերկրաւ. և զերկիրս շուրջ ջուր պատէ, և զջուրն և զերկիր՝ օդ, և զօդն և զջուր և զերկիր՝ հուր։ Եւ լուանն չիք իւր լոյս առանձինն, այլ յարեգակնէ գայ 'ի նա լոյսն. և յայս անտի է, ասեն, զի յորմէ կուսէ արեգակն իցէ, յայնմ թերի սկսանի 'ի նմա լոյս ծնանել. և ըստ հեռաւորութեան արեգականն՝ սակաւ գայ 'ի նա լոյսն, և ըստ սակաւ սակաւ մերձենալոյն՝ յաճախէ 'ի նա լոյսն. և յորժամ մօտ հասանէ 'ի նա՝ լնու. և յորժամ անցանէ զարեգակամբ՝ սկսանի սակաւ նուազել, և որչափ 'ի բոյն հեռանայ՝ այնչափ պակասէ 'ի նմանէ լոյսն, մինչև ամենեին նուազէ. և յորժամ միւս անգամ հանդիպի, ծագէ 'ի նմա սակաւիկ ինչ 'ի լուսոյն զոմն հեռաւորութեանէ. և որչափ մերձենայ, այնչափ առ սակաւ սակաւ աճէ 'ի նա լոյսն։

Եւ լուսին, ասեն, 'ի ներքոյ է քան զարեգակն և քան զամենայն աստեղս. և քանզի 'ի ներքոյ է, յորժամ կշիռ դէպ արեգա-

կան պատահիցէ, յայնժամ խաւարիլ արեգակն։ Եւ պատճառս փոփոխմանց տարեբաց չորից բնութեանցն զատեզա՝իբրև զկեն դանիս ինչ՝ դնեն։ Զայս ամենայն ասեն հայթայթանօք, զի զերկինս և զլուսաւորսն կենդանիս և աստուածս կարծեցուցցեն։

ԻԱՑՑ հեթանոսութեան սկիզբն 'ի Սերուքայ ժամանակաց անտի եղև. զի որ բաւոք եկեալ յաշխարհ մեռանէր, վասն յիշատակի քաջութեանն զպատկերն երանգօք 'ի նկարու հանէին. և անտի ուսեալ տխմարաց՝ տակաւ 'ի պաշտօն առնոյին։ Եւ կռոց և դրօշելոց հանգամանք՝ առ Թարայիւ հարբ Արրահամու (եղեն), և անտի իւրաքանչիւր որ իւրով արուեստիւ զնոյն դրօշէր. դարբինն՝ դարբնութիւն, հիւսանն՝ հիւսնութեամբ, արծաթագործն և պղնձագործ և քարակոփ և բրուտ՝ իւրաքանչիւր արուեստիւ։ Եւ անտի կարգեալ հասանէր Յեգիպտացիս և 'ի Բաբելոնացիս և 'ի Փռիւգացիս և 'ի Փիւնիկեցիս գործ դրօշագործութեան և խորհուրդք նորին. և ապա 'ի Հելլէնս, որ են Յոյնք, առ Կեկրոպեաւ, և ես յետոյ առաւել ասասիք առ Կառնաւն և Իէաւ և Դիաւ և Ապողոնիւ և առ այլովք բազմաք, զորս մի քան միոջէ աստուածս անուանէին։

Եւ Հելլէնք կոչին Յոյնք յառնէ միոջէ՝ որում Հեղինոս անուն էր Յելլադացւոց աշխարհին։ Բայց այլք ասեն՝ եթէ 'ի Ձիթենւոյն որ Յանթէնս քուսաւ իւրովի. վասն

զի ձիթենի Յունարէն երէա կոչի։

Բայց Յոյնք՝ ի Յաւանայ (են), որ էր մի յառաջնորդաց աշտարակագործութեանն. վասն որոյ Մերոփպս ամենեքին կոչին յաղագս բարբառոյն բաժանելոյ. քանզի բաժանումն Յունարէն մերիսմոս կոչի։

Եւ առաջին կրօնք՝ խուժականք և սկիւթականք և հեթանոսականք կոչէին, մինչև եկն Աբրահամու ասասուածպաշտութիւնն և աղաւաղեաց զայն։

Եւ յուդայութիւն՝ ի Յուդայէ (է), որ է Հրէութիւն, ՝ի չորրորդէ որդւոյն Յակոբայ, յորմէ թագաւորութիւն էր, և կարաւ անուն զամենայն ազգն յուդայական։

Եւ՝ ի վախճանի Հրէութեան՝ քրիստոնէութեան անուն՝ ի Քրիստոսէ. որ նախ ՄԱՆՈՒՔ անուանեցաւ աշակերտելոցն։

ԲՆԱՒ իսկ, ասեն, ոչ ուրեք մոռանէ արեգակն. և զի ոչ մոռանէ՝ անոր յայտ է, զի ցայգ՝ ի նորա լուսոյն՝ ի լուսնի ամանելոյս ծագէ. քանզի ինքն երթեալ հեռացեալ յայլ կողմանս երկնից գոտանի։

Եւ թէ ասիցեն՝ թէ նա յերկինս իցէ ցայգ, խաւարս որ լինի՝ ուստի՞ իցէ։

Ասեն, յերկինս սուրբք լինիցի։

Եւ զաձնելն և նուազելն լուսնի՝ իբրև ընդ պատենիւք ինքն մոռանել և երանել ասեն իմաստուն։ Եւ նշանս անոր տան, զի է երբէք՝ յորժամ յաճմուռնան իցէ և ընդոյն, շուրջ զանօթովն ծանրանայ, որպէս թէ ընդ

սակաւ ինչ փեռեկու�ն ծերպից՝ նշոյլք ելևեցին։

Եւ օդ ընդ ջուրս և ընդ երկիր խառն 'ի է, և զի ընդ ջուրս օդ խառն է՝ զեռնոցն յայտ է, որ'ի ջուրսն զօդոյն կենդանուին ծծենն։ Եւ զի ընդ երկիր նոյն օդ խառն է, յորժամ անձրև լեալ ելցէ և արև տայցէ, 'ի գոլորշոյն՝ որ 'ի սրտէ երկրին 'ի վերս ցոլանայ՝ յայտ յանդիման երևի։ Եւ զի ընդ օդս հուր խառն է, 'ի փայլատականցն՝ որ 'ի շփելոյ ընդ միմեանս հողմոյն և ամպոց արձակին՝ յայտ յանդիման ցուցանի։ Եւ դարձեալ, թէ յապակի սպիտակ ջուր արկեալ յարևու ունիցիս, լուսաւորութեան արևուն մտեալ ընդ սպիտակութիւն ապակւոյն, և ընդ յատակութի ջրոյն օդով թափանցանց անցեալ՝ հուր ծընուցանէ։ Եւ զի ընդ ջուրս հուր խառն է, 'ի քարանցն հանելոյ 'ի ջրոյ՝ զոր ընդ միմեանս շփիցեն և հանիցեն հուր՝ յայտ յանդիման ցուցանի՝ և գիշերի՝ յորժամ առ ծոմեզեր կայցես և զջուրն ժքթիցես, նշոյլք լուսոյն հատանին։

Եւ զեռունքն որ 'ի ջրոյն 'ի ներքս են, 'ի չորից հիւթոցն յօդեալ են, յերկրէ և 'ի ջրոյ, յօդոյ և 'ի հրոյ, որպէս և ամենայն մարմնաւորքն՝ որ 'ի ցամաքին են։ Զի այնպէս կազմեաց Աստուած զաշխարհ. նախ զչորս հիւթն մեկնեալս արարեալ, ապա նոքօք յօդեաց զամենայն. և միոյ արարչի գործ է ամենայն ինչ, և նոյն վա-

բէ և տանջէ զբնաւ։

Եւ ոչ, որպէս զլուխ փիլիսոփայիցն նոցա Պիւթագորաս և Պերիպատիկեանքն ասեն, մի միութիւն(է) պատճառ ամենայնի, և խնամակալութիւն. զոր ոչ 'ի նմանէ ասեն, այլ թէ զօրութիւն ինչ ինչ ոգեն առանձինն խնամակալութիւնն։ Եւ որպէս պատճառ ամենայնի 'ի միոջէ միութենէ ասայ. և զխնամակալութիւնն 'ի նմանէ դնէր, գեղեցիկ և գովութեան արժանի կարգէր. բայց զի յայլմէ զպատճառն կարդէ, և յայլմէ զխնամակալութիւնն, պարսաւանաց արժանի է և ոչ յարգանաց։

Եւ զարձեալ՝ զի աստուածոցն ոչ հրամայեաց զոհել, այնու գովելի է. բայց զի ոչ յայտնի քարոզեաց՝ թէ մի Աստուած է և ոչ բազումք, այնու կարի դատելի։

Գովելի և առաւել գովելի, զի վասն կարեաց և ցանկութեանց յաղթելոյ՝ 'ի կերակրոցն կրօնաւորեցաւ. բայց զի փոփոխմունն ոգւոց 'ի մարմնոց՝ 'ի մարմինս եւ, այնու յոյժ եպերելի է։ Որպէս թէ արդարոցն մեռելոց ոգիք յայլ 'ի սուրբ մարմինս փոխիցին, կամ 'ի մարդկան կամ յանասնոց արբոց. և այն նոցա իբրև ընդ հատուցման բարեաց գործոց լինիցի։ Եւ մեղաւորացն ոգիք յաղտեղի մարմինս փոխիցին, կամ 'ի մարդկան կամ 'ի գազանաց և 'ի ճանճեաց և 'ի սողնոց. և այն նոցա ընդ հատուցման չարեաց գործոց լինիցի։

Եւ զմիսն չուտել՝ եթէ վասն զկարիս մարմնոցն խափանելոյ հրամայէր, բարեոք և յիրաւի առնէր. ապա եթէ իբր 'ի պղծոյ իմեքէ արարածոց հրամայէր հրաժարել, վատթարագոյն։ Այլ յայտ են պատճառքն ուստի զմիս շնչաւորացն հրամայէր չուտել. որպէս թէ հոգի աստուածեղէն ելցէ 'ի մեղիսն, և վասն այնորիկ չիցէ պարտ ուտել զմիս կենդանեացն։ Վասն որոյ և մոգքն նախ յազեն, և ապա սպանանեն զանասունսն զի յանզգայ ելանիցեն շունչքն 'ի մարմնոց անտի։ Եւ զայն ոչ գիտեն՝ թէ երկուս մահ սպանանեն. մի յազելովն, և միւս ևս փողոտելովն։

Նոյնպէս և Պիւթագորաս ոչ հրամայէ անասունս զոհել դից, որպէս թէ չիցէ պարտ զոհել աստուածս աստուածոց։ Քանզի հոգի աստուածեղէն ասէ յանասունսն. և յայտ անտի է՝ զի երկիր պագանել հրամայէ, և զոհել ոչ։

Կարի անարժան գործ էր և 'ի լուսնոյ 'ի վեր զամենայն ինչ անմահ համարել։ Յայտ առնէ, թէ զայն ամենայն աստուածս կարծէր. և անտի 'ի խոնարհ մահկանացուս դնելով ցուցանէր՝ թէ հուրդ և օդ և երկիր՝ կենդանիք ինչ իցեն և մեռանիցին. որոց ոչ զկենդանութիւնն զդացեալ(է), և ոչ զմահու ազդումն առնուն, որ շնչաւորացն է և ոչ անշնչոց։

Եւ հինգամեայ լռութիւնն, զոր նոր

յաշակերտութիւն եկեղեցն սահմանեաց, թէպէտև մեծի ժուժկալութեան օրինակ էր, քանզի և ոչ հարցանել ինչ իշխէին՝ բայց միայն լսել, այլ ոչ ինչ կարի յօգուտ էր։ Զի թէ յառաջ քան զհինգամեայ ժամանակն վճարէր ոք 'ի նոցանէ, թէպէտև կարի քաջ 'ի լսելոյն իմաստնանայր, ոչ ինքն վայելէր յիմաստութեանն՝ քանզի ոչ իշխէր խօսել, և ոչ այլ ոք՝ վասն զի ոչ լսէր զիմաստութիւնն։

Եւ որ անհնարին յիմարութեանն է, յեռոյ, ասեն, զիւր անձն աստուած անուանեաց. որ յառաւել հպարտութենէն դիպեցաւ նմա. զի ոչ եկն ըստ բանի իմաստնոյն՝ թէ որչափ 'ի մեծութիւն հասանիցես, 'ի խոնարհութեան կալջիր զանձն։

ՄԱՍ Բ.

ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆ

Վերլուծութեան մէջ տղոց ընելու երկու բան կայ. 1. բառերուն պաշտօնները ցուցընել. և 2. խօսքին կազմութիւնը ճանչցընել։

1. ԱՍՏԻՃԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹԵԱՆ

Բառերուն պաշտօնները ցուցընել։

Որուն վերլուծութեան 1. աստիճանին մէջ տղաք բառերուն խօսքի մէջ իրարու հետ ունեցած յարաբերութիւն կամ պաշտօն ունենալը պիտի ցուցընեն։ Եւ որպէս զի տղաք կանոնաւոր կերպով վերլուծութիւն ընեն, հարկաւոր է որ հետեւեալ ներածութիւնն աղէկ միտք առնեն։

Խօսքինամեն մէկ անդամը նախադասութիւն կը կոչուի։

Նախադասութիւն ան է որ դիմաւոր բայ մ՚ունի։ Ուստի խօսքի մը մէջ քանի դիմաւոր բայ կայ, այնչափ նախադասութիւն կամ անդամ կայ։ Զոր օրինակ՝

Աստուած արդար է.
Որդին հայրը կը սիրէ.

մէյմէկ նախադասութիւն են, քանզի երկուքին մէջ ալ մէյմէկ դիմաւոր բայ կայ։ Բայց՝

Լ.թէ Աստուած արդար է, մարդոց գործքերուն համեմատ անոնց վարձք կամ պատիժ պիտի տայ.

Հայրը որդին կը սիրէ, քանզի միշտ ա-նոր հնազանդ է.

Այս խօսքերը երկերկու անդամէ կամ նախադասութիւնէ կը բաղկանան. քանզի ամեն մէկուն մէջ երկերկու դիմակաւոր բայ կայ։

Ա) երկուծութեան մէջ ամեն մէկ նա-խադասութիւն զատ զատ վերլուծելու է։

Այնինք թէ ամեն նախադասութիւն դի-մաւոր բայ մը ունենալու է։ Բայց նախա-դասութիւն մէջ միւնակ բայ չկայ, այլ խիստ շատ անգամ նախադասութեան մէջ բայէն զատ ուրիշ շատ տեսակ բառեր ալ կը գտնուին։ Նախադասութեան մէջ բայէն զատ ուրիշ բառեր՝ բային նկատմամբ այլեւայլ յարա-բերութիւն կամ պաշտօն ունին։ Ուստի՝

1. Բայն անուն էայէ մը (որ ենթակայ ալ կ'ըսուի) կ'ունենայ, որնոր սովորաբար անուն կամ դերանուն է։

2. Բայը, երբոր էական բայ է, իրմէ առաջ կամ իրմէ ետքը ածական մը կամ գոյա-կան մը կ'ունենայ, որնոր պրոբոգիէլէ կ'ըսուի,

և անուան բային մէկ որպիսութիւնը կամ հանգամանքը կը ցուցընէ, ուստի և միշտ անուան բային կը վերաբերի և անիկա կ'եզանակաւորէ։ Զորօրինակ՝

Աստուած արդար է. կամ Աստուած է արդար.

խօսքին մէջ. Աստուած անուն բայի է է բային. արդար ածականը՝ ստորոգելի է Աստուած անուան բային. և անիկա կ'եզանակաւորէ *։

3. Երբոր բայն էական չէ, այլ ուրիշ բայ է, կրնայ խնդիր ունենալ։ Խնդիրը լրացուցիչ ալ կ'ըսուի խնդրաւոր բառին, քանզի խնդրոյն գործն է խնդրաւոր բառին իմաստը լրացընել. զորօրինակ՝ երբոր կ'ըսենք պարէտէզը, բառին իմաստն ընդհանուր և անկատար է. բայց երբոր կ'ըսենք Թագաւորին պարտէզը, պարտէզին իմաստը կ'ամբողջանայ կամ կը լրանայ։ Նոյնպէս երբոր կ'ըսենք. Հայրը նէ՞էրէ, անկատար իմաստ կ'ունենանք. բայց երբոր կ'ըսենք Հայրը կը սիրէ որդին, սիրելուն իմաստը կ'ամբողջանայ։

Ուստի Թագաւորին, որդին բառերը լրա-

---

* Հասարակ ածականներն իրենց գոյականները կ'եզանակաւորեն, այսինքն՝ անոնց մէկ եզանակը կը ցուցընեն. ուստի հասարակ ածականի մը համար վերլուծելու ատեն կ'ըսուի, Ածականը՝ գոյականը ի՛եզանակաւորէ։ Նոյնպէս մակբայներու համար կ'ըսուի. Մակբայ՝ գոյականը, ածականը կամ մակբայը ի՛եզանակաւորէ։

ցուցիչ ուստի և խնդիր են։

Խնդիրը երկու տեսակ է. ինդիր սեռի, և ինդիր բնութեան։

Սեռի ինդիրը միշտ հայցական հոլով մին է, որոնք ներգործական բայերուն լրացուցիչ կ'ըլլայ։ Ինչպէս որ անուն բային գործողութեան տէրը կամ գործողութիւնն ընողը կը նշանակէ, սասանկ ալ սեռի խնդիրը գործողութեան առարկան կամ գործողութիւնը կրողը կը նշանակէ։

Ասուած անիրաւները կը պատժէ.

Ասուած գործողութեան տէրն է, ուստի և պատճէ ին անուն բային է. անիրաւները գործողութիւնը (պատիժը) կրողն են, ուստի ասբառը պատճէին սեռի խնդիր է։

Շատ անգամ ամբողջ նախադասութիւն մը կամ խօսքի անդամ մը կրնայ բայի մը սեռի խնդիր ըլլալ, և ամբողջական խնդիր կը կոչուի։

Ինութեան ինդիրն ուղղականէ (որ միշտ անուն բայի է,) և հայցականէ (որ սովորաբար խնդիր սեռի է) զատ մնացած հոլովներն են, այսինքն սեռականը, տրականը, բացառականը և գործիականը։

Հայցականը թէպէտ սովորաբար սեռի խնդիր է, երբեմն բնութեան խնդիր ալ կ'ըլլայ, երբոր գործողութեան առարկայ չնշանակեր։ Զորօրինակ՝ Զամենայն գիշեր աշխատեցաք. Եկայ անդ Զատրոս երիտասարդ, ասխօս-

քերուն մէջ հայցականները սեռի խնդիր չեն, այլ բնութեան խնդիր։ Քանզի բայերն ալ չէզոք են, ոչ թէ ներգործական։ Հայկաբանութիւն, այսինքն հայերէն լեզուին յատուկ մէկ բնութիւնն է որ ժամանակ ցուցընող խնդիրները հայցական հոլովի ձևով կը բացատրուին։

Դարձեալ նախադրութիւններն իրենց խնդիրներովը մէկտեղ բայերուն բնութեան խնդիր են։ Ասոնց օրինակ են հետևեալ խօսքերը։

Աստուած աս տիեզերքը ոչընչէ իր խօսքովը մարդուս համար ստեղծեց։

Ապո՛ւած անուն բայի է սպէղծէցին։ Պէ՛ղծէր՝ սեռի խնդիր նոյն բային։ Ոչընչէ բացառական բնութեան խնդիր, իր խօսքովը գործիական բնութեան խնդիր, մարդո՛ւս համար նախադրութեամբ հանդերձ բնութեան խնդիր նոյն սպէղծէց բային։

Խօսքի մէջ ոչ միայն բայերն, այլև անունն, ածականն, ընդունելութիւնը և նախադրութիւնները բնութեանխնդիր կ'ունենան։

Դոյական անունին բնութեան խնդիրը միշտ սեռական հոլով է, և մեր լեզուին մէջ յատկացուցիչ կ'ըսուի, զորօրինակ՝ Արարածք Ապո՛ւածոյ, յապարանս Թագաւորին։

Ածականը, ընդունելութիւնն ու նախադրութիւններն ուրիշ հոլով ալ բնութեան

խնդիր կրնան ունենալ, զորօրինակ՝ Արժանի վարդ-ս, լի պարտք, շուրջ գնալ, գաղտ 'ի նմանէ։

Նախադասութեան մը մէջ մակբայ ալ կ'ըլլայ։ Մակբայը սովորաբար բային մէկ որպիսութիւնը կը ցուցնէ. Բարի խօսեցաւ. Բարի մակբայ է, և խօսելոյն կ'եզանակաւորէ։

Մակբայը շատ անգամ ուրիշ մակբայի կամ ածականի մը վրայ ալ կ'իյնայ և անոնց որպիսութիւնը կը ցուցնէ, զորօրինակ՝ Ցոյժ բարւոք խօսեցաւ. Յոյժ մակբայ է և Բարի մակբայը կ'եզանակաւորէ, ինչպէս Բարիին խօսեցաւը կ'եզանակաւորէ։

Կարի իմաստուն էր նա. Կարի մակբայ է, կ'եզանակաւորէ Իմաստուն ածականը։

Մակբայի համար վերլուծութեան մէջ ըսելու է. մակբայ այսինչ բայը կամ մակբայը կամ ածականը կ'եզանակաւորէ։

Նախադասութեան մէջ տեսակ մը բառեր ալ կրնան գտնուիլ, որոնք բառի մը իրր մեկնութիւն սովորաբար նոյն թուով ու հոլովով յետադաս կ'ըլլան, և բացայայտիչ կ'ըսուին։ Ուստի վերլուծութեան մէջ բացայայտչին համար պէտք է ըսել. բացայայտիչ այսինչ բառին։

Երբեմն անուններու դերանուններ նախադասութեան մէջ բացագարձութեամբ կը կենան. ասիկա հայերէն քերականութեանց մէջ կոչական հոլով ըսուած է։ Վերլուծու-

թեան մէջ աս տեսակ բառերու համար պէտք է ըսել բացադարձութեամբ։ Զորօրինակ՝ Արածեցէք, հովիւներ։ Արածեցէ՛ բայ, ներգ. հրամ. եզ. յոգ. բ. դէմք. ա. լծ։ Անուն բային է դո՛ որ լռելեայն կ'իմացուի։ Հովի՛ւներ, հսկ. գոյ. յոգ. ուղ. բացադարձութեամբ, դո՛ լռելեայն իմացուած անուն բայիին կը վերաբերի։

---

1. ԱպիՀանի վերլուծումներուն օրինակ.

Լա՛ էր երէց որդի նորա (զբաղեալ) յաղարակի. և մինչդեռ գայր և մերձ եղև 'ի տունն, լուաւ զձայն երգոցն և զ(ձայն) պարուց, և կոչեցեալ առ ինքն զմի 'ի ծառայից հարցանէր թէ զինչ իցէ այն։

Լա՛	շաղկ։
էր	բայ. սահմ. անկ. էջ. գ. դէմ՝. եմ էական բայէն։
երէց	հսկ. ա՛ծ. էջ. ո՛ղ. կ'երեւնակա՛ որդի՛ն։
որդի	հասկ. գոյ. էջ. ո՛ղ. անո՛ն բայի էր ի՛ն։
նորա	էն. դէր. գ. դէմ՝. էջ. սե՛ռ. յարկոյ՝ յիշ որդի՛ն։
զբաղեալ	ընդո՛. անցեալ. զբաղիմ բայի՛ն, ա՛ծական բբայ՝ առնո՛ա՛ծ, լռելեայն իմացո՛ցած սպորգելի որդի բառի՛ն։

Յ նախադիր։
ապաստակի հրկ. գոյ. եզ. տրա. բնո-ական
իմաստիր զբաղեալ ին։
և շնչ։
մերձ ած. սպորոգելի սահ-ջ յիշ-
ոսաց որդի բառ-ին։
եղև բայ. սահմ. ներ. եզ. գ. դէմս.
եմ էական բայէն։
'ի նախադիր։
տուն հրկ. գոյ. եզ. հայց. բնո-
ական իմաստիր մերձ ին։
ն դիմորոշ յօդ։
լուաւ ներգործ. բայ. սահմ. ներ. եզ. գ.
դէմս. ա. անց. լսեմ լարդ. բա-
յէն։
զ նախադիր։
ձայն հասարակ գոյ. եզ. հայց. սեռ
իմաստիր լուաւ ին։
երգոց հրկ. գոյ. յոգ. սեռ. յապէս-
ցոց-ցիչ ձայն ին։
ն դիմորոշ
և շաղկապ։
զ նախադիր։
ձ(ձայն) հրկ. գոյ. եզ. հայց. լրելեան
իմացուած սեռ-ի իմաստիր լուաւ
ին։
պարուց հասարկ. գոյ. յոգ. սեռ. յապէս-
ցոց-ցիչ լրելեան իմացուած
ձայն բառ-ին։
և շաղկ։

կոչեցեալ	ընդ · անցեալ · կոչեմ ին · դէր-բայ բնո-ութեան խնդիր* հար-ցականէր ին ։
առ	նախադրո-ութիւն ։
ինքն	էին · դէր · գ · դէմ · հայց · խնդիր-նախադրութեան · երկո-ւքս մէկն բնո-ութեան խնդիր կոչեցեալ ին ։
զ	նախդիր ։
ամի	բացարկա ութիւն ան · էջ · հայց · գոյականաբար անուանաց խնդիր սեռի կոչեցեալ ին ։
'ի	նախդիր ։
'ի ծառայից	հասր · գոյ · յոգ · բացան · բնո-ութեան խնդիր զամի** ին ։
ն	դէմորոշ ։

---

* Ընդունելութիւն անցեալը հայերէն վայելուչ կերպով անելն ոմանքն գործածականին տեղ կը դրուի · ուստի կոչեցեալ — ինչն ամի 'ի ծառայից, կոչելով — ինչն եւ այլն կը նշանակէ · Ես կերպ զրուցուած մը դիմաւորբայով ալ կրնայ բացատրուիլ, այսպէս · Եւ կոչեցաց — ինչն ամի 'ի ծառայէն, Ն հարցանէր եւ այլն, բայց որպէս զի խօսքը համառօտ եւ ամփոփ ըլլայ ընդունելութիւնով բացատրելը հայերէն լեզուին մէջ ալ, ուրիշ լեզուներու պէս, սովորութիւն եղած է · Պէտք է դիտնալ որ սա կերպ զրուցուածներու մէջ ընդունելութիւն անցեալը, թէպէտ բայ է, ուստի եւ սեռի եւ բնութեան խնդիր կրնայ ունենալ, բայց նախադասութիւն չէ, քանզի դիմաւորբայ չէ, այլ բնութեան խնդիր է ուրիշ դիմաւորբայի մը · Ուստի վերի խօսքին մէջ կոչեցեալ, իբր կոչելով, բնութեան խնդիր է հարցանէրին · Թէեւ ըստ որում դերբայ սեռի եւ բնութեան խնդիր առած է ։

** Թուական եւ անորոշ ածականները շատ անգամ բացառական հոլով խնդիր կ'ունենան, ինչպէս՝ Երկո-ս 'ի նոցանէ · ոմն 'ի տղայոց · այլ · իւրաքանչիւր ոչ 'ի նոցանէ եւ այլն ։

հարցանէր	ՆԷՐԳԾ. ԲԱՅ. ԱՀՀ. ԱՆԿԱՊ. ԷԼ. Գ. ՂԷՄՔ. Ա. ԼԾ. Հարցանեմ Բայէն. ԻՆՉԻՐ ԱԷՐԻՆ Է ՀԷՊԵԷԱԼՊՄԲՈՂՋ ԽՕՍՐԸ ԹԷ ՁԻՆՋ ԼՑԷ ԱՅՆ։
ԹԷ	ՇՇԻ։
ՁԻՆՋ	ԱՆՈՐՈՂ ԱԾ. ԳՈՅԱԿԱՆԱԲԱՐ ԱՌՆՈՒԱԾ. ԷԼ. ՈՒԼ. ԱՊՈՐՈԳԷԼԻ ԳՈՅԱԿԱՆԱԲԱՐ ԱՌՆՈՒԱԾ ԱՅՆ ՅՈՒՅԱԿԱՆ ԱԾԱԿԱՆԻՆ։
ԼՑԷ	ԷՆ. ԲԱՅ. ԱՊՈՐԱՂԱՍԱԿԱՆ. ԷԼ. Գ. ՂԷՄՔ. ԵՄ ԲԱՅԷՆ։
ԱՅՆ	ՅՈՒՅԱԿԱՆ ԱԾ. ԷԼ. ՈՒԼ. ԳՈՅԱԿԱՆԱԲԱՐ ԱՌՆՈՒԱԾ. ԱՆՈՒՆ ԲԱՅԻ ԼՑԷ ԻՆ։

ԱՍԿԱՐԱՐԱՆ

ԸՅԼ զի մի ծածկեսցուք հեղձուսցուք զյիշատակս ձեր բազմութեամբ բանիցս տողելոց, առ այժմ ասա հանգուսցուք զբանս։ Քանզի բաւական է մեզ, առ 'ի զարթուցանել (զմիտս)՝ զիմաստասիրական միայն ուսանել. ապա թէ լուծմանն ևս ցանկանայցէք, յառաջ քան զմեր ասել՝ դուք ձեզէն իսկ տեսարք էք. և եթէ տեսից զձեզ զարթուցեալս և ցանկացեալս առ ուսանել, ջանացայց և զլուծումն ևս 'ի սոյն յօդել. ապա եթէ դանդաղեալս և անյօժարս յուսնկնդ-

թութիւն, թաքուցիչ և նա զինչիրս և զլուծումն, ասասուածելին օրինացն հաւանեալ թէ «Մի ասայք զսրբութիւն շանց, և մի արկանիք զմարգարիտս առաջի խոզաց, զի մի առ ոտն կոխիցեն»։ Եւ ոմ իցէ որ առ ոտն կոխիցէ։ Որ ոչ համարիցի զայս (զբանս ասուածելին զրոց) պատուականս պարկեշտաս Եւ ոմ, ասեն, այնչափ հէր որ իցէ, որ ոչ պարկեշտս և պատուականագոյնս քան զամենայն համարիցի զայս։ Որ ոչն պարտիցէ ասցա, որչափ ինչ պարտիցէ պառնկաց և թատերաց սատանայականաց. քանզի անդ զցերեկ ամենայն զեղերին, և զբազում ինչ ասն ակաս ընդ վայր հարկանեն՝ վասն անօգուտ զատարկութեան, և հաւասեաւ՝ զոր ինչ լսիցեն՝ ունին 'ի մտի, և յապականութիւն ոգւոց իւրեանց զգուշանան բանիցն զոր լսեն։ Իսկ ասա ուր Ասուած իսկ խօսի, և ոչ ասկաւ ինչ ժամ անսան յաւել։ Վասն այսորիկ չուներմք հաղորդութիւն ինչ ընդ երկիրս, այլ բանիւք միայն են մեր վարք և առաքինութիւնք։ Ցա և զգեհենն վասն այնորիկ ապառնացաւ Ասուած, ոչ զի անդր արկանիցէ, այլ զի հաւանեցուցանիցէ փախչել 'ի դժնդակ բռնութենէ (աշխարհական իրաց)։ Եւ մեք զնորին հակառակն կամառնեմք, կամ լսել ախորժեմք. և հանապազ յայն Հանապարհ՝ որ անդր տանի, ընթանամք։ Թէպէտ և Ասուած հրաման ասայ ոչ միայն լսել, այլ և առնել զպատուիր-

եալսն, մեք և ըստ անդամ չանեսամք։

Եւ արդ ազէ՛ սատ, ե՞րբ առնիցեմք զհրամանսն, և ձեռն 'ի գործ արկանիցեմք, ուր և զբանս որ վասն այնոցիկ իցեն՝ չաֆորժեմք ասել, այլ դանդաղիմք և վեհերեմք այնր պարապել, թէպէտ և կարի իսկ յոյժ թեթեւագոյնք իցեն։ Եւ մեք զցուրտ իրաց ձառ արկեալ խօսիմք. և եթէ որ զմեզ շուրջն նստիցին՝ տեսանիցեմք թէ չգնեն մեզ, թշնամանս զիրան համարիմք. և Աստուծոյ չհամարիմք բարկանալ՝ յոյժամ վասն այսպիսեաց խօսիցի, և մեք արհամարհեմք զբանսն, և այսր անդր հայիցիմք։ Այլ ոմն ծեր անցեալ ընդ բազում աշխարհս, և զերախանացն և զվտանանացն համարս, և զքաղաքաց կայանս և զկերպարանս, և զնաւահանգստաց, և զվաճառաց, բազում հաւատեաւ և ճշգրիտ պատմէ։ Իսկ մեք՝ որչափ ինչ հեռի իցեմք յերկնից քաղաքէն, չգիտեմք. եթէ ջանայաք հատանել անցանել զերկայնութիւնն, (ապա) և զբացարձակութիւնն գիտէաք։ Քանզի ոչ այնչափ ինչ հեռի է 'ի մէնջ քաղաքն, որչափ ընդ երկինս և ընդ երկիր իցէ 'ի միջի, այլ ևս առաւել՝ եթէ հեղգայցեմք։ Որպէս զի՝ թէ փութայցեմք, 'ի միում իսկ վայրկենի երթեալ 'ի գրուանս հատանիցեմք։

Իսկ դու աւագիկ զիրս աշխարհիս հաւատեաւ գիտես, և զնոր ինչ և զհին, և զիշխանս համարել կարես՝ առ որովք զին-

ուրեցար յառաջին ժամանակն. և յորինիչս մարմից, և զպարգևատուս, զզօրագլուխս, որ չեն ինչ քեզ օգուտ. և կաս համարիս եթէ ո՛չ յայսմ անուան քաղաքի եղև առաջին իշխան, ո՛ Երկրորդ, ո՛ Երրորդ. կամ իբրաքանչիւրոք ՝ի՛ չափ ժամանակս կալան. և զինչ գործեցեր և որպիսի՛ ինչ ուղղութիւնս ցուցեր, զայն և յերեսդի անգամ չառնուս։ Այլ ՀՕՐԻՆԱՑ՝ որ ինչ՝ ի՛ քաղաքիս յայսմ (յերկինս) լցեն, ո՛չ այլոց՝ յորժամ ճառիցեն, լսել և անսալ ախորժես։

Բայց ազէ՛ սամ, զիարդ ակն ունիցիս հանդերձելոց բարութեանցն հասանել, զի և բանիցն անգամ չկամիս անսալ։ Այլ թէպէտ և յառաջագոյն ոչ, գոնէ այժմ արասցուք. քանզի ՝ի քաղաքն ոսկեզէն հանդերձեալ եմք մտանել՝ եթէ Աստուած հրամայեսցէ. որ քան զամենայն ոսկի առաւել պատուականագոյն է։ Մի՛ դիցուք հիմանցն և զբանց, որ ՝ի շափիւղայէ և ՝ի մարգարտոց ընդելուզեալ են։ Քանզի ունիմք ընդ մեզ զհմուտն զառաջնորդ զՊատմէոս. և զի ընդ նորա դրուեսն այժմ մտանելոց եմք, բազում փութոց պէտք են։ Եթէ տեսանիցէ զոք յուրացեալ և անյօժար յունկնդրութիւն, հանէ արտաքս ՝ի քաղաքէն. քանզի արքունական և ամենապայծառ է քաղաքն. ո՛չ որպէս սատա՝ ՝ի վաճառս և յարքունիս բաժանեալ է, այլ այն ամենեքին իսկ արքունիք է։

Բացցուք այսուհետև զդրունս մտաց մերոց. ընդարձակեսցուք զլսելիս. և բացուսմ զողութեամբ՝ յորժամ մտանելն լինիցիմք, երկիր պագցուք թագաւորին՝ որ անդ է. քանզի անդ է վաղվաղակի առաջին իսկ յայտնութիւնն կարօղ է զարմացուցանել զառեսօղն։ Փակեալ կան մեզ այժմ դրունքն. իսկ յորժամ բաց տեսանիցեմք զնոսա, այն իսկ է խնդրականացն լուծումն, ապա տեսանիցեմք 'ի ներքս բացուսմ լուսաւորութիւն։ Քանզի հոգւոյն աչօք առաջնորդեալ՝ զամենայն ինչ խոստանայ ցուցանել քեզ մաքսաւորս, թէ ուր նստի թագաւորն. և ուրք են զօրքն՝ որ շուրջ զնովաւն կայցեն. ուր հրեշտակքն, ուր հրեշտակապետքն. և որպիսի ինչ տեղի նորոց քաղաքացւոց անդ պատրաստեալ է. և ուր ճանապարհ է՝ որ անդր տանիցի. և որպիսի ինչ հանգստեանն հասին՝ որք յառաջագոյն անդր զինուորեցան, և որք յետ նոցա, և այլք որ զնոցա կնի. և ուրչափ իցեն դասակք գնդից այնոցիկ. և ուրչափ ինչ այլ և այլ աստիճանք պատուոցն և խորհրդականացն։

Ի՞նչ այսուհետև ամբոխիւ և խառնութեամբ մտանիցեմք, այլ խորհրդական լրութեամբ։ Զի թէ 'ի թատերան՝ յորժամ բացուսմ լուսութիւն ունիցին, ապա ընթեռնուն հրովարտակք թագաւորաց, ուրչափ ևս առաւել յայսմ քաղաքի պարտ իցէ ամենեցուն ցածնուլ, և յոտն կալ ոգւովք և լսել-

եօք. զի ոչ եթէ երկրաւորի ուրուք, այլ հրեշտակացն տեառն ընթեռնլոց է գիրն։ Եւ եթէ այսպէս զանձինս յարդարեսցուք, և շնորհքհոգւոյն բազում ճշմարտութեամբ առաջնորդեսցեն մեզ. և անդր իսկ յաթոռն արքունական հասանիցեմք. և ամենայնի որ անդ բարութիւնքն են՝ հասանեմք։

ԸՀՍ և բերան և լսելիս վասն այնորիկ եռ մեզ Աստուած, զի բնաւին ամենայն անգամքն նմա ծառայեսցեն. զի զնորայսն խօսեսցուք, և զնորինսն արասցուք. զի հանապազորդ օրհնութիւնս երգեսցուք նմա, զի գոհութիւնս առաքեսցուք, և այնու ամենայնիւ պարգևսցուք զեսիղձն 'ի մտաց։ Զոր օրինակ մարմնոյ 'ի սուրբ օդ վայելեալ՝ առողջագոյն լինի, նոյնպէս և ոգին զգաստագոյն, յորժամ այսպիսի զբօսանօք բուժանիցի։

Ուտեսանե՞ս և զմարմնոց իսկ զաչս. յորժամ հանապազ ընդ ծուխս գայցեն, արտօսր բերեն. և յորժամ 'ի խաղաղ օդս և 'ի մարդս և յաղբիւրս և 'ի գրախտս զբօսնուցուն, առողջագոյնք և քաջատեսք (լինին)։ Նոյնպէս և մտացն ակն եթէ յեղտիւրս հոգևոր բանիցն ճարակիցի, սուրբ, յստակ և քաջատես լինի. իսկ եթէ ընդ ծուխս ինչ աշխարհի իրացս գայցէ, բժաբեր արտօսրալից լինիցի, և զազգի ազգի լալիւնս լայցէ, և ատա և անդ։ Քանզի ծխոյ իսկ նման են ամենայն իրք մարդկօրէնք. վասն որոյ և ոՀն ուրեմն

ասէր, «Պակասեցին իբրև զծուխ աւուրք իմ»։ Ահա զկարճն և զանկայ ժամանակ ողբայր. բայց ես ոչ միայն առ այն ասեմ, այլ և 'ի խառնութեան ինչ իրս պատշաճ համարիմ առնուլ զասացեալսն։

Ինքն ինչ որ այնպէս արտմեցուցանէ զակն ոգւոցն և պղտորէ, որպէս աշխարհական հոգոց բազմութիւնք, և չարեաց ցանկութեանցն յաճախութիւնք։ Քանզի այնպիսի փայտի է ծուխն. զոյնպէս և հուր՝ յորժամ զդէջ և զդալար անտառաւք վառիցի, ծուխ յորմէ. նոյնպէս և ցանկութիւնն յայնժամ սասատիկ մրրկի, յորժամ 'ի դէջ և 'ի լոյծ ոգիսն բորբոքիցի. քանզի և նա յաճախ ծնանի զծուխն։ Վասն այսորիկ ասէ պէտք են հոգևոր ցողոյն, և խաղաղ օդոց զի զհուրն շիջուցանիցէ, և զծուխն պարզիցէ, և թրջուն զմիտսն գործիցէ։ Քանզի չէ և չիք իսկ հնար՝ այնչափ չարեաւք ծանրանալ, և երկինս թռչել. այլ պարտ և պատշաճէ զմէջս պնդել, ժրանալ, հատանել անցանել զայն ճանապարհս. մանաւանդ եթէ և այնպէս չէ հնար՝ թէ ոչ զհոգւոյն թևս առանցեմք։ Իսկ եթէ մոաց երագութեան և հոգևոր շնորհաց պէտք իցեն երանելոյ յայնպիսի բարձուն, յորժամ ոչ այնպիսի ինչ իցէ, այլ ամենայն հակառակ, և սատանայական ծանրութիւն, ոչ ապաքէն 'ի խոնարհ սոցիցիմք. զիարդ կարիցեմք 'ի վեր թռանել՝ուր այնչափ ծանրութիւն 'ի վայր ձգիցէ։

ՀԱՒԱՏԱՑԵԼՈՅՆ լուսաւոր աշխարհի արժան է լինել՝ և աղ։ Իսկ արդ յորժամ և անձինդ լոյս ոչ տայցես, և զքո լուծութիւնդ չպնդիցես, ուստի զքեզ ճանաչիցեմ այնուհետև զի յաղբիւրս սրբութեանցն հասեր։ Քանզի մեծ պատիւ այնոցիկ՝ որք ոչ ըստ արժանի պատուոյն կամիցին կալ, յաւելուած պատժոց է։ Հաւատացելոյն ոչ միայն յորոց առն Աստուծոյ, այլ և յորոց ինքն նպաստ եղև, պարտ է պայծառանալ, և ամենայն ուստեք ծանօթաւոր լինել, և 'ի գնացից, և 'ի հայեցուածոց, և 'ի կերպարանաց, և 'ի բարբառոյ։ Զայս ասեմ, ոչ զի 'ի ցոյց լինէ՝ այլ զի յօգուտ տեսողացն զանձինս յարգեսցուք։

Իսկ դա աւադիկ՝ ուստի և կամիցիմ զքեզ ճանաչել, ամենայն ուրեք 'ի նոցուն հակառակաց գտանեմ զքեզ երևեալ։ Եթէ 'ի տեղեացն կամիմ զքեզ ճշգրտել, 'ի ձիոցն ասպարէզս, և 'ի թատերս, և յանօրէնութիւնս տեսանեմ ցանկորդեալ, 'ի չար ժողովս, յապականեալ մարդկան հաղորդութիւնս։ Եւ եթէ 'ի կերպարանաց, երեսս լկտիս, և միշտ յայրասս տեսանեմ, և պաճուճեալս իբրև զբոզիցն և զկորուսելոցն։ Եւ եթէ 'ի հանդերձիցն, քան զգուսանացն ոչինչ լաւագոյն։ Եւ եթէ 'ի ապասաւորացն, հացկատակաց սուտակասպասս կուտեալ շրջեցուցանես։ Եւ եթէ 'ի բանից, ոչինչ առողջ և կարևոր, և ոչ որ ունի հաստատուն

զմեր կեանս, և լսեմ (զքեզ) բարբառեալ։ Եւ եթէ 'ի սեղանոյ, անտի բնաւ իսկ յաճախ երևի ամբաստանութիւնն։

Եւ արդ ասէ՛ ասա՛, ուստի կարիցեմ ճանաչել զքեզ՝ եթէ հաւատացեալ ես. զի զոր ասացաքս, ամենեքին իսկ հակառակս նոցին բերեն զքէն հաշիւս 'ի մէջ։ Եւ զի՞նչ ասիցեմ եթէ հաւատացեալ, նա բընաւ թէ և մարդ իսկ իցես, չկարեմ ասոյգ իմանալ։ Յորժամ կցածիցես իբրև զէշ, և եղջիւր ածիցես իբրև զցուլ, և վընջիցես 'ի կանայս իբրև զձիս, և շուայտիցես իբրև զարջ, և պարարիցես զմարմինդ իբրև զջորի, և ոխս մեծերեալ պահիցես իբրև զուղտ, և յափշտակիցես իբրև զգայլ, և ցասմամբ վառիցիս իբրև զօձ, և խայթիցես իբրև զկարիճ, և ազուռ լինիցիս իբրև զիժ, և թոյնս պահիցես իբրև զքարբ, և կռուիցիս ընդ եղբարս իբրև զդև չար։ զիա՞րդ կարացից զքեզ ընդ մարդկան հաշուել, յորժամ ո՛չ տեսանիցեմ 'ի քեզ նկարագիրս այսպիսի բնութեան։ Զերեխայն և զհաւատացեալն չգտանեմ իւիք 'ի միմեանց ընտրել, որպէս ո՛չ զմարդ և զգազան գտանել 'ի միմեանց։ Եւ արդ զի՞նչ կոչեցից զքեզ։ գազա՞ն, այլ գազանքն միով իւիք յայնպիսի վնասուց ըմբռնեալ են, և զու միանգամայն ամենեքուքդ զգածեալ ամենեքին՝ քաջ 'ի բաց քան զնոցա անսանութիւնն գնաս գնացս։ Իսկ զե՞ անանունեցից զքեզ, այլ զե ո՛չ ո-

բոլոյնի բռնութեան ծառայէ, և ո՛չ ընչից ցանկանայ։ Իսկ յորժամ քան զգազանս և քան զդևս յաճախագոյն ինքնակարութիւնքս ունիցիս, զիա՞րդ կոչեսցուք զքեզ մարդ։ Եւ արդ ազէ՛ ասա՛. եթէ մարդ չմարթի զքեզ կոչել, զիա՞րդ անուանեսցուք զքեզ հաւատացեալ։

Եւ այն իսկ են անհնարին ազէ՛տք, զի այնչափ յախտի կամք, և չիմանամք զոգւոցն ծիւրութիւն, և չդնեմք միտ ոգեղութեան նորա։ Այլ առ վարսամիրայսն նաեալ՝ և զհերդ փոքրիս, և զհայելին առեալ՝ շուրջ ճշգրիտս իմն նշանակիս զգանգուրս վարսիցդ, և ցմօտակայսն հարցանիս և ցվարսամիրայսն, եթէ գեղեցիկս զգիտակդ յօրինեաց. և թերևս ծերևս իցես, և չամաչես զմանկաւոյ հպտանս հպտել։ Իսկ զոգւոցն ո՛չ միայն զոգեղութիւն, այլ և զգազանի կերպարանս յանձին ցուցեալ, ո՛չ սակաւիկ ինչ զգամք։ Որ զի և ասա հայելի հոգևոր կայ առաջի, և ևս լաւ է և ազնուագոյն քան զայն. որ ո՛չ զոգեղութի միայն ցուցանէ, այլ յանհնարին գեղն փոխէ՝ եթէ կամիցիմք։ Եւ այն յիշատակն է արանց առաքինեաց, և երանելի կենացն նոցա պատմութիւն, և գրոց ընթերցուածք, և ասուածատուր օրէնք. եթէ մի անգամ միայն կամիցիս հայել ընդ պատկերս այնպիսի օրբոց, և զքո մտացդ զոգեղութիւնս տեսանիցես, և տեսեալ՝ ո՛չ ևս ուժեք այնուհետև կարօտ լինիցիս զեր-

ծուցանել զքեզ 'ի յոռութենէ։ Քանզի այնմ պիտանացու է մեզ հայելին, և զիւրին գործէ զփոփոխումն։

Այ՛ որ այսուհետև յանապատոյն ազերդութիւն մնասցէ։ Եթէ ծառան 'ի տուն հօր չմտանէ, յորժամ և գազան ևս լինիս, զիարդ կարիցես գոնէ զարտաքին հրապարակն կոխել։ Եւ զի՞ ասիցեմ գազան. քան զամենայն գազանս ևս դժնդակ է այնպիսին. զի նոքա թէպէտ և բնութեամբ ունին զգազանութիւն, մարդկեղէն արուեստիւք պատրեալ՝ բազում անգամ դան 'ի համբոյր։ Իսկ դու որ զնոցա գազանութիւն 'ի չբնակաւոր (անբնական) զգօնութիւն դարձուցանես, զո՞ր պատասխանատուութիւն ունիցիս, որ զքո բնակաւոր (բնական) հեզութիւնդ 'ի չբնակաւոր գազանութիւնն հաներ։ Զմայրենին բնութեամբ՝ ընտանի արարեր. և զընտանիդ բնութեամբ՝ արտաքոյ բնութեան վայրենի կացուցեր։ Զառիւծն ոզոքես և 'ի համբոյր ածես. և զքո ցասումնդ՝ քան զառիւծուն վայրենագոյն կազմես։ Թէպէտ և անդ երկու իսկ արգելք իցեն. զի 'ի մատցն զրկեալ է, և զի գազան՝ և քան զամենեսեան բարկագոյն է. բայց սակայն յաճախութեամբ Աստուծոյ իմաստութեանն՝ որ տուաւ քեզ՝ և բնութեանն յաղթես։ Եւ արդ որ գազանացն բնութեան յաղթես, զիարդ քեզ բնութիդ և կամացդ մատն լինիցիս։ Եւ եթէ զայլ

մարդ հրամայէին բեզ զզօնացուցանել, և
ոչ այնպէս ինչ անհնարին համարեալ էր
զհրամանն. բայց սակայն զոյր պատճառս
յառաջ բերել՝ զչինելն տէր ընկերին կա-
մաց, և զչառնելն ձեռնհաս ամենայնի. զա
ւադիկ քո է զաղանդ, և չկամիս տիրել.

Եւ արդ զոր պատասխանատուութիւն
ունիցիս. որպիսի՞ զիպող պատճառս յառաջ
բերել կարիցես. որ զառիւծդ մարդացուցա-
նես, և զանձնէ անիրոյն առնես՝ 'ի մարդոյ
առիւծդ եղելոյս 'Ոմն զչբնաւորն շնորհես,
և անձինդ զբուռնդ չպահես. այլ զիայրենի
զաղանն 'ի մեր ազնուականութիւնս չա-
նաս ածել, և զ բեզ յանձնոյ ճապաւորուն
կործանես, և 'ի նոցա մարդուն մեզս ընկեր
նուա Համարեսն, թէ կամիս (զզօնացուցա-
նել) և զցասուցիչն՝ զաղան. և որչափ այլք
յառիւծն, նոյնպէս և զու 'ի նա ցոյց փոյթ,
և զզօնացու և ցանց զայնպիսի խորհուրդս.
քանզի և նա սատակիչ ժանիս և մագիլս ու-
նի. և եթէ ոչ ցանցուցանիցես զնա, զամե-
նայն սատակէ. Զի ոչ այնպէս առիւծ և ինձ
ծանուցեն զաղիս, որպէս ցասուցիչն միշտ
երկաթի մագլաբ զնոյն գործէ. ոչ զմարմին
միայն ապականէ, այլ և զոգիսն եղծանէ,
և զառաջնութիւնն ուտէ. պատառէ և կո-
տրէ զամենայն զզգուութիւն նորա, և ան-
գիտաւն առ ամենայն իրս գործէ.

Եթէ որդուն որ 'ի փոքր պարարիցէ,
ոգի անգամ չկարիցէ առնուլ, յորժամ 'ի

ներքուստ ուտիցն զնա ամենեքին։ Իսկ մեք որ զայնպիսի օձ 'ի փորի ունիմք՝ որ ուտէ 'ի ներքոյ, զցաւանելն ասեմ, զի՞նչ ինչ բաւութիւն ծնանել կարիցեմք. և կամ զիարդ ապրեցուք յայնպիսի ժանտէ։

ԱՆՐԱՐԻՏԵՍԱՍ

Աստուած զգիրսն եղ առաջի, և զմիտս պատգամացս զեղծեալց. զգիրս եմ, և զզօրեալ մեկնութիւնսն չմերկացցէ, այլ եմոզ 'ի հրահանգս ապստամբեալց քոյոց արշաւանացդ, զի զքո մատաղութիւնն կրթեսցէ. զի անուանիցէ՝ ծառայիցեա գրոց, եմէ բռնագրաւեսցես զգիրս։ Զորոշիչսն զբնութիւնն եղ առաջի Աստուած, և զարուեստն թաքոյց. ամենայն նիւթք և տատգէք եղան առաջի յԱստուծոյ, և արուեստն 'ի մտաց մարդկան ծնաւ. նոյնպէս և 'ի գիրս։

Եւ զի և յայտնագոյն զբանս արարիցէ, եղ առաջի Աստուած զքարանց բնութիւն, և ոչ զշինուածն պատրաստական։ Եմ ցորեան, և ոչ եմէ հաց գործեալ, և եղ առաջի։ Եմ խաղող, և ոչ եմէ գինի ինքնին արար զխաղողն։ Եմ ասր, և ոչ եմէ զհանդերձն ինքնին գործեալ։ Եմ գոսկին խառն ընդ հողոյ, այլ ոչ եմէ ինքն ընտրեալ 'ի հողոյն։ Ընդէր. քանզի ըստ պատկերի Աստուծոյ արարաւ մարդն, բաժանէ զարար-

չութիւնն։ Ինքն առնէ, և նմա արուեստիւն տայ կազմել զգործն։ Զոր օրինակ զմարդն՝ որ ըստ պատկերին Աստուծոյ արարաւ, խառնէր 'ի բաժին՝ երեսոցն անուանս դնելոյն. ինքն իբրև զարարիչ 'ի չգոյէ 'ի գոյ ածէր, և պատկերին զանուանս հրամայէր դնել. նոյնպէս և զնիւթն ինքն եցոյց, և զկազմած գործոյն յարուեստն ապաստան արար։ Ո՞ նախ կազմեաց արօր՝ փայտիւ և երկաթով զերկիր պատառել, և ակօս բանալ, և լուծ կազմել, և ձիգ և երգնս սամերտիւք 'ի գործ լծել։ Լոր փայտն և երկաթն, այլ արուեստն չէր՝ ուրեք 'ի միջի։ Ո՞ եցոյց քեզ, այր դու, եթէ այդպէս արօր կազմիցի, կամ խիստ բնութիւն երկաթոյ հրով կակղացի. ո՞ եցոյց քեզ հանգամանս յայնչափ թանձրութենէ՝ նատել տուայտել, և ասեղն մի փոքրիկ գործել. ո՞ արկ քեզ 'ի միտս՝ դրանց աղխս և փականս գործել, և կամ ձողունս և յարկս տանց յարդարել։ Կարի, ասէ, տխմարաբարս իմն հարցանես, զԱստուած հնարացոյց 'ի միջի ունիմ, և հարցանես, թէ Ուստի՞ ուսար։

Լոր այսպէս, երբարբ, ամենայն ուրեք մարդկեղէն բնութիւնս իբրուտ տեսան նմանեալ, զարդարէ արուեստիւ զբնութիս. և եթէ 'ի չափու կացցէ, բարեոք է պատկերն. ապա թէ ըստ չափն անցանիցէ, թշնամանի անչափութեամբն։ Այսպիսի ինչ իմացաւ մղել զեզն, վարժել զձի, հնազան-

գել զուզա, և զայլ ևս անասունս՝ որ 'ի սպասաւորութիւն մեզ տուան։ Բայց առագահութեան իմացաւ և այլ ինչ խառնս արտաքոյ քան զբնութիւն, զէշ ձիոյ արձակել, որ չէր ըստ կամացն Աստուծոյ, քանզի 'ի սկզբանէ ասաց Աստուած, եթէ Հանցէ երկիր ջրիքոտանիս, և զերուանս ըստ ազգի իւրեանց. հնարեցաւ ագահութիւնն և այլ իմն խառնս արտաքոյ քան զբնութիւն խառնել։ Վասն որոյ և Աստուած՝ զի զանչափութիւնն պատժեսցէ, անծնունդ արար զմարդկեղէն ագահութիւնս, վասն այնորիկ չծնանի ջորի. զի չէ յայնցանէ, որք իբրև եղեն՝ լուան, եթէ Աճեցէք և բազմացարուք և լցէք զերկիր։ Սակայն թոյլ տայ պատկերին գործել զինչ և կամի, զի զզօրութիւն նորա ցուցանիցէ, և զանչափութիւնն պատժիցէ, և զհպարտութիւնն ցածուցանիցէ։

Դարձեալ անչափ ցանկութիւնն մտաբերեաց գործել պատկեր մարդակերպ. թող նմանեցից, ասէ, Աստուծոյ, որ արար զպատկեր մարդոյ, և արարից պատկեր մարմնոյ. և բռնադատէ արուեստիւ զբնութիւն։ Եւ քանզի լուաւ, եթէ Աստուած յերկրէ առ հող և արար զմարդն, 'ի վարանս մտեալ արուեստն, քանզի չկարէ ճշմարտութեամբ նմանել տեսառն իւրում, այնուհետև 'ի հնարս և 'ի հայթայթանս ապաստան լինի. ժողովէ արմատս և ծաղիկս՝ վասն զգոյնս

յարմարելոյ, նմանեցուցանէ զաչս՝ աչաց, այլ չտեսանեն. չափէ ականջս, այլ չլսեն. յղկէ զունչս, և չհոտոտին. կոշրատէ զբերանն, այլ չիք բարբառ 'ի շրթունսն. զձեռ ոտիցն և բարձիցն յօրինէ, այլ չիք գնացք և քայլք ոտիցն։ Զի այնու յայտ առնէ, թէ թոյլ ետ պատկերին զինչ և կամիցի գործել, և չելանել ըստ զչափ. զի մի 'ի հպարտութիւն գայցէ, և չճանաչիցէ զքնութին, և ոչ զանձին զազատութիւն և զփրկութիւն։ Բայց սակայն զի ուսան՝ եթէ յերկրէ ստեղծ Աստուած զմարդն, և միւսով արուեստիւ կամին նմանել տեառն և արարչի, բժշկաց արուեստիւն։ Յորժամ տեսանիցէ 'ի մարմինն փուռ, երկաթ 'ի գործ արկանէ, և զփուռն 'ի զատ հատանէ։ Եւ յորժամ զվէր փորել կամեսցի, շինէ հաստացանէ, և ածէ 'ի չափ զկերեալ մարմինն. արարիչ ոչ է, թէ վերստին ստեղծանէ։ Եւ արդ զի՞նչ արուեստ պատկերին գործիցէ՝ նմանել տեառն խրատ։ Ընթանայ նա 'ի հողն, ուստի մարմինն ստեղծաւ, և կազմէ անտի գեղս և սպեղանիս. միոմն քակէ ըզփուռն, և միւսումն շինէ, և այնպէս ընու զթերութիւն մարմնոյն։

Լ. Եւ տես զզարմանալիսն. զի արդ նատի Աստուած և խրիմ ընդ որդիս նայի։ Եւ զի՞նչ յայտ նայելն առնիցէ. ոչ զի ուսանիցի, այլ զի կրթեսցէ. և այնպէս աղբիւրն ամենայն բարութեանց խրատէ զիւր պատ-

կերն։ Որպէս զառաջինն ած կացոյց առ Ադամայ զամենայն գազանս և զանասունս և զթռչունս, տեսանել զինչ կոչեսցէ զնոսա. ոչ զի ուսանիցի ամենագէտն, այլ զի զպատկերն կրթեսցէ։ Ցանկ իսկ 'ի միտ դնելոյ ցուցան հանդամանք օգտիցն շինողութեան, և հիւանդութեան, նաւապորդութեան և գարբնութեան և ոստայնանկութեան։ Ղաւ ընդ ասուեղս նայել չէ գատարկութեան գործ, այլ նշմարել զկարգս ասուեղացն՝ նաւորդացն օգուտ է, և անասալ ասուեղացն արևելեան, և ժամանակ 'ի գիւր իւրն նաւարկուէ ճանաչել. ոչ ծնունդս ինչ ասեղծանել, և ոչ զբաշխի և զբախտի առասպելս 'ի մէջ բերել. այլ զհետ բարբառոյ տեսան երթալ. եթէ Եղիցին լուսաւորք յերկինս, և ծագեսցեն յերկիր, և եղիցին 'ի նշանս և յաւուրս և 'ի ժամանակս։

Օ՛ի մի համարեսցիս, եթէ պատկերն անձամբ ինչ գտանիցէ զհնարս ամենայնի, միով բանիւ յայտ առնէ երանելին Պաղոմոն. Ղա եռ ինձ, ասէ, ճանաչել որ ինչ և իցեն անվրէպ, գիտել զհաստատութիւն աշխարհի, զյօրինուածս արարածոց, զսկիզբն և զկատարած և զմէջս ժամանակաց. զշրջանս տարեաց և զկարգս ասուեղաց. զբարս անասանց, զզայրու�գազանաց և զտունկս ազգի ազգի, և զզօրութիւնս արմատոց. որ ինչ 'ի ծածուկ իցէ՝ և որ ինչ յայտնի, որ երևի՝ և որ աներևոյթ, ծանեայ, ասէ, ես

մարդ՝ փոխանակ ասելոյ՝ թէ պատկերս։
Եւ զիարդ։ Ասէ. Իմաստութիւնն՝ ճարտ-
ատարարեալն ամենեցուն ուսոյց զիս։ Այլ
ուսոյց քեզ զչափոյն, և ոչ զանչափն։
Տես, յորչափ անչափութիւն տարածեցաւ
և ել արուեստն։ Հայեցաւ 'ի մարդկեղէն
բնութիւնս, և պատկերն Աստուծոյ ած զգ-
ծաւաւ, թէ զիարդ գործն բարբառոյ բերա-
նոյն կազմեաց իւր։ Ընկատեաց զբնութիւն,
ներանեցուցանէ արուեստն բնութիւնն,
և հնարն իւն հնարս 'ի բազուկ փոզոց
ընդ միմեանս յարելոց, յերեսաս խառնելոց։
Եւ տես, զինչ գործէ արուեստն՝ ներանել
գործոյ ճարտարարարեալն։ տիկս իւն կազմէ,
որ ոչ յանձնէ ունիցին զփուչն, այլ ընդ
ատ և ընդ առնուլ, և ընդ բանալն և ընդ
խփել՝ առնուցուն փոխ օտար օդ, և ապա
յերիսուց փչոցն 'ի ցնցուղն հոգմարերս,
և անտի յետ փոզն ատ զփուչն։ և իմա-
նայ, (զի) թէ պէտ և փուչն խաղայցէ 'ներսագ
ինչ չհարկանէ։ և այնմ ևս հնարս հնարի՝
մատամբք յօրինել, և զերգելն զներսագն։
Եւ ուստի՞ իւր քեզ այն, ով մարդ, ուստի՞
իմացար զփուչն օդ ընկալս կազմել, և զմրդ-
եալ օդն մատամբք 'ի ներսագս յօրինել։ Պարի
իւն, ասէ, տխմարարար հարցանես։ ոչ կան-
խաղայն իսկ ատացի, թէ պատկեր եմ Աս-
տուծոյ, և ասէն յիմ բնութիւնս հայե-
ցայ, և ներանեցուցի։ քանզի յիս տեսանեմ
օտար շունչ ներկուստ, և պատեալքս ասէր

բանալով և խփանելով՝ բնդունին զօդն հաստատակաթուռն։ Ցեռանեմ, զի երկու փողակք ունին և առնուն զօդն, իբրև ցնցղով խփէք սոսորդով 'ի քերթուն։ ասեմանեմ զի և օդն մտանէ, և խօսք չլինին, թէ ոչ լեզուն 'ի մէջ անցեալ գնուսգան յարդարելոյ։ Հայեցայ յիս, և նեմանեցուցի յիմ բնուն թեանէս, և անձամբ յանձնէ հասու եղէ սեռաւն արուեստին։ որպէս և Դաւթեմ ասէ, թէ Ամբանչելի եղև գիտութիւն քո յիս։ ասէ՝ յիս նայեցայ, և զարուեսասգէսն փառաւորեցի։ Նմանեցայ խնում սեռաւն, և արուեսաբեն զբնուն թեանս յայտ յանդիման նկարեցի։

ԼԻԱԼՐԻԱՆ

Ի ՑՈՎԻԵՊԱՑ ՑԱՌԱՋԻՆ ՆԱԽՆԵԱՑ ՊԱՏՄՈՒԹԻՆՆ։ ՀՆԱՐՈՒԹԻՒՆՈՍՈՐԱՑ

ՆԱՈՒՆՑԻՑ, ասէ, այժմիկ զան 'ի Քաղդէացւոց մի բան մրոջէ զմէնջ գրեսրան և զպատմեսրս։ յորս կայ բանդում մրարանուեթիւն և առ այլ եւս մեր գիրս։ Եւ միայ այսոցիկ Բերոսոս է՝ այր Քաղդէացի յազգէ, և երևելի յամենեսին, որք գիրսրաս և զմտասու թեսամբ գային։ քանզի և զասսեղաբիրուեթիւն մտասեանս, և որ ինչ 'ի Քաղդէից Ճարտարուեթիւն իմասասու թեան պատմէր, նա ի հան 'ի Յունաց լեզու։

'Այլն խակ Բերոսոսն մասագրեր զհետ երկեսասք առաջնոցն մասանելոց՝ վասն ջրհեղեղին

և բնաջինջ մարդկան ապականութեանն լինելոյ՝ զնոյն ձև ըստ Մովսիսի պատմութեանն վիպագրեաց. և վասն արկղակերտ տապանին որով Նովքոս նախնին մերոյ ազգիս ապրեցաւ, և երթեալ դադարէ 'ի գլուխս լերանց Հայաստան աշխարհին։ Եւ ապա մի ըստ միոջէ 'ի Նովքա համարեալ, և զնոցին ժամանակն յաւելեալ, 'ի Նաբուպաղասարոս 'ի Բաբելոնի և Քաղդէացւոց թագաւորն եկեալ հասանէ, և զնորա զիրս և զարութիւնս պատմեալ, ապա ասէ՝ թէ յոր իրս և յինչ միտս առաքեաց յերկիրն Եգիպտացւոց, և 'ի մեր աշխարհս զիւրոյն որդին Նաբուկոդրոսորոս յաճախագունդ զօրօք՝ բազմատարած բանակօք։ Քանզի ազգ լինէր նմա, թէ յապստամբութիւն մտաբերեցին բնակիչք աշխարհին, եկեալ հասեալ ամենեցուն շահեալ տիրէր. և զտաճարն Երուսաղէմի հրձիգ արարեալ եղծանէր. և զամենայն զմերազգեայ ժողովուրդն խախտեալ՝ 'ի Բաբելացւոց երկիրն բնակեցուցանէր։ Դէպ և պատահաբք հասանէին քաղաքին աւերել, տաճարին եղծանել՝ եօթանասնամեայ ժամանակ, մինչև ցկիւրոս առաջին Պարսից թագաւոր։ Տիրել, ասէ, բաբելացւոցն Եգիպտացւոց աշխարհին և Ասորւոց և Փիւնիկեցւոց և Արաբացւոց, անցեալ զանցեալ զամենեքումբք արութեամբ և քաջութեամբ, որ նախ քան զնա Քաղդէացւոց և Բաբելացւոց թագաւորեցին։

Լ.զդ. եղև հօրն նորա Նաբուպաղասարայ, երթէ շահապն նախարարապետ՝ որ կարգեալ կայր 'ի վերայ աշխարհին Եգիպտացւոց և կողմանցն Ասորւոց և Փիւնիկաստանն գաւառացն՝ կապարձաս դարձոյց, յետս եկաց յապստամբութիւն։ Եւ զի չէր առակ այնուհետև ինքն կշտամբել, գումարեաց եդ 'ի ձեռին որդւոյն իւրոյ Նաբուկոդրոսորայ, որ այնուհետև 'ի չափ խակ հասակի հասեալ էր, մասն ինչ 'ի զօրացն. և առաքեաց երթալ 'ի վերայ։ Երթեալ հասեալ Նաբուկոդրոսորոս՝ խուռմբ գործեալ տայր պատերազմ ընդ ապստամբին, և յաղթէր. և զաշխարհն՝ որպէս և էր խակ 'ի բնէ, անդրէն ընդ իւրեանց թագաւորութեամբ նուաճէր։ Իսկ հօրն նորա Նաբուպաղասարայ դէպք առյին 'ի նմին ժամու հիւանդանալ 'ի Բաբելացւոց քաղաքին, և վճարել զկեանս, թագաւորեալ ամս ԻԱ։

Զ. գասա լինէր յետ բազում ժամանակաց Նաբուկոդրոսորայ զհօրն վախճանէ. կարգէր յարդարէր զիրս երկրին Եգիպտացւոց և զայլոցն աշխարհաց, և զգերին Հրէից և զՓիւնիկեցւոց և զԱսորւոց և զԵգիպտացւոց ազգացն. հրաման տայր ոմանց 'ի բարեկամացն հարստաբուռն զօրօք և զայլ ևս զառ և զկահ և զկազմած խաղացուցանել 'ի Բաբելոն։ Երթեալ հասեալ՝ գտանէր նուաճեալ զիրս ամենայն 'ի Քաղդէացւոց, և պահեալ նմա զթագաւորութիւն՝

ուրուն ազնուականին 'ի նոցանէ։ Տիրէր բո-
վանդակ Հայրենի իշխանութեան, և զգեր-
ուցն հրաման տայր՝ յազնիւ տեղիս Բաբե-
լացւոց աշխարհին բնակեցուցանել։ Եւ
ինքն յառէ և յաւարէ պատերազմին՝ զմեհ-
եանն Բելայ և զայլն ամենայն առատու-
թեամբ զարդարէր։ Եւ 'ի բուն քաղաքն և
այլ ևս արտաքուստ 'ի ներքոս յաւել Ջուրս.
և զնդէր զտեղիսն, զի մի ևս լինիցի հնար
պաշարողաց՝ զգեան 'ի քաղաքն գարձուցա-
նել։ Եւ յաւելոյր երիս պարիսպս ներքնոյ
քաղաքին, և երիս արտաքնումն. և զկէս
պարսպացն 'ի նիւթծուն ագիւռոյ և 'ի նաւ-
թէ շինէր, և զկէսն 'ի լոկ ապիւռոյ, և պա-
տէր ազնուագոյնս զքաղաքն պարսպօք, և
զդրունսն զարդարէր զխցագունս։ Եւ այլ
արքունիս մօտ 'ի Հայրենի արքունեան շինե-
ալ յաւելոյր. զորոց զչափ և զգեղ և զազ-
գի ազգի յօրինուածս Հազիւ ոք ուրեք ե-
թէ պատմել կարասցէ. բայց այնչափ միայն՝
թէ կարի նորակերտ նորանշան մեծապայ-
ծառ և չնաշխարհիկ գործ էր, և կատարե-
ցաւ համօրէն 'ի հնգետասան աւուր։ Եւ
յարքունեան աշտարակաբարկուիս բարձ-
բաբերձս հանդերձ մահարձանօք շինեալ
յօրինէր. և զձակատս կողմակացն 'ի նմանու-
թիւն լերանց յարդարէր։ Եւ անկեաց ծառս
ազգի ազգիս. և գործեաց և կազմեաց զան-
ուանեալ բուրաստանն կախաղանաւ, վասն
անեղանաց կնոջն իւրոյ 'ի լեռնային հոմա-

սուն վայրաց, որ 'ի Մարաց աշխարհին հովատուն սնեալ էր։

ԼՈՒՐԵԼ։

Լուրերև այս այսպէս հատատեցաւ կազմեցաւ, երևեցան ամենեքեան զինեալք և սաղաւարտեալք, սուր ընդ մէջ և վահան 'ի ձեռին՝ ոչ միայն արանց քաջաց, այլ և կանանց առնականացս։

Իսկ գունդն Հայոց ամենայն օգնականաքն հանդերձ և մոգայն բազմութեամբ յամենեանն չորրորդի եկին հասին յաշխարհն Հայոց, 'ի գիւղաքաղաք մի մեծ՝ որում անուն էր Ընդդ։ Բանակեցան, բոլորեցան, զեռեզեցան, և յամենայն կողմանց անդր ժողովեցան, և էին անթիւ բազմութիւն։

Եւ եղև յետ աւուրց քանի և հնգից, մոգպետն ինքնին մոգօքն հանդերձ հասանէր մեծաւ զօրութեամբ՝ քակել զդրունսն եկեղեցւոյն յաւուր միաշաբաթուն. ըզփորձ առնուլ կամէր զառաջարկութեան գործոյն։ Իսկ սուրբն Ղևոնդ երէց միաբանութեամբ՝ առաջին խորհրդակցօքն և բազում ուխտիւ 'ի տեղւոջն անդ պատրաստական դիպեցաւ, ոչ ետ թոյլ։ Թէպէտ և ոչ էր տեղեկացոյն մոգացն ամենեցուն նախապարացն, և ոչ զօրութեան ուժոյ մոգպետին, ոչ ինչ եկաց ձեռաց ամենայն եպիսկո-

պոսացն, և ոչ առ սակաւ մի համբեր անօրէն իշխանին թողացուցանել. այլ բազում ամբոխ ազազակի զօրացն և մոգացն հասուցանէր։ Քանզի վերգս 'ի ձեռն առեալ՝ զկառափուն մոգացն և մոգպետին ջարդեցին. փախստական յիւրաքանչիւր վանսարկանէին, և ինքեանք զպաշտօնն բարձրացուցեալ յեկեղեցւոջն՝ զտերունական կանոնն կատարէին, մինչև 'ի նոյն միաշաբաթին անդադար լինելով։

Եւ յետ այսր տապնապի խռովութեան՝ յամենայն կողմանց յաշխարհէն Հայոց բազմութիւն արանց և կանանց 'ի տեղին հասանէին։ Եւ անդ էր տեսանել զմեծ աղէտ տարակուսին. ոմանք զգերաբոսսն իւր յաղբերականց հոսէին յաչաց իւրեանց. այլք ի բարձրաձիչ ազազակաւ՝ իւր այն թէ զերկինս դողացուցանէին. իսկ կէսքն խիզախելով և 'ի զէնքն թանալով՝ զմահ քան զկեանս ընտրէին։ Իսկ ոմանք 'ի սուրբ ուխտէ եկեղեցւոյն՝ զաւետարանն 'ի ձեռն առեալ, աղօթիւք առ Աստուած կարդային. և այլք ըղձանային զպատառուածն երկրին, զի անձանց լեցի գերեզման։ Եւ այսպէս շատապ տապնապի 'ի վերայ մոգպետին հասուցանէին։ Բազում անդամ ազաչէր զօրնականսն իւր, զի 'ի մահուանէ կարասցին զնա ազատեցուցանել, և ոչինդամ անդ էին յարքունիս հասուցանել։

Ել վասն գործոյն յոր եկեալն էր՝ ասի-

պէր գնոսա և ասէր. Թող գրեմ և ցուցա-
նեմ մեծ թագաւորին, զի 'ի բաց թողցու-
ցանէ զայսպիսի իրաց առաջարկութիւն.
զի եթէ ինքեանք ասատուածքն եկեսցին յոգ-
նութիւն, չէ հնար օրինացս մոգութեան 'ի
Հայս առնուլ զհաստատութիւն. որպէս բզ-
մորձ առն միաբանութեան ուխտին եկե-
ղեցւոյ։ Զի թէ էին զօրք աշխարհիս մոգք,
ոչ ինչ խնայէին սոքա 'ի նոսա ասատկմամբ՝
ոչ միայն յարտաքինան, այլ և յեղբարս և
յորդիս և յամենայն մերձաւորս իւրեանց,
նա և ոչ յանձինս իւրեանց։ Մարդք՝ որք ոչ
'ի կապանաց զանգիտեն, և ոչ 'ի տանջանաց
երկնչին, և ոչ 'ի սատացուածոց պատկառին.
և որ յետին չարէ քան զամենայն չարիս,
մահ քան զկեանս ընտրեն. ամէ որ կարէ
նոցա զիմակաց լինել։ Լուեալ իսկ իմէր 'ի
նախնեաց մերոց, եթէ յաւուրս Շապհոյ
արքայից արքայի, իբրև սկսաւ ուսումնդ այդ
ածել և բազմանալ և լնուլ զամենայն եր-
կիրն Պարսից, և ևս անդր յարևելս հասա-
նել, իսկ որ վարդապետքն էին օրինացն մե-
րոց՝ յորդորեցին զթագաւորն, զի մի բնաւ
ամենեին բարձցին օրէնք մոգութեան յաշ-
խարհէն, եթէ հրաման սատակիկ, զի լուեալ զա-
դարեսցէ 'ի քրիստոնէութիւնն։ Եւ որչափ նա
կամեցաւ արդելուլ, ևս քան զևս ածեցին և
բազմացան, և հասին մինչև յաշխարհն Քու-
շանաց, և անտի 'ի հարաւակողմն մինչև 'ի
Հնդիկս տարածեցաւ։ Եւ այնպէս աներ-

կիւղ և համարձակք էին յաշխարհին Պարսից, մինչև յամենայն քաղաքս աշխարհին եկեղեցի շինեցին, որ զանցուցանէր պայծառութեամբ զթագաւորական պրքունեաքն։ Շինէին և վկայարան իմն անուանեալս, և զնոյն զարդ եկեղեցեաց զարդարէին, և յամենայն տեղիս՝ յապառաս և յանապատս միայնանոցս շինէին։ Եւ իբրև ոչ մնչ երևէր յայտնի օգնութիւն ուստեք, ամենեքեան ամէն և բազմանալով բազմանային. և մարմնաւոր մեծութեամբ մեծանային։ Զպատճառս հարստութեան մեք մնչ ոչ գիտէաք. բայց այսչափ մնչ ճշմարտիւ իմանայաք, զի տիեզերքք ամենայն զկնի ուսմանց նոցա գնային։

Թէոդորոս և արկ 'ի նոսա թագաւորն բազձեան իւր խստութեամբ, և զբազումս կալաւ և չարչարեաց 'ի նոցանէ, և զևս բազումս մահուամբ սատակեաց, դառնացաւ և ձանձրացաւ յանձն իւր, և զնոսա ոչ կարաց նուազեցուցանել 'ի բազմութենէն։ Դարձեալ թէոդոս փակեաց և կնքեաց զդրքուն եկեղեցեացն ընդ ամենայն աշխարհն Պարսից, նոքա զամենայն տուն եկեղեցի աբարին. և յամենայն տեղւոջ զիւրեանց օրէնսն կատարէին։ Եւ զանձինս իւրաքանչիւր վկայարանս համարէին, և՝ լաւագոյն զշինուածս մարդկեղէնս քան զհողեղէնս հաշուէին։ Սուրբ սպանողացն բթեցան, և նոցա պարանոցքն ոչ ձանձրացան. աւարաւուք սատացուածոց նոցա աշխատեցան,

և աւարն օր քան զօր աճեցեալ բազմացաւ։ Սրամտեալ էր թագաւորն, և յոյժ զառնացեալ զահիճք բարկութեանն. իսկ նոքա արթուն և զուարթուն, և խնդալից ընդունէին զամենայն հարուածս տանջանացն, և սիրով տանէին զամենայն յափշտակութիւն ընչից իւրեանց։

Իբրև եռեան թագաւորն եթէ զառհ տուեալ զիմեցին 'ի մահ իբրև խաշինք սուրբք յաղն երկնաւոր, արգել և կարձեաց 'ի նոցանէ զհարուածս տանջանացն. և հրաման եւ մոգաց և մոգպետացն, զի մի ամենեքին որ խուեսցէ զնոսա, այլ հաստատեալ կայցեն աներկիւղութեամբ յիւրաքանչիւր ուսմունս, մոգն և զանդիկն և հրեայն և քրիստոնեայն, և որ այլ բազում կեշտք են 'ի կողմանս կողմանս աշխարհին Պարսից։ Եւ ապա առ երկիրն գիտազաղութիւն հաստատութեամբ, և լուեալ դադարեցին ամենայն խառնութիւնք յուզմանց։ Քանզի ընդ մերոյ աշխարհին շարժմանն՝ և արևմուտք ևս մեծապէս շարժեցան, և ամենայն Ցաճկատան ընդ նոսին խառնեցաւ։

Օ այն ահա 'ի լսելոյ գիտեմք. բայց այս որ ես ինձէն աչօք տեսի, թուի ինձ՝ թէ մեծագոյն ևս լինի քան զառաջինն։ Արդ դու որ մարգպանդ ես աշխարհս, պարտէ քեզ հոգ յանձին ունել, գրել և ցուցանել յարքունիս զմիաբանութիւն բանութեանս, որպէս աներկիւղութեամբ առ ոչինչ համա-

բեցան զհրամանս աբքունի։ Եւ եթէ չէր մեր աճապարեալ և 'ի փախուստս դարձեալ, միւսմ 'ի մէնջ ոչ տային ապրել։ Եւ եթէ անզէն մարդիկ այսպէս բռնացան, եթէ յանկարծ զինուորս ևս ընդ ինքեանս միաբանեցուցանեն, ո՞կարիցէ կալ առաջի զոցա յանդուգն յարձակմանն։

Լա՛ ահա անտեղեակ էի անքակ ուխտի եկեղեցւոյդ 'ի միմեանց. զի այլ է՝ զոր լսէ մարդ, և այլ է՝ զոր տեսանէ հաստատուն իւրովք աչօքս։ Դու որ 'ի մանկութենէ յայդմ օրէնս ընեալ էիր, և ճշմարտեալ գիտէիր զպնդութիւն մարդկանդ, եթէ առանց բազում արիւն հեղլոյ զոքա մեզ ոչ տան ձեռն արկանել յեկեղեցիսդ։ Ընդէ՞ր ոչ զայդ ամենայն հաւատեաւ յանդիման չասացեր ցմտադաւորն։ Քանզի ամենայն նախարարացն աւագ դու էիր, և զբոլոր աշխարհս քեզ յանձն արարեալ էր մարզպանութիւնամբ. ընդէ՞ր ոչ մեծապէս հոգ տարար յանձն քո։ Զի յայլ ժամս խմաստուն էիր, և ես գիտէի. զայս գործ խմաստութեամբ ոչ գործեցեր։ Ապա թէ ոչ, յայտ է եթէ դու 'ի նոցա բանի ես. և քոյով խորհրդով անցուցին զայս անցս ընդ իս և ընդ զօրս։

Բրդ եթէ այդ այդպէս է, և քեզ կամք չէ ունել զմոգութիւն, մի՛ ինչ պատկառեր դու երկիւղիւ յարքայէ. ես գրեմ և ցուցանեմ 'ի դուռն մոլպետան մոլպետի և գերբանդերձապետի և մեծ հազարապետին, զի

ածցեն զարքայ 'ի հաւանութիւն, որպէս զի 'ի բաց թողացուցցեն ըստ առաջին հրամանին, և 'ի կամս մարդկան ապաստան արասցեն, զի առ սակաւ սակաւ ընդելցին ընդ օրէնս մոգութեանս. զի որք կալցին՝ սիրով երևեսցին կատարեալ զհրամանս արքունի։ Քանզի մարդ է աշխարհս, գուցէ յորժամ վնաս ինչ առնիցեն, և ինքեանք ցրուեալ վատնեսցին յօտարութիւն. իսկ յորժամ աշխարհս թափուր լինիցի 'ի մարդկանէս, յայնժամ և քեզ գլխովին մեծապէս վնաս հասանէ յարքունուս։

ԻՈՐԵՆԱՑԻ

Ի ՄԱՐԻՈՒՍ ԿԱՏԻՆԱՅ

ԱՅՍ, ասէ, Հոյկ գերգապաշտաճ և անձնեայ, քաջագանգուր, խայտակն և հաստաբազուկ. սա 'ի մէջ սկայիցն քաջ և երևելի լեալ, ընդդիմակաց ամենեցուն, որք ամբառնային զձեռն՝ միապետել 'ի վերայ ամենայն սկայիցն և դիւցազանց։ Սա խրոխտացեալ ամբարձ զձեռն ընդդէմ բռնաւորութեանն Բելայ, 'ի տարածանել ազգի մարդկան ընդ լայնութիւն ամենայն երկրի 'ի մէջ բազմակոյտ սկայիցն, անհուն խօլայց և ուժաւորաց։ Քանզի անդ մոլեգնեալ այր խրատանչիւր սուր 'ի կող ընկեր-

րի իւրոյ ձգելով, Ջանային տիրել 'ի վերայ միմեանց. ուր պատահմունք 'ի դէպ երանելին Բելայ՝ բռնանալ ունել զամենայն երկիր։ Որում ոչ կամեցեալ Հայկայ՝ հնազանդ լինել Բելայ, յետ ծնանելոյ զորդի իւր զԱրմենակ 'ի Բաբելոնի, չու արարեալ գնայ յերկիրն Արարատայ, որ է 'ի կողմանս հիւսիսոյ, հանդերձ որդւովք իւրովք, և դաստիրովք և որդւոց որդովք, ամրամբք զօրաւորօք՝ Թուով իբրև երեքհարիւր, և այլովք ընդոծնօք, և եկօք յաբեցելովք 'ի նա, և բոլոր աղխիւ։ Երթեալ բնակէ 'ի լեռնոտին միում 'ի դաշտավայրի, յորում սակաւք 'ի մարդկանէ յառաջագոյն ցրուելոցն դադարեալ բնակէին. զորս հնազանդ իւր արարեալ Հայկ, շինէ անդ տուն բնակութեան կալուածոց, և տայ 'ի ժառանգութիւն Կադմեայ որդւոյ Արմենակայ։ Այս արդարացուցանէ զանգիր հին ասացեալ զոյցս։

Այլ ինքն խաղայ, ասէ, այլով աղխիւն ընդարևմուտս հիւսիսոյ, գայ բնակէ 'ի բարձրաւանդակ դաշտի միում. և անուանէ զանուն լեռնադաշտակին Հարք. այսինքն, ասէն բնակեալքս՝ ազգի տանն Թորգոմայ։ Շինէ և գիւղ մի, և անուանէ յիւր անուն Հայկաշէն։ Յիշէ և աստանօր պատմութիւնս. հարաւոյ կողմանէ դաշտիս այսորիկ առ երկայնանստիւ միով լերամբ բնակեալ յառաջագոյն արք սակաւք՝ ինքնակամ հնա-

զանդել դիւցազնին։ Արդարացուցանէ և այս զասացեալ զբոյցս անդիրս։

Եւ յառաջ մատուցեալ զբանս իւրաս, թէ Ի հաստատել տիտանեանն Բէլայ զթագաւորութիւն իւր առ ամենեսեան, առաքէ 'ի կողմն հիւսիսոյ զմի ոմն յորդւոց իւրոց առ Հայկ արամբք հաւատարմօք, գալ նմա 'ի հնազանդութիւն և կեալ խաղաղութեամբ։ Բնակեցեր, ասէ, 'ի մէջ ցրտութեան սառնամանեաց, այլ ջերուցեալ մեղկեա զցրտութիւն սառուցեալ քո հպարտացեալ բարուցդ, և հնազանդեալ ինձ կեաց 'ի հանդարտութեան, ուր հաճոյ է քեզ յերկիրս իմում բնակութեան։ Եւ 'ի բաց դարձուցեալ Հայկայ զպատգամաւորսն Բէլայ, խստութեամբ պատասխանեաց։ Դառնայ առաքեալն անդրէն 'ի Բաբելոն։

Ապա զօրաժողով լինի 'ի վերայ նորա տիտանեանն Բէլ ամբոխիւ հեռեւակ զօրաց, գայ հասանէ 'ի հիւսիսի յերկիրն Արարատայ մերձ 'ի տուն Պադմեայ. փախստական լինի Պադմոս առ Հայկ, քաջ ընթացիկս առաջի իւր առաքէ. Գիտեա, ասէ, ով մեծդ դիւցազանց, զի դիմեալ դայ 'ի վերայ քո Բէլ յաւէրժիւք քաջօք, և երկայնադիզօք հասակօք սկայիւք մրցողօք։ Եւ իմացեալ իմ զմերձ լինելն նորա 'ի տուն իմ, փախեայ, և գամ աւասիկ տագնապաւ։ Արդ աճապարեա խորհել որ ինչ գործելոց ես։

Իսկ Բէլն, յանդուգն և անձռնի զօրութեամբ ամբոխին՝ որպէս յորձան ինչ սաստիկ ընդ զառ 'ի վայր հեղեալ, փութայր հասանել 'ի սահմանս բնակութեան Հայկին, 'ի սիրտ և 'ի մարմին վատահացեալ արանց զօրաւորաց։ Ասա ուշիմ և խոհեմ սկայն, քաջագանգուրն և խայտակն, աճապարեալ հաւաքէ զորդիս իւր և զթոռուն, արս քաջս և աղեղնաւորս, թուով յոյժ նուազուն, և զայլ ևս որ ընդ իւրով ձեռամբ. հասանէ յեզր ծովակի մոյ, որոյ ապի են ջուրքն, մանուն ունելով ձկուն յինքեան։ Եւ կոչեցեալ զզօրս իւր, ասէ ցնոսա. Ցեղանեալն մեր հանդէպ ամբոխին Բէլայ, դիպել ջանասցուք տեղւոյն՝ ուր անցեալ կայ 'ի մէջ խառան քաջացն Բէլ։ Զի կամ մեռցուք և աղխ մեր 'ի ծառայութիւն Բէլայ կացցէ, կամ զաջողութիւն մատանց մերոց 'ի նա ցուցեալ, ցրուեսցի ամբոխն, և մեք եղիցուք յաղթութիւն սատացեալք։

Լուա յառաջ կոյս անցեալ բռմանդակ ասպարէզս, հասանեն 'ի միջոց ինչ դաշտաձև լերանց բարձրադունից. և յաջմէ ջուրցն հոսանաց 'ի բարձրաւանդակուն կուռ կալով 'ի տեղւոջ։ Ի վերս զերեսս ամբարձեալ, երևեցաւ նոցա բազմութիւն անկարգ հասակի ամբոխին Բէլայ ցան և ցիր յանդուգն յարձակմամբ ընդ երեսս երկրին սուրալով. իսկ Բէլ հեց և հանդարտ ամբոխիւ մեծաւ 'ի ձախմէ ջուրցն 'ի վերայ ոտոյ մի-

ոյ իբրև 'ի դիտանոցի։ Ծանեալ Հայկ զխուսմբ վառելոյ ջոկատին, յորում Բէլ առաջի ամբոխին եկեալ հասեալ ընտրութք և վառելովք ոմամբք. և երկար միջոց ճանապարհին ընդ նա և ընդ ամբոխն. և ինքն գլխանոց ագուցեալ երկաթի, նշանաւորօք վերջօք, և տախտակս պղնձիս թիկանց և լանջաց, և պահպանակս բարձից և բազկաց. գօտևորեալ զմէջն, և յահեկէ զատինն երկայրի. և նիզակն արի 'ի ձեռին իւրում աջոյ, և յահեկու

եալ արքայն տիտանեան զարհուրեցաւ, և 'ի նոյն բլուր ուստի էջն՝ վերջոտնեալ եկանէ. քանզի խորհէր 'ի միջոցի ամրանալ ամբոխին, մինչև հասցէ բովանդակ զօրն, զի միւսանգամ ճակատ յօրինեսցէ։ Զայս իմացեալ աղեղնաւորին Հայկայ, յառաջ վարէ զինքն, մօտ հասանէ յարքայն, լի քարշէ պինդ զլայնալիճն, դիպուցանէ զերեքթևեանն կրծից տախտակին, և շեշտ ընդ մէջ թիկանցն թափանցիկ լեալ՝ յերկիր անկանի սլաքն. և այսպէս ճոխացեալն տիտանեան կործանի՝ յերկիր զարկուցեալ, և փչէ զոգին։ Իսկ ամբոխն տեսեալ զայսպիսի ահագին գործ քաջութեանն, փախեան իւրաքանչիւր դէպ երեսաց իւրեանց։ Եւ վասն այսորիկ այսչափ բովանդակ լիցի ասել։

Բայց զտեղի ճակատուն շինէ դաստակերտ, և անուն կոչէ Հայք, վասն յաղթութեան պատերազմին. այսորիկ աղագաւ և գաւառն այժմ անուանի Հայոց ձոր։ Իսկ բլուրն, ուր քաջամարտիքն անկաւ Բէլ, անուանեաց Հայկ Գերեզմանս. որ այժմ ասին Գերեզմանք։ Բայց զդիակն Բէլայ պաճուճեալ իմն դեղովք, ասէ, հրամայէ Հայկ տանել 'ի Հարք, և թաղել 'ի բարձրաւանդակ տեղւոջ, 'ի տեսիլ կանանց և որդւոց իւրոց։ Իսկ աշխարհս մեր կոչի յանուն նախնւոյն մերոյ Հայկայ՝ Հայք։

2. ԱՍՏԻՃԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹԵԱՆ

ԽՕՍՔԻՆ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ.

Խօսքին կազմուԹիւնն է՝ լեզուին կանոնները ու սովորուԹեանը համեմատ՝ խօսքին կամ նախադասուԹեան մէջ բառերուն շարուիլը։

Ոչաք վերլուծուԹեան աս աստիճանին մէջ խօսքին Հէրականաք ու Յետադարձ կարգը պիտի զանազանենք։ Քանզի խօսքին կազմուԹիւնը երկու կերպ կրնայ ըլլալ. 1. Հէրականաք և 2. Յետադարձ։

Խօսքին կարգը քերականական է, երբոր անոր մէջ բառերը մտածուԹեան վերլուծական կարգովը շարուած են։

ՄտածուԹեան վերլուծական կարգն աս է. Նախ անուն բային՝ որ մտածուած գլխաւոր բառն է, իր ստորակարգեալ կամ իրեն վերաբերեալ բառերովը, ինչպէս են ածականը կամ յատկացուցիչը կամ բացայայտիչը, Թէ որ անիկա ասունցմէ մէկն ունի։

Երկրորդ՝ անուան բայէն անմիջապէս ետքը բայը և անոր քով անմիջապէս մակբայը, Թէ որ կայ։

Երրորդ՝ բային խնդիրները, և նախ սեռի խնդիրը, եԹէ բայը ներգործական է. զորօրինակ՝ Ջուրական ՀաՀ Դանէ արիաբար Հիանալի Էր 'ի Վերայ Հայրենեաց Էրոյ։

Ընբայն Մակեդոնացւոց խորտակեաց զՊարսս 'ի ձակատուն Արբելայ։

Խօսքին ձեւաւոր կարգին մէջ երեք բան կ'ըլլայ.

1. Յեղաշրջութիւն, 2. Աւելադրութիւն 3. Ջնջում. Յեղաշրջութիւնէ երբորբաւելը վերը նշանակուած քերականական կարգէն տարբեր կարգով շարուած են, զոր օրինակ՝

Յայնժամ ելեւեցաւ ահագինն այն բանակ.

Այս խօսքին մէջ անուն բային բայէն ետքը գրուած է. ածականներն ալ գոյականէն առաջ գրուած են։

Պէտք է գիտնալ որ Յեղաշրջութիւնը կամ կարգի տարբերութիւնն օրինաւորէ, քանի որ բառերն ան շրջուն կարգին մէջ նոյն իմաստը կու տան՝ զոր քերականական կարգին մէջ պիտի տային։ Բայց երբոր Յեղաշրջութեան պատճառով բառերը հոմ կամ մութ իմաստ կու տան, ան ատենն յեղաշրջութիւնն ապօրինաւոր է, և ան կարգը ոչ թէ ձեւաւոր, այլ արատաւոր կարգ կ'ըսուի. ուստի և ընդունելի չէ։

Օրինաւոր և ապօրինաւոր յեղաշրջութեան մէյմէկ օրինակ տանք։

Յորժամ զաներևութէն և զնորին զմբշտընջենաւոր զօրութենէն ճառիցէ ոք։ քան-

զի մարմնաւոր լեալ է, պարտի զմիտս յըստակել և զխորհուրդս սրբել, զյոյզս շարժմանց պարզել, զի յայն զոր առաջի եդ՝ հասանել կարասցէ։ Այս և որ ընդ ճառագայթս արեգական հայել կամիցի, պարտի զպղտորութիւն աչացն՝ զաղտն և զբիծն 'ի բաց պարզել, զի մի մթարքն որ զբբոք շողայցեն, արգել հայելոյ 'ի յստակութիւն լուսոյն լիցին։

Այս պարբերութիւնը որուն կարդը ձեւաւոր է, ըստ որում յեզաշրջութիւն կայ, քերականական կարգով շարուելով դարձեալ միևնոյն իմաստը կու տայ. զոր օրինակ.

Յորժամ ոք ճառիցէ գանելութէն և զմշանջենաւոր զօրութենէ նորա, քանզի լեալ է մարմնաւոր, պարտի յստակել զմիտս և սրբել զխորհուրդս, պարզել զյոյզս շարժմանց, զի կարասցէ հասանել յայն զոր առաջի եդ։ Այս և որ կամիցի հայել ընդ ճառագայթս արեգական, պարտի 'ի բաց պարզել զպղտորութիւն աչացն՝ զաղտն և զբիծն, զի մի արգել լիցին հայելոյ 'ի յըստակութիւն լուսոյն մթարքն՝ որ զբբոք շողայցեն։

Ուրիշ օրինակ մը տանք, ուր շրջուն կարգն արատաւոր է, քանզի բառերն իրենց յարաբերութիւնը ճիշդ չեն ցուցուներ այնպէս

ինչպէս որ քերականական կարգով շարուած առնն պիտի ցուցընէին։

Զանազան խաղացմունս աստուածայնոցն 'ի քեզ շնորհացն, և զանազան Հոգւոյն 'ի վերայ քո իմացուածոցդ շարժմունս ծանեայ 'ի ձեռն գեղեցիկ խնդրոյս։

Ա. Խօսքին ինչ ասելն ասելու արտասանութիւն ան առնն կ'իմանանք, երբոր քերականական կարգով շարել ուզենք. և չենք կրնար քերականական կարգով շարել, քանզի հոմանիշները չեն ներեր որ բառերուն ճիշդ յարաբերութիւն, ուստի և բուն իմաստը գտնենք. շարելու կարգերնիս գուշակելով միայն պիտի ըլլայ, և ուրիշ կերպով ալ շարուելու հաւանականութիւնը միշտ պիտի մնայ։

Բառերուն յեղաշրջութիւնը քանի մը հոմանիշեանց տեղի տուած է, որով խօսքին իմաստն անփարատելի մթութեան մէջ կը մնայ։ Ասոնց 'ի դէպ բնութեան խնդիրը երբեք յարաբերութեանց տեղի կու տայ. քանզի կրնայ 'ի դէպ բնութեան խնդիր ըլլալ Խաղացմունս բայանուան. որպէս թէ հեղինակն ըսել կ'ուզէր. Զանազան խաղացմունս գէպ 'ի քեզ շնորհացն աստուածայնոց։ Կրնայ երկրորդ 'ի դէպ անսպառ ածականին իրբ խնդիր առնուիլ, այսպէս՝ Զխաղացմունս շնորհացն աստուածայնոց որ են անսպառ

'ի քեզ, և ան ատեն անոպա՝ ոչ խաղացմունքին այլ շնորհքին ածական եղած կ'ըլլայ։ Երրորդ 'ի ՀԵՂԻԲ ՀՈ՝ անՀԻԷ ՎՐԱՅ նշանակութեամբ կրնայ առնուիլ. և ան ատեն ուրիշ լռելեայն իմացուած խօսքի մը մասն եղած կ'ըլլայ, այսպէս. զանազան խաղացմունս շնորհացն աստուածայնոց որ ի քեզ։

Չորրորդ հոմանութիւնն է անդրոլ ածականին երկդիմի յարաբերութիւնը. քանզի յայտնի չէ թէ արդեօք անդրոլ հոգի՞ բառին թէ շարժմունքին ածական է. ուստի սա երկու կերպով ալ կրնայ առնուիլ. Ը շարժմունս անդրոլ հոգւոյն, կամ ընդրոլ շարժմունս հոգւոյն։

Հրրորդ հոմանութիւնն է, 'ի ՎԵՐԱՅ ՀՈ ի-մացողաց բառերուն մութ ու բազդիմի իմաստը. քանզի յայտնի չէ թէ արդեօք ի-մացողաց բառը հոգիին յատկացեալ է, թէ 'ի ՎԵՐԱՅ նախադրութեան խնդիր։ Եթէ առաջինն է, խօսքը քերականական կարգով շարած ատեններս, այսպէս ըսելու ենք. զանդրոլ շարժմունս իմացողաց հոգւոյն (որ երևին) 'ի ՎԵՐԱՅ ՀՈ. և ան ատեն դարձեալ յարաբերականին հոմանութեան տեղի չտալու համար, այն է՝ յարաբերականն անմիջապէս յարաբերեալին քով բերելու համար՝ սա փոխաբերեալ կարգով շարել հարկ կ'ըլլայ. Զիմացողաց հոգւոյն զանդրոլ շարժմունս (որ երևին) 'ի վերայ քո։ Իսկ եթէ իմացողաց բառն իբրև խնդիր 'ի ՎԵՐԱՅ նախադրու-

թեան առնելու բլլանք, քո սաստկական աստուածային քերականական համաձայնութիւնը սխալ եղած կ'ըլլայ. քանզի պէտք է ասել 'ի ՀԷՐԱՅ ԻՄԱՑՈՒԱԾՈՅ ՏՈՅ, կամ գէթ 'ի ՀԷՐԱՅ ՏՈՅ ԻՄԱՑՈՒԱԾՈՅ. Տ ընագրին մէջ ուներցած ձևովն ուրիշ բան չկրնար բլլալ եթէ ոչ բ. դէմքի էական դերանուան սեռական և խնդիր 'ի ՀԷՐԱՅԻՆ. ուստի և ԻՄԱՑՈՒԱԾՈՅ բառն 'ի կախ մնացած կ'ըլլայ։

Այս երկայն քննութիւնն անոր համար բրինք որ իմացուի թէ շրջուն կարգի մէջ հոմանութենէ զգուշանալու համար որչափ ուշադրութիւն պէտք է։ Հոմանութիւնը լեզուին նպատակին դէմ է, բան որում լեզուին նպատակը մեր խորհուրդը ճշդիւ ուրացայայտ հասկրցընել է. մեր ընթերցողներուն կամ լսողներուն միտքը տանջելու իրաւունք չունինք. պարբերութեան մը միտքը հասկնալու և բառերուն յարաբերութիւնը գտնելու համար՝ անոնց հետ երկայն երկայն ժամանակաւ բլլալ անտանելի է. անանկ գրողներու համար կը սոխպուինք ըսելու թէ միտքերնին հասկրցընել չեն ուզեր. կամ, որ աւելի շիտակն է, գրել չեն գիտեր։

Այսերէն գրաբար լեզուին բնութիւնն յեզաշրջութեան ընդունակ է, այնպէս որ սովորաբար քերականական կարգը չպահուիր. ասոր մէջ առաջին և միակ կանոն հոմանութենէ զգուշանալն է։ Օրինակ Եղնիկ.

Այնչափ ինչ չար 'ի գազանացն բնութեամբ ոչ գոյր, մինչև ածեալ՝ զնորարարն առ նորաստեղծն նմա նոցա անուանս հրամայէր զնել. և եթէ մօտ ոչ գային, զիարդ միոյ միոյ քան իւրաքանչիւր ազգաց անուանս յօրինէր. ապա եթէ մօտ գային, և՝ բնութիւն ընդ մարդոյն ունէին, յայտ է թէ ոչ չարք էին և ոչ մարդոյն զնասակարք. այլ յետ յանցանելոյ մարդոյն զԱստուծոյ պատուիրանսն՝ առեան նմա զարհուրեցուցիչքն 'ի չհպարտանալոյ հողեղինին որ 'ի հողոյ եղն, և 'ի հող դառնալոց էր։ Եւ առաջնոյ չնասակարութեան գազանացն մարդոյ՝ այժմու համբոյրս և բնութիւնս վկայեն։ Չի ոմն զգայլոյ կորիւն սնուցանէ, և իրբ զշան կորիւնս՝ առ բնութեան ընդ անձն անկանին։ Եւ միւսն զառիւծու կորիւն սնուցեալ ածէ 'ի համբոյր և 'ի քնին, մինչև պատել զսնուցանելսն, և եթէ այլ ոք 'ի նա հուպ գայցէ, չմոռացեալ զբարս գազանութեանն՝ 'ի վերայ յարձակի. և նորա սատեալ գազանին իրբ շան, ցաւուցանէ յանսատ գազանութենէն։

Ա՛ս պարբերութիւնք քերականական կարգով շարեալք.

Ոչ ինչ 'ի գազանաց գոյր այնչափ չամ բնութեամբ, մինչև (այնպէս զի) ածեալ Աստուծոյ զնորարարսն առ նորաստեղծն՝ հրամայէր նմա զնել անուանս նոցա. և եթէ ոչ

գայլն մօտ, զիարդ յօրինէր անուանս միոյ միոյ ըստ իւրաքանչիւր ազգաց. ապա եթէ գայլն մօտ, և ունէին ընտերութիւն ընդ մարդոյն, յայտ է թէ ոչ էին չարք, և ոչ վնասակարք մարդոյն. այլ յետ յանցանելոյ մարդոյն զպատուիրանսն Աստուծոյ՝ ուստի նմա (լինել) զարհուրեցուցիչք առ 'ի չհաւատանալոյ հոգեզինին որ եղև 'ի հողոյ և դառնալոց էր 'ի հող. Եւ այժմու համբոյրս և ընտերութիւնս միայն առաջնոյ չիշխասակարութեան դարձանցն մարդոյ. Զի ոմն զկորիւն գայլոյ անուցանէ, և իբր զկորիւնս շան անկանին ընդ անձն առ ընտերութեան. Եւ միւսն անուցեալ զկորիւն առիւծուն՝ աւծէ 'ի համբոյր և 'ի քծինս, մինչև պատել զանուցանելեաւն. և եթէ այլ որ գայցէ հուպ 'ի նա, չմոռացեալ զբարս գազանութեանն յարձակի 'ի վերայ. և նորա սատակեալ գազանին իբր շան՝ ցաւուցանէ յանսատ գազանութենէն.

Զգաք ձեւաւոր կարգով շարուած խօսք մը լուծելու համար, պէտք է որ նախ մտքով խօսքին կարգը քերականական դարձուն. այսինքն յեզաշրջութիւնը վերցնեն, աս կերպով բառերուն իրարու հետ ունեցած յարաբերութիւնն աւելի ապէկ կ'իմացուի.

ՑԵՂԱՀՐՁՈՒԹԵԱՆ ԳԼԽԱՒՈՐ ԴԷՊՔԵՐԸ

ՀԱՅԵՐԷՆԻ ՄԷՋ ՀԵՏԵՒԵԱՆՆԵՐՆ ԵՆ

1. Յեղաշրջութիւն անուան բայի. Յայնժամ կոչեաց Թագաւորն զայրն, փոխանակ՝ Թագաւորն կոչեաց։

2. Յեղաշրջութիւն սեռի խնդրոյ և ուրիշ խնդիրներու. Չգործս յԵրուսաղեմ մի անուս առներ, փոխանակ. Մի անուս առներ չգործս Երուսաղեմ.

Հօր և մօր իմոնմոչ պատուեցի. փոխանակ Ոչ պատուեցի հօր և մօր իմոնմ։

3. Յեղաշրջութիւն յատկացուցչի. Մարդոյ բնութիւն բարեաց ցանկացող է. փոխանակ՝ Բնութիւն մարդոյ Երուսաղեմ.

Զբարիս և զչարս պատմէ զգործս. փոխանակ՝ Պատմէ զգործս բարեաց և չարաց.

Զձոգնս և զցամաքի յածին զսահմանսդ. փոխանակ՝ Յածին զսահմանսդ ծովու։

4. Յեղաշրջութիւն խնդրոյ ածականի մը կամ նախադրութեան մը. Անդինծարաւոյ զո՞ր ցո՞ւրտ ախորժելի է. փոխանակ՝ Զո՞ւր ցուրտ է ախորժելի անձին ծարաւոյ։

Մինթէ վասն զմիմեանս խաչապէնս ինչեն մարդիկ. փոխանակ՝ Վասն խաչապէնս զմիմեանս։

5. Յեղաշրջութիւն ածականի և գոյականի, երկուքին մէջ ուրիշ բառ մտնելով.

Ոսկեղինոջ բմպելնու-ագոջ. փոխանակ՝ բմ-
պել ոսկեղէն նուագոք. կամ՝ նուագոք
ոսկեղինոք։

6. Յեղաշրջութիւն ստորոգեալի. Հա-ապա-
ըիմ է Աստուած. փոխանակ՝ Աստուած
է Հա-ապարիմ։

Նախադասութեան մը մէջ երբոր յե-
ղաշրջութիւն կայ, այսինքն բառերն իրենց
քերականական կարգովը շարուած չեն, ա-
շակերտը լուծման առեն մտքովը խօսքն իր
բնական կարգին բերելու ու այնպէս լու-
ծելու է։

ՋԵՂ ՁՈՒՄ

Երբոր խօսքի մը կամ նախադասութեան
մը մէջ, խօսքը կամ նախադասութիւնը ամ-
բողջացընող կամ անոր էական մէկ մասը
պակաս է, ան խօսքին կամ նախադասու-
թեան մէջ ՁԵՂԸ-Մ կայ կ'ըսուի։

Ցեղչումները հին լեզուներուն, ուս-
տի և դրաբարին մէջ աւելի յաճախ են քան
թէ նոր լեզուներուն մէջ։

Ցեղչում ունեցող խօսք մը թէպէտ
շատ անգամ կը հասկըցուի, բայց չկրնար
լուծուիլ, մինչև որ նախադասութիւնը չը-
լրանայ։ Ուստի և լուծման մէջ ամենէն
դժուարին բանը ցեղչումները գտնել ու
նախադասութիւնը լրացնելն է։ Ցեղչում
ունեցող նախադասութիւն մը ամբողջա-

ցընելու համար գրուելու բառը՝ մոքով պիտի գտնենք. և միշտ անանկ բառ մը ըլլալու է, որ խօսքին թէ իմաստին և թէ քերականական կազմուածեանը յարմարի։

Խօսքի մը մէջ գեղջուամ ըլլալը ճանչնալու համար, հետևեալ կանոնները աղէկ միտք առնելու է։

1. Առանց անուան բայի՝ բայ չկրնար ըլլալ.
2. Առանց բայի՝ անուն բայի չկրնար ըլլալ.
3. Առանց սեռի խնդրոյ՝ ներգործական բայ չկրնար ըլլալ, ոչ ալ ասոր հակառակը՝ առանց ներգործական բայի խընդիր սեռի կրնայ ըլլալ։
4. Առանց խնդրառու բառի մը՝ խնդիր չկրնար ըլլալ։ Ինչպէս ըսած ենք, խնդրառու կ՚ըսուի ան բառը որ խնդիր մը կ՚ուզէ. ինչպէս է գոյականը որ միշտ սեռական հոլով, այսինքն յատկացուցիչ խնդիր կ՚ուզէ. ածականը կամ ընդունելութիւնը՝ որ այլ և այլ հոլով բառեր և այլևայլ նախադրութեամբ խընդիր կրնան առնել. և նախադրութիւնները՝ որոնք նոյնպէս այլևայլ հոլով խընդիր կրնան ուենենալ։

Ասոնց երբոր խօսքի մը մէջ բայ մը կայ առանց անուան բայի, յայտնի է թէ հոն անուն բային գեղջեալ է։ Եթէ անուն բա-

յի կայ առանց բայի՝ յայտնի է թէ բայը զեղչեալ է։

Ասինպէս եթէ սեռի խնդիր մը կայ առանց ներգործական բայի, և կամ ներգործական բայ մը առանց խնդրոյ սեռի, մէկը կամ մէկալը զեղչեալ է։

Դարձեալ երբոր բառի մը քով ուրիշ անանկ բառ մը կայ որուն հոլովը կամ ձևը առջի բառին խմաստին ու քերականական կանոնին չհամաձայնիր, պէտք է գիտնալ որ հոն երկուքին մէջ տեղը զեղչուած բառ կայ։ Զորօրինակ, գիտենք որ գոյական անուններուն մինակ սեռական հոլով խնդիր, կամ յատկացուցիչ կրնան ունենալ. ուստի երբոր գոյականի մը քով կից ուրիշ հոլովով բառ մը կամ նախադրութեամբ հանդերձ խնդիր մը կը տեսնենք, խմանալու ենք թէ հոն զեղչեալ բառ մը կայ որուն ան հոլովը խնդիր է։ Օրինակ.

Ի գեղեալ էր հանդերձ 'ի տեսոյ ուղտու. հանդերձ բառը որ գոյական է, բացառական խնդիր չկրնար ունենալ, ուստի վերի խօսքին մէջ, գործեալ կամ արարեալ բառը ըսելեայն կ'խմացուի։ Ան յապէս.

Ի գեղեալէր հանդերձ գործեալ 'ի տեսոյ ուղտու.

Սուր յազդէր, նիզակ 'ի ձեռին և սաղաւարտ 'ի գլուխ, այսինքն, Սուր կապեալ յազդէր, նիզակ կալեալ 'ի ձեռին, և եդեալ սաղաւարտ 'ի գլուխ։

Շրջել 'ի ցպոյ, այսինքն՝ Շրջել առ-ելոգ-նայանո-ւթ-ն 'ի ցպոյ։

Մ՝իս 'ի կասկարայէ, այսինքն, Մ՝իս հան-ել կամ առ-ել 'ի կասկարայէ։

Օրինակ վերջման.

1. Օ եզչումն գոյականի.
Արդարք ժառանգեսցեն զերկիր, փոխանակ, Արդիկ արդարք և այլն.
Օ օգտակարն նմա ինասակարս թերադրեալ կարծեցուցանէ. այսինքն Զիրս օգտակարս, իրս ինասակարս։

2. Օ եզչումն անուան բայի.
Ոչ քաղեն խաղող 'ի փշոց. այսինքն, Ոչ քաղեն հարդի խաղող 'ի փշոց։
Պէտք է գիտանալ որ հայերէնի մէջ դերանուն անուն բային գրեթէ միշտ կը զեղչուի։

3. Օ եզչումն բայի.
Որպէս թէ արեգակն գարձաւ յետս, և ոչ երկինք. այսինքն, Եւ ոչ երկինք դարձան յետս։
Երկինք եռեղակալք են, և լուսաւորքն գնայուն. այսինքն, Եւ լուսաւորքն գնայուն են։
Գովեսցէ զքեզ ընկերն՝ և մի քո բերան. օտարն՝ և մի քո շրթունք. այսինքն, Գովեսցէ զքեզ ընկերն, և մի գովեսցէ ընդ

քո՞բերան. գովեսդ ջէջ օտարն, և մի գովեսդն ջէջքո շրթունք.

4. Օ եղբու

ն բայի, որ սեռի խնդրէն կ'իմացուի.

Ջ իարդ պաշտիցեմք զարեգակն որ... 'ի խաւարս դառնայ. կամ զլուսին՝ որ ամսոյ ամսոյ հիւծանի. կամ զերկիր՝ զոր հանապազ բրեմք. կամ զջուրս՝ զոր հանապազ ըմպեմք, և այլն. ուր՝ չիարդ պաշտիցեմ բառերը զօրութիւն կ'իմացուին ամենն սեռի խնդրոյ քով, այսպէս. կամ չիարդ պաշտիցեմ զլուսին, կամ չիարդ պաշտիցեմ զերկիր. կամ չիարդ պաշտիցեմ զջուրս.

Օ ինչ կամիք զի արարիցս ձեզ. Տէր, զի բացցին աչք մեր. այսինքն, Տէր, կամիմ զի բացցին աչք մեր.

5. Օ եղբուն ստորոգեալի, շատ անգամ բայով մէկտեղ, զորօրինակ. Զեմ արժանի պաշտօն առնլոյ, այլ պաշտօն հարկանելոյ. այսինքն, Ես արժանի եմ պաշտօն հարկանելոյ.

Ամենեին մի երբէք լիցի ասել թէ Ասուած չարեաց պատճառ լիցէ, այլ այն որ իւրով կամօք զգործ չարեացն գործիցէ. այսինքն, Ես պատճառ չարեաց այն՝ որ, և այլն.

6. Օ եղբուն յարաբերեալի, որ հայերէնի մէջ շատ կը պատահի, և ան առանց ընդհանրապէս յարաբերականին բային վրայ դիմորոշյօդ կը դրուի. զորօրինակ.

Որ ընթեռնուն՝ 'ի միտ առցէ. այսինքն, Նա՝ որ ընթեռնու, 'ի միտ առցէ.

Որ առողջ միտս ունին՝ ոչ զշարժունն այլ զշարժիչն պարտին փառաւորել. Այնոքիկ՝ որ առողջ միտս ունին, պարտին փառաւորել, և այլն։

Որոց սիրեն զԱստուած, յամենայնի գործակից լինի 'ի բարիս. այսինքն, Այնոցիկ կամ նոցա՝ որ սիրեն զԱստուած, յամենայնի գործակից լինի, և այլն։

ԱՒԵԼԱԴՐՈՒԹԻՒՆ

Աւելադրութիւնը զեղչման հակառակն է։ Զեղչման մէջ՝ խօսքին մէկ հարկաւոր մասը պակաս է, և զօրութեամբ կամ բաւելեայն կ'իմացուի։ Իսկ աւելադրութեան մէջ՝ խօսքին մէկ հարկաւոր մասը երկու անգամ գրուած կամ կրկնուած է։

Աւելադրութիւնը խօսքի մը սա երեք մասերուն նկատմամբ կ'ըլլայ, այսինքն՝ Անուան բայի, ընդերոյ և սպորոգելոյ։

Աւելադրութիւնը կրնաւոր օրինաւոր և ապօրինաւոր ըլլալ։ Աւելադրութիւնն օրինաւոր է մինակ, երբոր խօսքին ուժ կամ ազդեցութիւն տալու կը ծառայէ. ապա թէ ոչ ապօրինաւոր և արատաւոր է։

Այս, էս եմ որ խօսիմ ընդ քեզ. հոս էս անունն բային կրկնուած է խօսքին ազդեցութիւն տալու համար միայն։

Կինդ զոր եռուր ցիս, նա եռ ինձ.

Հէշ ասեմ, յեշոր լսէք. հոս ալ յեշ բնութեան խնդրոյն համար միևնոյն բան է։

Գիրդ զոր ընթեռնուս այն իմ է. հոս ալ դարձեալ անուն բային կրկնուած է։

Աւելադրութեան մէկ տեսակն ալ ան է, որ երկու նոյն նշանակութիւնը կամ միևնոյն զօրութիւնն ունեցող բառեր խօսքին մէջկը կրկնուին։ Հիացան, զարմացան, աքանչացան. Զօր ժողովէր, գունդ կազմէր, գումարտակ առնէր։

Այս տեսակ աւելադրութիւններ գրեթէ միշտ արտաւոր են, երբոր նոյնանշանը կրկնելու հարկաւորութիւնչկայ։

ՀԱՅԿԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Թէպէտ բոլոր լեզուներն էական բաներու մէջ միևնոյն կերպն ունին, բայց և այնպէս բառերու գործածութեան և անոնց իրարու հետ ունեցած համաձայնութեանը մէջ ընդհանուր կանոնէն կը խոտորին. և անով իրարմէ կը տարբերին։ Լեզուներուն իրարմէ տարբերութիւնը ընդհանուր բառով յոգեաբանութիւն կը կոչուի, բայց երբոր մասնաւոր լեզուի մը յատուկ կերպերուն կամ ձևերուն վրայ խօսք կ'ըլլայ, ան լեզուին անուանը համեմատ յորջորջում մը կը տրուի. զոր օրինակ Յունարէն լեզուին յատուկ զրուցուածներուն Հելլենաբանութիւն կ'ըսենք. Լատիներէնին լատինաբանութիւն, Գաղիերէնին գաղիա-

բանութիւն. ուստի և հայերէն լեզուին յատակաբանութիւններուն ալ հարկաւ հոյլ-էն-նու-թիւն պիտի ըսենք։

Ուստի հայկաբանութիւն են հայերէն լեզուին յատուկ և մասնաւոր ձևերը՝ որոնք թէպէտ քերականութեան հասարակ կանոններուն հակառակ, բայց սովորութեամբ ընդունուած են։

Հայկաբանութիւնը կրկին է. բառերու հայկաբանութիւն և կազմութեան հայկաբանութիւն։

Բառերու հայկաբանութիւն է, երբոր բառերն իրենց սովորական նշանակութենէն տարբեր նշանակութեամբ կ'առնուին. զոր օրինակ, ո՞նչս առնել, որ արհամարհել բսել է, ընդ դիպ պառնել, որ սրդողել, կիւ ձէնմէք կը նշանակէ, յեռն յանդին հարիանել, որ պարծիլ ըսել է, հայկաբանութիւններ են։ Ոմանք սա տեսակ հայկաբանութիւնը հայերէն ոճ կ'անուանեն. բայց ոճն ասկէ շատ տարբեր բան է։ Վերոյիշեալ հայկաբանութեանց մէջ, ինչպէս կը տեսնուի, բառերն իրենց բնական նշանակութեամբը չեն կենար. անոր համար եթէ գիր առ գիր թարգմանուին ամենևին իմաստ չեն տար։ Ա՛ս տեսակ հայկաբանութիւններ հայերէն գրաբար լեզուին մէջ խիստ շատ են։

Այսպէս են՝ էր-ոՎի ԵրԼ-ել, անդին առնել, որոնք ինք զինք սպանել ըսել են։

Կազմութեան հայկաբանութիւն են ան

տեսակ գրուցուածները ուր բառերը քերականական կանոնին պահանջած ձևը չունին, անոր համար լուծման չեն գար. զոր օրինակ՝ երբոր խօսքին մէջ բառ մը անանկ հոլովով գրուած է, որ խօսքին բնական իմաստին նայելով ուրիշ հոլով գրուելու էր։ Ասանկ հայկաբանութիւններ հայերէնի մէջ խիստ շատ չեն։

Կազմութեան հայկաբանութիւն է հայերէն՝ էական բային քով սեռական հոլով անուն մը դնել, ունենալու նշանակութեամբ. զոր օրինակ.

Լն էմ երկու դստերք. Երկու աղջիկներ էմ։

Լս էին Աբրահամու ծառայք և ընդոծինք. Աբրահամ ծառաներ և ընդոծիններ ունէր։

Այնպէս կազմութեան հայկաբանութիւն է.

Մինչդեռ աւուր կայ. Հոնէ որ ցերեկ է*։

Կազմութեան հայկաբանութիւն է դարձեալ՝ դիմաւորբայի մը եզակի երրորդ դէմքին սեռական անուն բայի տալով, եզակի և յոքնակի ամեն դէմք նշանակել տալ, զոր օրինակ.

Լուեալ է էմ, լուեալ է Հոնէ այլն։

---

* Կազմութեան հայկաբանութեանց մէջ սովորաբար զերծեալ բառ մը կ՚իմացուի. զոր օրինակ՝ են իմ երկու դստերք. փոխանակ՝ երկու դստերք են իմ զաւակ. էին Աբրահամու ծառայք. փոխանակ՝ էին ծնունդ Աբրահամու ծառայք. Մինչդեռ աւուր կայ. փոխանակ՝ Մինչդեռ կայ հոնդ աւուր։

ԿԷՏԱԴՐՈՒԹԵԱՆ ՎՐԱՑ

Կէտադրութեան արհեստը շատերուն կարծածէն աւելի կարեւորութիւն՝ բայց միանգամայն մեծ և գրեթէ անհընարին դժուարութիւն ունի։ Եւրոպացիք, յանուանէ Գաղիացիք աս արհեստը շատ յառաջ տարած ու դիւրացուցած են։ բայց և այնպէս Լը Գէն իր կէտադրութեան ճառին մէջ կ'ըսէ թէ կէտադրութեան համար այսչափ կանոններ առանդուած ըլլալէ ետքը՝ տակաւին կանոնաւոր կէտադրութիւն մը տեսած չեմ։ Պիւֆոնին քան տոյէ բաղկացեալ մէկ կըտորն ինը տպագրութեան մէջ կարդալով ինն ալ իրարմէ տարբեր կէտադրած տեսայ։

Կէտադրութեան աս դժուարութիւնը մանաւանդ պատճառ մըն է, որ կէտադրութեան կանոնաւոր դրութիւն մը ունենանք։ քանզի եթէ բան մը կանոն ունենալով դժուարին է, որչափ աւելի դժուարին և խառնակ պիտի ըլլայ՝ եթէ բնաւ կանոնի տակ ինկած չըլլայ։

Կէտադրութիւն կ'ըսուի ան արուեստը որ, նշան կոչուած նշաններով՝ դրութեան մէջ կը ցուցնէ թէ ե՞րբ և ինչպէս կարդալու ատեն հանգիստ ընելու է։

Կէտադրութեան նշաններն են փուքը (՝)՝ ստորակէտը (,)՝ միջակէտը (.)՝ վերջակէտը (։)՝ պարոյկը (՞)՝ երկարը (՛)՝ կախումը (. . .)՝ տաշը (—)՝ չակերտն («»)՝ ու փակագիծը ( )։

Ա. ԲՈՒԹ.

Բուքն ամենէն կարճ հանգիստը ցուցնող կէտանշանն է։ Ան նշանը խօսքին մէջ խօսքին նոյնատեսակ մասերն իրարմէ զատելու համար կը գործածուի։ Ուստի բուքը

1. Մ՝իևնոյն գոյականին վերաբերութիւն ունեցող ածականները կամ ստորոգելիները զատելու կը գործածուի։

Աշխարհիս վրայ չոր՝ խոնա՜՝ ջերմ՝ ցո՜ւրտ՝ պինդ՝ լայ՝ էլուլ բաներ խառն կը գտնուին։

Տիւրացիք արո՜ւեսպահգորգ՝ հոմբերոց՝ աշխատէր՝ մաչո՜ր՝ սաչո՜ապէպ՝ ու ինայոց են։ Ասոնցմէ ա՜ելի հասուսպահիպ՝ ա՜ելի անկիւղ՝ ա՜ելի հա՜ապարիմ՝ ա՜ելի վնասահելի՝ ա՜ելի օգարասէր ժողովուրդ մը երբեք եղած չէ։

2. Ի՝ուրթը կը գործածուի իրարմէ զատելու համար շատ մը անուն բայիներ, շատ մը սեռի կամ բնութեան խնդիրներ որոնք միևնոյն բայի, շատ մը բայեր որոնք միևնոյն անուան բայի կը վերաբերին, երբոր ասոնց ամենն ալ մէյմէկ բառ, կամ խիստ կարճ են։

Լենգո՜ի՜ն՝ բո՜նո՜ի՜ն՝ սպերդհո՜ի՜ն՝ դա՜սերը՝ պապերա՜ղհերն Աստուծոյ սիրած ան երկրին մէջ իրենց անգութ և վարակեալ ձայնը երբէք լսել չեն տար։

Ա՝ս անբաւ երկրագունան իր մակերևոյթին վրայ մեզի կ՝ընծայեցրնէ լեռներ՝ ձորեր՝ պտղարանիներ՝ ծովեր՝ ճահիճներ՝ անձրևներ՝ վիհեր՝ հրաբուխներ։ Եթէ անոր ներսի գին թափանցելու ըլլանք, կը գտնենք տեսակ տեսակ մեռաղներ՝ հանքեր՝ ոսկեր՝ յի՜ւրեր՝ աստղներ՝ ցամաքանի՝ ջո՜ւրեր և ո՜ւրիշնի՜ւրեր։

Ինկա գեղջկաց տուներուն այցելութիւն կ՝ընէր. անոնց վիճակին՝ ընթանիցը՝ ջնիներուն՝ ի՜ուրոյն՝ հուշերուն՝ ֆարոզուրիանը՝ պո՜ր-

ջերուն՝ պարպջերուն՝ և ուրիշապ բաներու կը տեղեկանար։

Ան վիրիտոփան ուրախութեամբ կը խոստովանէր թէ հոգին ի՛ընդունէ՝ ի՛ խորհի՝ ի՛ պարծիս՝ ի՛ հաւատայ՝ ի՛ իմաստասիրէ՝ ի՛ ճանչնայ՝ ի՛ ինքն՝ ի՛ հորհրդածէ։

Այնպէս բթով կը զատուին միւնոյն օժանդակ բայի վերաբերեալ ընդունելութիւն անցեալներ, միւնոյն բայի վերաբերեալ աներևոյթներ. զորօրինակ.

Լթէ կ'ուզուի որ տղաք միշտ տղայ չմնան՝ այլ վարպետ ըլլան, հայրերն ու վարպետները զանոնք խիստ կանուխ յանդիմանած՝ ուղղած՝ նզովեցած՝ ղրկեցած՝ սպառնացած՝ հրահանգած ու համոզած ըլլալու են։

Ուրիշ մը երբէք Յուլիային պէս սէրած՝ խորհած՝ խօսած՝ գործած ու գրած է։

Պերագոյն ու կատարեալ կառավարութիւնը կառավարողները կառավարելու մէջ կը կայանայ. պէտք է զանոնք դէպի՝ ֆորյէ՝ սանյէ՝ ուղղէ՝ ջոջերի՝ վերցնէ՝ իջեցնէ՝ փեղեցնէ՝ ու միշտ 'ի բռին ունել։

3. Ուրիշ կը գործածուի խօսքին մէջ հոն՝ ուր բայ մը գեղչուած է. զոր օրինակ.

Փրանկները, վայրենի ժողովուրդ, բանջարով՝ պտղով՝ արմատներով և որսով մինակ կ'ապրէին։ Արևը՝ լուսինը՝ լուսաւորները՝ գետերն էին անոնց չաստուածները. խոր անձաւներ՝ անոնց մեհեանները. աստեղաշխներ, բժիշկներ ու դատաւորներ՝ ա-

նոնց Դրուիդ կոչուած քուրմերը. փայտէ ու կաւէ շինուած հիւղեր՝ անոնց քաղաքները. իսկ առուտուրնին էր փոխանակութիւն։

4. Բուլթով կը գատուի խօսքին ան մասը որ դիմաւոր բայ չունենալով՝ ամբողջ նախադասութիւն չէ, այլ ուրիշ նախադասութենէ մը կամ խօսքին դիմաւոր բայ ունեցող մասէն կախում ունի. զոր օրինակ.

Շարունակ վարանման ու անպու�գրեան մէջ ապրելէ յանկարծ՝ որոշեցի որ Սիկիլիա երթամ, քանզի լսած էի թէ հայրս ալէկոծութեամբ հոն ինկած էր։

Հիացմամբ սառնկ փեսարանի մը հանդիսապետ ելլելէ ետքը՝ սկսանք Արեւտէ կղզւոյն լեռները նշմարել։

Մէոդոս՝ երկու պէպուրեան ալոթեր եղած՝ Արեւմտեանը վաղենտիանոսի առաւ։

Գորտին ոյսչափ անհնարին գծուարութիւնները պեանելով՝ հասկցանք որ մեր բոլոր ջանքերը վայրապար պիտի ըլլան։

Պապանին հօրն անունը լսածին պէս՝ սկսաւ ջերմ արտասուք թափել։

5. Երբեմն անուն բային շատ մը յարակից մասեր ունի, և բայն ալ բնթով կամ ստորակէտով բաժնուելու մասեր չունի, բոլոր խօսքն առանց իրարանցման չմնալու համար՝ անուան բային մասը փուլթով կը բաժնուի որ շնչառութեան հանգիստ տրուի. զոր օրինակ.

Իրենց նախնի աւանդութիւնները պահելու համար Եգիպտացոց ամենէն գեղեցիկ հնարքն էր անոնց համար յատուկ տօնահանդէսներ սահմանելն էր. ասով աւանդութեանց բարոյական նշանակութիւնը՝ ժողովուրդին մտքին մէջ կը տպաւորուէր։

ՍՏՈՐԱԿԷՏ.

Ստորակէտը կը դրուի խօսքին ան տեղն ուր աւելի հանգիստ ընել պէտք է։

Գիտնալու համար թէ ստորակէտն ուր և երբ գործածելու է՝ հետեւեալ կանոնները միտք առնելու է։

1. Երբոր խօսքի մը նոյնատեսակ մասերը, զոր օրինակ անուն բայեր՝ խնդիրներ՝ ստորոգելիք՝ միևնոյն օժանդակի վերաբերեալ ընդունելութիւններ՝ միևնոյն անուան բայի վերաբերեալ բայեր՝ և ուրիշ ասոնց նման մասեր երկայն են, իրարմէ ստորակէտով կը բաժնուին։

Ընծանօթ ամուսնութենէ մը ծնած, անպարկեշտ կնոջ մը խնամքովը սնած, հովիւներու մէջ մեծցած, յետոյ յելուզակներու ջոկատի մը գլուխ եղող իշխան մը աշխարհիս մայրաքաղաքին առաջին հիմնարկուն եղաւ։

Ընդհանուր արդարև աշխարհիս ամենէն գեղեցիկ, 'ի բնէ ամենէն առատ, արհեստիւ ամենէն լաւ մշակուած, ամենէն հարուստ, ամենէն հանգստաւէտ, և իր թագաւորներուն խնամատարութեամբն ու մե-

ծագումնաբանամբն ամենէն զարդարուն ներ-
կիրն էր։

Ամ արժանաւոր որդիդ իմաստնոյն Ո-
դիսեայ, բաւ Տիմեա, ես հօրդ կերպարան-
քին զգօնութիւնը, խօսակցութեանը շնոր-
հալիութիւնը, պերճախօսութեանը զօրու-
թիւնը, զգացումներուն ազնուութիւնը,
մտածմանցն իմաստութիւնը քու վրադ կը
տեսնեմ։

Խօսակցութիւնը շարունակելով՝ սկսան
խօսիլ դից ծագմանը՝ դիւցազանց՝ քերթո-
ղաց՝ ոսկեդարուն՝ ջրհեղեղին՝ մոռացման
գետին ու բ մեռելոց հոգիները կ՝ընկղմին,
Տարտարոսին սեւաթոյր վհին մէջ ամբարիշտ-
ներուն պատրաստուած յաւիտենական
պատժոց, և ան երջանիկ խաղաղութեանը
վրայ զոր եղիսեան դաշտերուն մէջ արդա-
ները կը վայելեն առանց երկիւղի՝ թէ կըր-
նան երբէք կորսնցնել։

Դիրանուա Ա. Անգղիոյ թագաւորին
հետ եղած դաշնադրութիւններուն հաս-
տատութիւն տուաւ, Վենետացւոց ու Ա-
ւստրիացի Կարոլոս թագաւորին հետ նոր
դաշնադրութիւններ բրաւ, յետոյ Ալպեան
լեռներն անցաւ, Հելուետիացւոց վրայ Մա-
րինեանի քով մեծ յաղթութիւն մ՝ բրաւ, և
այսպէս բոլոր Մեսիոլանու տէր եղաւ։

Պոլպէրի պաշտօնէութեան առեն ա-
մեն բան ուրիշ կերպարանք առաւ. անիկա
վաճառականութիւնը ստեղծեց, մեծամեծ

Համբաներ նորոգել տուաւ, նոր պոդոտաներ բացաւ, Լանկոզի հռչակաւոր ջրմուղը կառոյց, ազատ նաւահանգիստներ կացուց, վաղեմի գաղթականութիւնները ծաղկեցուց, նոր գաղթականութիւններ կազմեց, և մանաւանդ ծովային զօրութեան հոգ տարաւ։

2. Խօսքի մը մէջ սոսկ բացայայտիչ զօրութիւն ունեցող միջանկեալ խօսքի մաս մը՝ երկու կողմէն ստորակէտով կը զատուի. զոր օրինակ.

Ա՛ս աշխարհիս ամենէն մեծ պետութիւնը, այսինքն Հռովմէական պէպոլիէան, վրայ Աստուծոյ գատաստաններուն մեզի թագուն չեն։

Ընիկա ուզեց իս թողուլ երթալ, և գընաց. բայց ալէկոծութեամբ իմ վրէժս անկէ պահանջուեցաւ։ Ընոր նաւը, երկայն ոտքեն հովերուն խաղալէն ըլլալէ եփ՝ը, ալեաց մէջ թաղուեցաւ։

Ո՞վ է հայրդ, ըսաւ դիցուհին, զոր կը փնտռես։ Ընիկա Ոդիսևս կը կոչուի, ըսաւ Դելեմաք. Տրոյայի համբաւաւոր քաղաքը, փառամէջ պաղարոնէ մը եփ՝ը, կործանող թագաւորներուն մէկն է։

Տիւրացիք, էրեանց գոռոզութեանը պատճառ, զայրացուցած էին Սեռոսարիս մեծ թագաւորը, որ Եգիպտոս կը թագաւորէր, ու բազմաթիւ թագաւորներու տիրած էր։ . . . Սեռոսարիս, անոնց ամբարտաւանութեանը խրատելու համար, միտքը դրած էր որ բոլոր

ծոմերու վրայ անոնց վաճառականութիւնը շփոթէ։

Այս օրինակներուն մէջ, ինչպէս կը տեսնուի, նստրագիր խօսքերը միջանկեալ մասեր են. և անանկ պարագայ մը կը բացատրեն որ առանց իմաստին այլայլութիւն մը տալու՝ կրնայ զանց առնուիլ, և անոր համար է որ խօսքին մնացած մասէն ստորակէտով կը բաժնուին։ Ասոնց սոսկ բացատրիչ պարագայ մը, ուստի և միջանկեալ մասը լլալը հասկընալ գիւրին է. բայց յարաբերական դերանունով բերուած միջանկեալ նախադասութիւններն աւելի ուշադրութիւն կը պահանջեն։

Յարաբերական դերանունով բերուած միջանկեալ նախադասութիւնները երկու տեսակ են. ոմանք՝ բացորոշական, ու ոմանք՝ մեկնողական։ Բացորոշական միջանկեալները գլխաւոր նախադասութենէն ստորակէտով չեն բաժնուիր, բայց մեկնողական միջանկեալները ստորակէտով կը բաժնուին։

Կը մնայ գիտնալ թէ բացորոշական ու մեկնողական միջանկեալ նախադասութիւններն ինչպէս կը ճանչցուին։

Յարաբերականով բերուած միջանկեալ նախադասութիւն մը բացորոշական է, երբոր յարաբերականին յարաբերեալն անհոգ կամ յոգոյ բան մը կը նշանակէ. բայց երբոր յարաբերեալն ընդհանուր իմաստուն է, յարաբերականով բերուած միջանկեալ նա-

խոստաստութիւնը մեկնողական է։

Այս վարդապետութիւնը օրինակով աղէկ կը հասկըցուի։

ՕՐԻՆԱԿ։

Աստուածային մեծագործութեան արտաքին գահն է բնութիւնը. ան մարդը որ անոր հպարհ ու խելամուտ է, տակաւ առ տակաւ ամենակարողութեան ներքին գահը կ'ամբառնայ։

Այս խօսքին մէջ հոգի բառը մասնաւոր մարդ մը կը նշանակէ, այսինքն անոր հպարհ ու խելամուտ եղող հոգին, ոչ թէ ամեն մարդ կամ մարդկային ազգը։

ԱՌԻՒՐ ՕՐԻՆԱԿ։

Աստուած, ամեն լուսոյ և ամեն իմացականութեան միակ աղբիւրը, անսահման կարողութեամբ տիեզերքն ու արարածոց տեսակներն ամբողջապէս կը վարէ. մարդս, որ ան իմացականութեան հաղորդ մէկ շաբաթն ունի, նիւթոյ փոքրիկ մասերուն վրայ միայն սահմանաւոր կարողութիւն մը ունի, և անհատներուն միայն տէր է։

Այս խօսքին մէջ հոգի բառը բոլոր մարդիկ կամ մարդ կոչուած էակը կը նշանակէ։

Առջի օրինակին մէջ ընդհանուր ամեն մարդիկ չեն որ ամենակարողութեան ներքին գահը կ'ամբառնան, այլ միայն բնութեան մտախոհ և խելամուտ եղող մարդն է։

Երկրորդ օրինակին մէջ ընդհանուր բոլոր մարդիկ կամ մարդ էակներ որ սահմանաւոր կարողութիւն մ'ունին։

Հոս մեր հայերէն աշխարհաբարին շարադասութեանը վերաբերեալ կարեւոր դիտողութիւն մը կ'ուզենք ընել։

Յայտնի է որ աշխարհաբար լեզուին մէջ յարաբերականով բերուած նախադասութիւն մը ընդունելութիւնով կրնայ բացատրուիլ. ուստի կ'ըսենք. իր տկարութիւնը ճանչցող մարդը. փոխանակ ըսելու, Մարդը որ իր տկարութիւնը կը ճանչնայ։

Բայց մեզի կ'երևի թէ աշխարհաբարի մէջ ալ յարաբերականով բերուած ամեն խօսք, առանց իմաստի այլայլութեան, ընդունելութիւնով չի կրնար բացատրուիլ։

Երբ բացատրուած տարբերութեան նայելով մինակ բացորոշական միջանկեալ նախադասութիւնները, այսինքն երբոր յարաբերականին յարաբերեալն անհատի իմաստ ունի, ընդունելութիւն կրնան բացատրուիլ։ Իսկ մեկնողական միջանկեալ նախադասութիւններ, որոնց յարաբերականին յարաբերեալը ընդհանուր իմաստ ունի, միշտ յարաբերականով ու դիմաւոր բայով բացատրուելու են. ապա թէ ոչ խօսքին ընդհանուր իմաստը կ'այլայլի, այսինքն կը մասնաւորի։ Ուստի վերը բերուած երկու օրինակներէն մինակ առաջինին միջանկեալ

նախադասութիւնը կրնանք ընդունելութեան դարձնել, այսպէս.

Աստուածային մեծագործութեան արտաքին գահն է բնութիւնը. անոր մէջ ամենակարողութեան ներքին գահը կ'ամբառնայ։

Եթէ երկրորդ օրինակին միջանկեալ խօսքն ալ այսպէս ընդունելութեան դարձընենք, իմաստը կ'այլայլենք, զորօրինակ.

Աստուած, ամեն լուսոյ և ամեն իմացականութեան միակ աղբիւրը, անսահման կարողութեամբ տիեզերքն ու արարածոց տեսակներն ամբողջապէս կը վարէ. ան Իմացական-Ութեան հաշիւ-մէջ չառ-ուն-էշն ունեցող մարդը, մինակ սահմանաւոր կարողութիւն ունի։

Այս վերջի խօսքն այսպէս բացատրուելով՝ խօսքին ընդհանուր իմաստը կ'այլայլի. քանզի կը նշանակէ թէ Սահմանաւոր կարողութիւն ունեցողը ոչ թէ բոլոր մարդիկ են, այլ ան իմացականութեան հաշիւ մէկ շառաւիղն ունեցող մարդն է։

Ունայայպուն-Ութեան համար չանի մը օրինակներ.

Կրնանք ըսել.

Ա-ուէլին վնասովը մեծնալ չունցող շահասիրութիւնը՝ շահասիրութեան եթէ ոչ գովելի, գէթ ամենէն ներելի տեսակն է։

Այլ ըսելու ենք.

Շահասիրութիւնը, որ մեր ոճիրներուն էբ-

ըն աղբիւրը կը թամքասուի, շատ անգամ մեր բարեգործութիւններուն իրր շարժառիթը գովուելու արժանի է։

Հոս եթէ ըսելու ըլլանք, Մեր ոճիրներուն իրր աղբիւրը թամքասուող շահասիրութիւնը, և այլն, ոչ ընդհանուր շահասիրութիւն կ'իմացուի, այլ ան շահասիրութիւնը որ մեր ոճիրներուն իրր աղբիւրը կը թամքասուի. ուր աս ամբաստանութիւնն ընդհանուր շահասիրութեան վրայ է։

Կրնանք ըսել, քանի որ խօսքը մասնաւոր յոլովոյն մը վրայ է.

Մեր փոքր կենդանի յոլովը վայրագ դէմը, խռովայոյզ աչուքներ, անգութ նայուածք, յանկարծական շարժմունք ու բարկութեան բրդած մեծ շան մը գոչմանը նըման գոչիւն մը ունի։

Բայց ըսելու ենք.

Շնչին, որ իմացական կարողութեամբ ըն-նէն ու կապէն սորին է, տակաւին խօսողութեան գրեթէ հաւասար ձիրք մը բնութենէն ընդունած է։

Քանի որ խօսքը շնչի կոչուած կենդանուոյ տեսակին վրայ է, չենք կրնար ըսել, իմացական կարողութեամբ ըն-նէն ու կապէն սորին էղող շնչին. ապա թէ ոչ ըսել կ'ըլլայ թէ իմացական կարողութեամբ շունէն ու կապէն սորին չեղող շնչիներ ալ կան։

Կրնանք ըսել.

Ծերանալու հետ երիտասարդ աշխու-

ժուԹիւնը խեուԹենէ շատ հեռու չէ։

Բայց ըսելու ենք.

ԻնուԹիւնը, որ մարդոյ ոչ մասին բնաբան մը չըսէր, խիստ կանուխ իմացուց ԹԷ զԱրիստոտել իրեն վատահակից և Թարգման ընտրած էր։

Կրնանք ըսել.

Իր կեանքը ցամաքի վրայ հինուԹիւն ընելու-էրաղ Արաբացին ճամբորդուԹեանց տառապանացը մէջ մանկուԹենէ խստանալու է։

Բայց ըսելու ենք.

Ստուած միայն անցեալը՝ ներկան ու ապագան գիտէ. անիկա ամեն ժամանակուան է. մարդս, որուն գեղուԹիւնը ոչ մը վայրկենի է. մինակ ան վայրկեանները գիտէ։

Մարդու ու տեղւոյ յատուկ անուններէն եռքը յարաբերականով բերուած միջանկեալ նախադասուԹիւն մը միշտ մեկնողական է, անոր համար ստորակէտով բաժնուելու է, զոր օրինակ. Կիներա, որ մինչև ան ապէնը Հռոմի մէջ արհամարհուած էր, ահագին եղաւ։

Կարմիր ծովը, որ Աբեբէս վերին Եգիպտոսէ և Եգիպտոսի մէջ մասին կը բաժնէ, երեք հարիւր յիսուն մղոն երկայնուԹիւն ու քառասուն մղոն լայնուԹիւն ունի*։

ԼԹէ յատուկ անունը ժողովուրդի կամ

---

* Մեզի կ'երևի ԹԷ մարդոյ և տեղւոյ յատուկ անուններէ եռքը յարաբերականով բերուած միջանկեալ նախա-

ազգինը անուն է, յարաբերականով միջանկեալ նախադասութիւնը կրնայ թէ բացորոշական և թէ մեկնողական ըլլալ. և ըստ այնմ կէտադրութիւնը վերի կանոնին պէս ըլլալու է. այսինքն երբոր յարաբերեալն անհատ կամ մասնաւոր իմաստ ունի, միջանկեալին ու գլխաւոր նախադասութեան մէջ ստորակէտ չդրուիր. իսկ եթէ յարաբերեալն ընդհանուր իմաստով է, միջանկեալը ստորակէտով կը բաժնուի։

ՕՐԻՆԱԿ ՄԱՍՆԱՒՈՐ ԻՄԱՍՏՈՎ։

Այս պարտութեան լուրը բոլոր Իտալիոյ մէջ իսկեւիսկ տարածուեցաւ։ Հռովմայեցիք որ Վէյի ապա-ինած էին, և բոլոր անոնք որ Մօրպոյ գի-ղերը յրո-ած էին, ժողվուեցան։

Կլեոտացւոց մէջ որոնք անոր հէր էին, երկու ծերուն կար։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՄԱՍՏՈՎ։

Հռովմայեցիք, որոնք յաջող պարտէզի մէջ ճակատ կո- փայն, ան գունդերը վանեցին, ու մեծ բազմութիւն մը կորեաւ։

Կարքեդոնացիք, որոնք Ռէկո-լսին դէմ հանելու- չափ բա-ական յաջողի ջրգելու-իներ չո-ին,

---

դասութիւններն ալ՝ աշխարհաբարի մէջ ընդունելութեամբ բացատրելն աղէկ չէ. քանզի նոյնպէս իմաստը կ՚այլայլէ։ Զոյգորինակ՝ եթէ ըսելու ըլլանք. Հռովմի մէջ մինչև ան առնն արհամարհուած կիններն. կամ, Ընարիա վերին Եթոլիայէն և Եգիպտոսին մէկ մասէն բաժնող Կարմիր ծովը. կրնայ հասկցուիլ թէ Հռովմի մէջ չարհամարհուած ուրիշ կիններ մ՚ալ, կամ ուրիշ Կարմիր ծով մ՚ալ կայ։

մինչև Լակեդեմոն մարդ զրկելով՝ իրենց բանակին հրամանատարութիւնը Քսանդիպպոսին տուին, որ իր երկրին և բոլոր Յունաստանի մէջ անուանի զօրապետ էր* ։

3. Բացադարձութեամբ եղած խօսքմը, կամ կոչական մը, խօսքին յաջորդ մասէն ստորակէտով կը բաժնուի. իսկ եթէ խօսքին մէջտեղն է, երկու ստորակէտի մէջ կ՚առնուի ։

Ո՛վ թագաւոր, ահա քու թշնամիներուդ դէմ քու վրէժխնդիրներդ ։

Ի՛նչ ժան է, ով որդեակ, որ քեզի յայտնեմ ։

4. Ինչպէս երկու ստորակէտի մէջ կ՚առնուին սա խօսքերը. ՝Ըսէմ, ըսա՝, պատասխանէց, ՝ի՝նէց, և այլն ։

Իմ դժբախտութիւններուս պատմութիւնն, ըսա՝, խիստ երկայն է ։

Ի՝ս Տրովացիք, ՝Ը՝սէր, բոլոր Յունայց դէմ զայրացած են ։

Բարեկամներս, ըսրո՝նա՝ՀՀ՝ց, ինծի այնչափ

---

* Ա՛ս տեսակ խօսքերու մէջ ալ՝ մինակ մասնաւոր իմաստ ունեցող անուններուն եռքը յարաբերականով բերուած մի՝ քանկեանները կրնանք աշխարհաբարի մէջ ընդունելութեան դարձընել. ուստի կրնանք ըսել. Վ՚էր՝ ՝պ՝ա՝ՀՀ՝ն՝ Հռոմայեցիք և Տ՝ՀՀ՝ՀՀ՝ՀՀ

սիրելի եղող աս գաւակը ձեզի կը թողում. անոր մանկութեանը խնամ տարէք։

5. Այլաբանութիւններն ալ խօսքին մը-նացած մասէն առորակէտով կը բաժնուին։

Այնչափ հիմա խօսածնիս՝ նախադասութեան մը այլեւայլ մասերուն կէտադրութեանը վրայ էր. հիմա այլեւայլ նախադասութիւններու կէտադրութեան կանոններուն վրայ պիտի խօսինք։ Քանզի խօսքի մը մէջ շունչի հանգիստ տալու եւ մասամբ շփոթութիւն չպատճառելու համար՝ ոչ միայն միւնոյն նախադասութեան մասերն իրարմէ բաժնել հարկ է, այլ եւ աւելի բաժնել հարկ է խօսքին մէջ գրուած այլեւայլ նախադասութիւնները, որոնք 'ի միասին ամբողջ խօսք մը կազմելու կը զուգընթանան։

Խօսքի մը կամ պարբերութեան մը մասերն եղող նախադասութիւններուն կէտադրութեան կանոնները գիւրաւ աղէկ միտք առնելու համար՝ հետեւեալ ծանօթութիւնները գիտնալ հարկաւոր է։

Ա. Նախադասութիւն մը պարզ կը կոչուի, երբոր անուն բային կամ ստորոգելին մէկ բաւ է. զոր օրինակ. Արեւը լուսաւորում է. լուսինը լուսաւորում է. Պետրոս կը գրէ. Պետրոս կը խօսի։

Բ. Նախադասութիւն մը բաղադրեալ կը կոչուի, երբոր երկու անուն բայի, կամ երկու ստորոգելի ունի։ Վերի պարզ նախա-

դասութիւնները կրնանք բաղադրեալ նախադասութեան դարձընել, այսպէս.

Ընթերցումներ լուսաւորներ են, Պետրոս կը գրէ ու կը խօսի։

Երկու պարզ նախադասութիւն բաղադրեալ նախադասութիւն մը դարձընելու համար, ինչպէս օրինակներէն կը տեսնուի, պէտք է որ երկուքն ալ միևնոյն անուն բային և կամ միևնոյն ստորոգելին ունենան։

Դ. Մէկ պարզ և թէ բաղադրեալ նախադասութիւն մը Բաղմաման կը կոչուի, երբոր անուն բային կամ ստորոգելին այլևայլ յատկից մասեր ունին, զոր օրինակ, ածական՝ յատկացուցիչ՝ խնդիր, և այլն։ Հետևեալ նախադասութիւնը պարզ ու բազմաման է.

Պետրոս՝ կորսուած դատի մը վրայով հիմա ստիպով իր հօրեղբօրը երկայն նամակ մը կը գրէ։

Դ. Խօսք մը որ կը բաղկանայ տարբեր անուն բայի և տարբեր ստորոգելի ունեցող երկու կամ շատ նախադասութիւններէ, որոնք, թէպէտ առանձին առանձին ամբողջ իմաստ կ'այտայայտեն, բայց միևնոյն խօսքը բացատրող անդամներ են, Բաղադրեալ խօսք * կը կոչուի. ուստի հետևեալ խօսքերը բաղադրեալ են։

Ա՞ստուած կ'առաջադրէ, և Աստուած կը տրամադրէ։

---

* Որև իցէ նախադասութիւն, թէ պարզ և թէ բաղադրեալ, պարզ խօսք մըն է։

Ընքաւորութիւնը շատ բաներու կը կարօտի, բայց ազատութիւնն ամէն բանի կը կարօտի։

Ե. Բաղադրեալ խօսք մը պարբերութիւն է

Նախ՝ երբոր խօսքին երկու անդամները իրարմէ կախում ունին, և առ կախումը շաղկապով մը կը բացատրուի. այնպէս որ եթէ ան շաղկապը վերցընես, խօսքին մասերուն իրարմէ կախումը կամ իրարու հետ կապակցութիւնը չհասկըցուիր *։ Այսպէս են հետևեալ խօսքերը։

ՕՐԻՆԱԿՆԵՐ.

Մինչ Մենդոր ու Հազայէլ կը խօսէին, ոսկեփայլ ու կապուտագոյն թեփերով ծածկուած դրփիններ նշմարեցինք։

Եթէ սոխակն անուառներուն երգիչն է, գեղձանիկը խուցերուն երաժիշտն է։

Եթէ մեզի մեր տկարութեանը վրայ գաղափար տուող բան մը կայ, մեր ծննդենէն անմիջապէս ետքը մեր գտնուած վիճակն է։

Երբոր մեր բարեկամներուն մեր վրայ ունեցած սէրը չափազանց կը գովենք, ոչ այնչափ մեր շնորհակալութիւնը որչափ մեր արդիւնքը հաշուել կ՚ուզենք։

Թէպէտ առ խօսքին խորին իմաստութիւնը տակաւին չէի հասկընար, բայց և

---

* Պարբերութիւն չեղող խօսքի մը անդամները կապող շաղկապը վերցընելու ըլլանք, խօսքին կապակցութեանը վնաս չըլլար։

այնպէս անոր մէջ մաքրութիւն ու վեհութիւն մը կը զգայի։

Որչափ աւելի պարտաւորութիւն մը մեծ ու տաժանելի է, նոյնչափ անոր հիմը զգալի և զօրաւոր ըլլալու է։

Որովհետև յոյս չունինք որ մեր վրայ թագաւորէք, գէթ մեր օրէնքները հաստատուն պահել տալու կարող թագաւոր մը գտնելու մեզի օգնեցէք։

Ընձնասիրութեան աշխարհին մէջ որչափ նոր տեղեր որ գտնենք, տակաւին շատ անծանօթ երկիրներ կը մնան։

Երկրորդ՝ երբոր անիկա բաղադրող նախադասութիւններն իրարու հակադրեալ իմաստ կը պարունակեն. զոր օրինակ.

Երջանկութեան հասնելու համար բոլոր մարդիկ հարստութիւն կը փնտռեն. բայց և այնպէս երջանիկ հարուստներ շատ քիչ կը գտնուին։

Ա՛ս խօսքը պարբերութիւն մըն է։

Երրորդ՝ բաղադրեալ խօսք մը պարբերութիւն է, երբոր անիկա բաղադրող նախադասութիւններուն մէկը մէկալին պատճառն է. զոր օրինակ.

Ա՛ստուած անսահման կատարեալ, և անսահման բարի է. հետևաբար ոչ կրնայ խաբուիլ, ոչ ալ մեզ կը խաբէ։

Ա՛ս օրինակներէն և բացատրութենէն կը տեսնուի որ պարբերութիւն մը երկու

մաս ունի. ուստի

Զ. Պարբերութեան մը մասերը պարբերութեան երկու անդամներ են. որոշելու համար՝ պարբերութեան առաջի անդամը նախընթաց, իսկ երկրորդը հետևորդ անդամ կը կոչուի։

Է. Երբոր պարբերուած մը թէ նախընթաց և թէ հետևորդ անդամը մէյմէկ նախադասութիւնէ կը բաղկանան, պարբերութիւնը պարզ կը կոչուի. ինչպէս են վերը բերուած երկու պարբերութիւնները։ Բայց երբոր պարբերութեան մը երկու անդամներէն մէկը երկու կամ աւելի նախադասութիւնէ կը բաղկանայ, պարբերութիւնը բաղադրեալ կը կոչուի։ Զոր օրինակ.

Մարդ իրեն հետ համամիտ և համակարծիք եղողներուն հետ երկայն ատեն դժուարաչի կրնար մնալ. վերջապէս կը հաշտուի։ Բայց իր զգացմանն ու կարծեացը հակառակ եղողներուն հետ սէր և միաբանութիւն ունենալու վայրապար կ'աշխատի. ասանկները կանուխ կամ անագան իրարմէ կը բաժնուին։

Այս պարբերութիւնը բաղադրեալ է *։

Այս ծանօթութիւնը տալէ ետքը՝ հիմա խօսք մը կամ պարբերութիւն մը կազմող

---

* Պարզ և բաղադրեալ նախադասութիւն, պարզ և բաղադրեալ խօսք, պարզ և բաղադրեալ պարբերութիւն իրարմէ տարբեր բաներ են։ Այս տարբերութիւնն ազէկ միտք առնելու է։

այլեւայլ նախադասութեանց կէտադրութեանը գանք։

Մինչեւոյն նախադասութեան վերաբերեալ մասերը, այսինքն բաղադրեալ եւ բազմամասն նախադասութիւն մը մասերը բաժնելու վրայ խօսեցանք երես 17։ Ասոնց երեսներուն մէջ խօսած ենք թէ միեւնոյն գոյականի վերաբերեալ ածականներ կամ սաորոգելիներ, միեւնոյն բայի վերաբերեալ անուն բայիներ կամ խնդիրներ, միեւնոյն անուան բայի վերաբերեալ բայեր, եւ վերջապէս բուն նախադասութիւն կախում ունեցող եւ կամ միջանկեալ խօսքեր՝ երբ թթով ու երբ սաորակէտով բաժնուելու են. նոյնպէս բացադարձուած կեցած խօսքեր կամ կոչական հոլովներ ու բացայայտիչ խօսքեր ինչ կէտանշանով բաժնել պէտք է։ (Երես 15·16)։

ԽՕՍՔԻ ԿԱՄ ՊԱՐԲԵՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ ՄԱՍԵՐՈՒՆ ԿԷՏԱԴՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

1· Երբոր սոսկ խօսքի մը մէջ երկու կամ աւելի նախադասութիւններ կան որոնք, թէպէտ՝ առանց իրարմէ կախում ունենալու կամ իրարու հետ շաղկապով մը կապուած ըլլալու՝ ինքնին ամբողջ իմաստ կը յայտնեն, բայց ամենը մէկէն բոլոր խօսքը բացատրելու կամ անոր այլեւայլ կերպարանքներն ու տեսութեան կէտերը երեւան հանելու կը ծառայեն, ան նախադասութիւնները իրարմէ սաորակէտով բաժնելու է։ Զոր օրինակ.

Հեռանք որ առողջութիւնը լոկ անուն մի է, կեանքը սոսկ երազ է, փառքը մինակ երևոյթ մըն է, զուարճութիւններն ու հեշտութիւններն ուրիշ բան չեն եթէ ոչ վըտանգաւոր զբօսանքներ։

Պառնալիքներ կ'ըլլան, մարդիկ կը վազեն, օդը կը հեծէ, սուրը կը շողայ։

2. Երբոր սանկ բազմաթիւ նախադասութիւններ նախընթաց խօսքի մը բացատրութիւն կամ իրր թռուցիկ մասանց են, ան նախընթաց խօսքն սառնցմէ միջակէտով մը կը բաժնուի. զոր օրինակ.

Ամեն բան Գաղիոյ դէմէ. օտարները գրգռուած են, գաշնակիցք ստահակեալ են, բարեկամք վհատեալ են, յաղթուածները քաջալերութիւն գտած են, նախանձողներուն գէնք տրուած է։

Պատերազմին յաջողանքները միշտ ազեռալի ու ատելի են։ Հոս ամենայն ինչ երկնաւոր իմաստութեան մը գործ է. ամեն բան զգօնութեամբ է, ամեն բան սրբութեամբ է, ամեն բան պիրոյ արժանի է, ամեն բան կը ցուցնէ անանկ հեղինակութիւն մը որ մարդու հեղինակութենէն վեր է։

Երբոր թագաւորաց պիտոյը մարդոց ձեռքին մէջն է, բարէ, կարծես թէ ամենայն ինչ զանոնք թիւրելու կը միաբանի. շողոքորթութիւնը զանոնք կ'ապականէ, քաղաքականութիւնը զանոնք կը խաբէ, չար խրատուները զա-

նոնք կը գրաւեն, գէշ օրինակները զանոնք կը քարշեն, գործերուն զանազանութիւնն անոնց միջոցը կը ցրուէ։

3. Երբոր սոսկ խօսքի մը, այսինքն պարբերութիւն չեղող խօսքի մը անդամները է՞՝ ո՞՝ ի՞մ՝ ի՞ն՝ և ասոնց նման քանի մը շաղկապներով կապուած են, իրարմէ կը բաժնուին ստորակէտով. մանաւանդ երբոր երկնկեկ են. զոր օրինակ.

Կ՚ըսեմ բայց չեմ հաւատար.

Ցուն ու առիր.

Ա՞ստղս կ՚առաջադրէ, ու Աստուած կը տրամադրէ։

Ընկիկա ինծի հնազանդելու յորդորէ, կամ գէթ ինծի դէմ անհնազանդ ըլլալու մի դրդեր։

4. Երբոր խօսք մը պարզ պարբերութիւնէ և ոչ բազադրեալ՝ ու անդամներուն մէկը մէկալէն կախումուն, երկուքին մէջտեղը ստորակէտ կը դրուի։ Զոր օրինակ.

Մէկէտև դեռ պատանի եմ, բայց իմ դատողութիւնս չքսելու ունակութեան մէջ ծերացած եմ։

Ինչ նիւթի վրայ որ ճառեն, իրը բոլոր պարագաներուն եղածին պէս կը բացատրեն։

Մէկէտ նկարչութիւնը շատ կողմանէ իրականին զօրութիւնը չունի, այսու ամենայնիւ ճշմարիտ է թէ անոր նկարները՝ մեզ հանդիսատես ընող տեսարաններ են։

Լմեմ բարոյականը հազիւ որոշուէն եւ լաւ կը թուի, պատճառն անէ որ մարդիկ գիտողութեամբ անոր ճշմարիտ սկզբունքներուն հասու չեղած՝ բարոյականի դրութիւն մը շինելու պարտաւորուեցան։

Պէտք է գիտնալ որ ասանկ պարբերութիւն մը որուն նախընթաց և հետևորդ անդամները իրարմէ կախում ունին, միշտ ան երկու անդամներուն մէջտեղը ստորակէտ կ'ուզէ՝ և ոչ միջակէտ։ Բայց երբոր նախընթաց և հետևորդ անդամը և կամերկուքն ալ՝ իրենց մէջ ուրիշ բաժանումներ ունին, անոնք բթով կը բաժնուին իրարմէ. ստորակէտը մինակ նախընթաց ու հետևորդ անդամին մէջ կը դրուի։ Եւ ասանոր համար է, որ պարբերութեան գլխաւոր անդամներն ու երկրորդական անդամներն անխտիր ստորակէտով բաժնուելով՝ իմաստին շփոթութիւն չտրուի։ Ըսատի վերի օրինակները հոս երկրորդական բաժանումներով գնենք, ու ըստ այնմ կէտադրենք։

Ինչ նիւթի վրայ որ ճառեն՝ ինչ խորհուրդ որ իրենց մտացը մէջ ծնանի՝ ինչ զգացումներ որ իրենց հոգին գրաւեն, ասամենը բոլոր պարագաներովն եղածին պէս՝ և ամեն մէկուն հետ անբաժին եղող պատկերներով կը բացատրեն։

Թէպէտ նկարչութիւնը շատ կողմանէ իրականին զօրութիւնը չունի, այսու ամենայնիւ ճշմարիտ է թէ անոր նկարները մեզ

հանդիսաւոր ընող տեսարաններ՝ անոր պատկերները մեր աչուքներուն առջին ելլող օրինակներ են։

Լեթէ բանաստեղծութիւնը՝ երկրաչափութիւնն՝ աստեղագիտութիւնն ու առհասարակ բոլոր գիտութիւնք աւելի կամ նուազ տարբերութեամբ իրենց կատարելութեանը կը դիմեն՝ մինչդեռ բարոյականը հազիւ որբոցէն եկած կը թուի, պատճառն ան է որ մարդիկ ընկերութիւն ձևանալով իրենք իրենց օրէնք և բարոյական տալու ստիպուած ըլլալնուն համար՝ դիտողութեամբ բարոյականին սկզբունքներուն հասու չեղած՝ բարոյականի դրութիւն մը շինելու պարտաւորուեցան։

ՄԻՋԱԿԷՏ.

1. Միջակէտ կը դրուի խօսքի մը անդամէն ետքը, երբոր հետևեալ նախադասութիւններն անոր այլևայլ պարագաները կը նկարագրեն, կամ անոր իրը թուուած մասանց են։ Տես երես 22.

2. Միջակէտով կը բաժնուին պարզ պարբերութեան մը նախընթաց և հետևորդ անդամները, երբոր հետևորդ անդամը նախընթացին հակադրեալ իմաստ ունի, և կամ երբոր նախընթացը հետևորդին պատճառն է. զոր օրինակ.

Բոլոր մարդիկ երջանկութեան հասնիլ կ՚ուզեն. բայց և այնպէս երջանիկ հարուստներ շատ քիչ կը գտնուին։

Բան մը չգիտնալն ամօթ չէ. բայց սորվիլ չուզելն ամօթ է։

Ստուած անսահման կատարեալ և անսահման բարի է. հետևապէս ոչ կրնայ խաբուիլ, ոչ ալ մեզ կը խաբէ։

Ա՝ եր թագաւորը բարեսիրտ և մարդասէր է. ապա անոր գթութեանը կրնանք պաղատիլ։

3. Լ՝թէ պարբերութիւն մը բաղադրեալ է, այսինքն նախընթաց կամ հետևորդ անդամը և կամ երկուքն ալ երկրորդական անդամներուն՝ ու երկրորդական անդամները ստորակէտով բաժնուած են, նախընթաց ու հետևորդ անդամները միջակէտով կրնան բաժնուիլ. բայց երբոր երկրորդական անդամները միջակէտով բաժնուած են, պարբերութեան գլխաւոր անդամները՝ որ են նախընթացն ու հետևորդը՝ վերջակէտով կը բաժնուին։ Զոր օրինակ՝ հետևեալ օրինակը երկու կերպով ալ կրնանք կէտադրել։

Ա՝ արդ իրեն հետ համամիտ և համակարծիք եղողներուն հետ երկայն ատեն գրաբեալ չկրնար մնալ, վերջապէս կը հաշտուի. բայց իր զգացմանցն ու կարծեացը հակառակ զգացում և կարծիք ունեցողներուն հետ սիրով ու միաբանութեամբ ըլլալու վայրապար կ՝աշխատի, ասանկները կանուխ կան անագան իրարմէ կը բաժնուին։

Ա՝ արդ իրեն հետ համամիտ և համա-

կարծիք եղողներուն հետ երկայն ատեն գժտեալ չի կրնար մնալ. վերջապէս կը հաշտուի։ Բայց իր զգացմանցն ու կարծեացը հակառակ զգացում և կարծիք ունեցողներուն հետ սիրով ու միաբանութեամբ ըլլալու վայրապար կ'աշխատի. ասանկները կանուխ կամ անագան իրարմէ կը բաժնուին։

Այս խօսքը երկրորդ կերպով բաժնելն աղէկ է, քանզի ճշդիւ խօսելով՝ խօսքին մէջ երկու պարբերութիւն կայ. առջի մասը պարբերութիւն մըն է, քանզի երկու իրարու հակադրեալ իմաստ ունեցող նախադասութիւններէ կը բաղկանայ։ Նոյնպէս է երկրորդ մասը։

ՎԵՐՋԱԿԷՏ.

Վերջակէտը կարդալու ատեն շունչին բոլորովին կատարեալ հանգիստ մը տալու նշան է։ Բայց աս կատարեալ ու վերջին հանգիստը խօսքին մէջ ուր ըլլալը ճանչնալու համար՝ հետևեալ կանոնները միտք առնելու է։

Խօսք մը որ վերջակէտով կը լրանայ կամ կը գոցուի, լրացեալ կամ ամբողջական խօսք կը կոչուի։ Եւ գրութեան մը շարունակութեանը մէջ ան մասերը որոնք նոր տողով կը սկսին, պողգիր կը կոչուին։

Տողագիր մը կրնայ մէկ կամ աւելի լրացեալ խօսք պարունակել. ուստի և տողա-

գրի մը մէջ որչափ վերջակէտով լմնցած խօսք կայ, այնչափ լրացեալ խօսք կայ։

Լրացեալ խօսք մը կրնայ մէկ կամ աւելի, զոր օրինակ՝ երկու կամ երեք պարբերութիւն բաղկացած ըլլալ։ Պարբերութիւն ինչ ըլլալն արդէն բացատրեցինք, տես երես 18։ Ուստի

Կանոն. Երբոր պարբերութեան մը նախընթաց ու հետևորդ անդամներն իրարմէ միջակէտով բաժնուած են, նոր պարբերութիւնը վերջակէտէ ետքը սկսելու է։ Բայց թէ որ պարբերութեան նախընթաց ու հետևորդ անդամները ստորակէտով բաժնուած են, նոր պարբերութիւնը միջակէտ դնելով կրնայ սկսուիլ։ Հետևեալ օրինակներուն մէջ ասիկա բացայայտ կը տեսնուի։

ՕՐԻՆԱԿ. Ա.

Մարդիկ կ'ուզեն որ արդարութիւնն իրենց ըլլայ և ոչ ուրիշին. անոր համար է որ բնաւ արդարութիւն չըլլար։ Քանզի քանի որ արդարութիւն ընողն արդարութի պահանջողէն տարբեր է՝ ըստ որում ոչ ոք իր դատին դատաւորն է, յայտնի է թէ ինչու համար աշխարհիս վրայ արդարութիւն չի կրնար ըլլալ։

ՕՐԻՆԱԿ Բ.

Եթէ մեր նձատակները կամ դիտաւորութիւններն ուղիղ և մաքուր ըլլան, յաջողելու մեծ յոյս կրնանք ունենալ. և եթէ

չյաջողինք, անյաջողութեամբ ոչ թէ պատ-
ժուած՝ այլ զրկուած կ'ըլլանք. բայց երբոր
մեր նպատակները թիւր և չար են՝ ու մեր
յուսացած յաջողութիւնը մեզնէ կը փախ-
չի, միանգամայն թէ զրկող և թէ պատժու-
ած ենք. զրկող ենք, քանզի նպատակնիս ա-
նիրաւ էր. պատժուած ենք, քանզի անյա-
ջողութիւնը որ մաքուր և ուղիղ դիտաւո-
րութիւն ունեցողին առաւելն որոմու-
թիւն մը կը բերէ՝ չարին ու անիրաւին նաև
յուսահատութիւն է։

Ա. Օրինակին մէջ առջի պարբերու-
թեանէն ետքը վերջակէտ դրուած է, քան-
զի պարբերութեան նախընթաց և հետևորդ
անդամը միջակէտով բաժնուած է։

Իսկ Բ. Օրինակին մէջ չորս պարբերու-
թիւն կայ, քանզի ամեն մէկ պարբերու-
թեան նախընթաց և հետևորդ անդամները
ստորակէտով բաժնուած ըլլալուն հա-
մար՝ պարբերութիւններն իրարմէ միջա-
կէտով բաժնուած են.

Դանօթութիւն. Ի մեն ևի ն կէտանշան չը-
գործածուիր.

1. Ի երբոր երկու Ձոյնատեսակ բառ, զոր
օրինակ՝ միևնոյն գոյականի վերաբերեալ
երկու ածական, միևնոյն բայի վերաբեր-
եալ երկու անուն բայի, միևնոյն անուան
բայի վերաբերեալ երկու բայ, և, ու, կամ,
բայց և ուրիշ ասանց. նման շաղկապներով
կապուած են, և ուրիշ յարակից մասեր չու-

նին, զոր օրինակ.

Պատիժն ու մոլութիւնն անբաժանելի են։

Որու բոլորտիքդ եղողներուն կորուստը կամ փրկութիւնը քու կորուստդ կամ փրկութենդ կախում ունի։

Արդուս կիրքերն անոր ինքնակար բայց տիրած թշնամիներն են։

Արդոց տկարութիւնն ամենէն յայտնի հոն կը տեսնուի, ուր իրեն ինքնակար մէկ ունակութիւնը կ'ատէ ու չի կրնար թողուլ. առաքինութիւն մը կը սիրէ բայց չի կրնար ստանալ։

2. Կրկնուած շաղկապներով կամ մակբայներով կապուած խօսքերը կէտանշանով չեն բաժնուիր.

Ամեն տեղ հասած, ամեն տեղ ծաղկած կը տեսնենք թէ Բոմոնային պատուղները թէ Ֆլորային ընծաները։

Ի թողուր ոչ ագահութեան ոչ հպարտութեան որ քեզ քարշ ածեն։

Կամքաջ եղիք կամքաջերուն հնազանդ։

3. Որ, Ոչ շաղկապներով կապուած խօսքեր նախընթաց խօսքէն չեն բաժնուիր կէտանշանով, երբոր նախընթաց բային խընդիր են. զոր օրինակ.

Ընենք ուզեր որ մէկը մեզ յանդիմանէ, քանզի ուղղուիլ չենք ուզեր։

Հողոքորթութենէ կը խաբուինք, քանզի կը կարծենք թէ ուրիշներն այնչափ կոյր են, որ մեր մոլութիւնները չեն տեսներ.

կամ այնչափ տգէտ են, որ մեր մոլութիւն-ներն առաքինութիւն կը կարծեն։

ՀԱՐՑԱԿԱՆ ՈՒ ՉԱՐՄԱՑԱԿԱՆ ԿԷՏԵՐ՝

Հարցական կէտը հայերէն (՞) պարոյկ կոչուած նշանն է, որնոր հարցում եղած բառին վրայ կը դրուի։

Դո՞ւ ես թէ ուրիշի մը սպասենք։

Ա՞ռդուս սիրտը ո՞վ կրնայ գիտնալ։

Ձեզ ձեր հայրենիքը բերելու համար Աստուծոյ ըրածները մոռցա՞ք։ Եգիպտոսէն ինչպէս ելաք։

Հարցում մը ուղղակի և անուղղակի կրնայ ըլլալ։ Ուղղակի է հարցումը երբոր հարցումն ընողին խօսքը անմիջապէս յառաջ կը բերենք. իսկ անուղղակի՝ երբոր հարցում ընողին բուն խօսքն առանց յառաջ բերելու, մինակ կը յիշենք թէ այս ինչ հարցումն ըրաւ։ Առջի դիպուածին մէջ պարոյկ կը դրուի, երկրորդ՝ դիպուածին չի դրուիր։ Զոր օրինակ.

Եկեսիպպոս հարցուց. Փիլոկղէս կըղզոյն ո՞ր կողմը կը բնակի։

Եկեսիպպոս հարցուց թէ արդեօք Փիլոկղէս կղզոյն ո՞ր կողմը կը բնակէր։

Առջինը ուղղակի հարցումէ, և նախընթաց խօսքէն միջակէտով կը բաժնուի։

Երկրորդն՝ անուղղակի հարցումէ, և թէ շաղկապով նախընթաց խօսքին հետ կը կապուի։

Զարմացական կէտը հայերէն (՛) եր-

կար ըսուած նշանն է, և հոգւոյն մէկ կիրքը նշանակելու համար կը գործածուի։ զորօրինակ.

Ո՛վ երջանիկ օրեր. անչափ երջանիկ օրեր. օրե՛ր որոց ես յարգը չճանչցայ. օրե՛ր որ կարի արագ անցան. դուք ալ երբեք պիտի չդառնաք. իմ աչուքներս ասոնք ալ բնաւ պիտի չտեսնեն։

ԿԱԽՄԱՆ ԿԷՏ.

Կախման կէտը սա նշաններով (. . .) կը նշանակուի, ու կը գործածուի կամ քիչ մը երկայն հանգիստ և կանգ առնելու համար, և կամ խօսքը պակաս և կիսկատար մնացած ըլլալը ցուցնելու համար։

Ո՛նգ այնպէս յոգնած ու անօթի տեսնելով ըսաւ. Եթէ բլրոյն անդիմի դին գացած ըլլայիք, աւելի աղէկ ընդունելութիւն կը գտնէիք. . . կը գտնէիք խաղաղ բնակութիւն մը. . . մարդասէր մարդիկ. . . բարի մարդիկ. . . ։

Ո՛վ Դելեմաք, քու երկունքդ հօրդ երկունքէն աւելի են. գոռոզ թշնամին փոշւոյ վարակեալ քու սրոյդ տակ կը հեծէ. պղնձի դուռները, անմատչելի մարտկոցներ քու ոտիցդ առջևը կ'իյնան։ Ո՛վ դիցուհիդ մեծ, զոր հայրը. . . ։ Պատանի դու, դու պիտի անանց վերջապէս. . . ։ Ան բառերուն գալով խօսքը բերանին մէջ կը մեռնի, և ինքն լի հիացմամբ ակամայ լռութեան մէջ կը մնայ։

Բ. օրինակներէն առջինին մէջ կախման գէտերը միանակ երկնկեկ հանգիստ ցուցնելու համար են. իսկ երկրորդին մէջ խօսքին շարունակութեանն ընդհատած ըլլալուն համար է։

ՏԱՐ.

Տաշը կարճ և ուղիղ գիծ մի է, այսպէս (—) որ երկու դէպքի մէջ կը գործածուի. մի՝ և դրխաւորապէս տրամախօսութեան մէջ հարցման ու պատասխանելոյն մէջտեղը, առանց Ի՞ՐՈՒ, ըսա՞, պատասխան տո՞ւ, ԷՐԻՆԵՑ և այլն, խօսքերը գործածելու։

Պատանի դու, ըսաւ Գասիք անիկա տեսնելով, ճչ ապաքէնդու ! աս Գազասին պաշտած Աստուածը կը պաշտես։ Այո, պատասխանեց Տավիլա։ Ձե՞ս հաւատար որ մենք ալ քեզի պէս ան Աստուծոյն զաւակներն ենք։—Կը հաւատամ։—Ապա եղբարք ենք. ընդէր ուրեմն ձեռուընդ մեր արեամբը թաթաւելու կուգաս։—Ես կը հնազանդիմ։—Ո՞ւր։—Արդէն գիտէք։—Այո, գիտեմ որ դուն ամենէն չար, և ինձի դէմ ամենէն անագորոյն մարդէ ծնած ես։

Երկրորդ՝ փակագծի տեղ կը գործածուի, այսինքն խօսքին ընթացքին մէջ երկու կողմէն զատելու համար անանկ խօսք մը որ միջանկեալ ու երկայն է, և դիտողութիւն մը կը պարունակէ։ Անանկ խօսքեր առաջ փակագծի մէջ կ՚առնուէին, հիմա աշով կը զատուին, որ խօսքին թելը կտրած

բլլալուն համար՝ բուն խօսքին շարունակու-
թիւնը հասկընալու դժուարութիւն չտայ։

ՉԱԿԵՐՏ։

Չակերտը կրկին ստորակէտի ձևով («)
նշան մի է, որն որ կոչում եղած խօսք մը
նշանակելու համար կը գործածուի։

Ամանք չակերտը կոչում եղած խօսքին
բոլոր տողերուն սկիզբը կը դնեն։ Այսպէս.

«Հռովմայեցւոց հրեշտակները Բրեննո-
սի հետ եղած դաշնադրութիւնը յիշելով
աս իշխանին դաշանց դէմ ըրած նենգու-
թեանը դէմ խօսեցան։ «Ագ ոսկին կապի-
«տոլ տարէք, ըսաւ Բրեննոս, հրեշտակնե-
«ուն. և դուք, ո՛ Գաղատացիք, ըսաւ, ձեր
«կշիռներովն ու կշռորդներովը ետ դարձէք.
«Հռովմայեցիք իրենց երկիրները սրով կ'ու-
«զեն ժառանգել։

Ամանք ալ չակերտը կոչում եղած խօս-
քին սկիզբն ու վերջը կը դնեն։

Հետոյ դառնալով ժողովուրդին՝ որ ի-
րեն եղած բռնութեանը դէմ գայրացած
կ'երևէր, ըսաւ. «Ընչակից եղէք ինծի, ըն-
կերակիցք իմ. ասանկ մեծ բռնակալութեան
մը դէմ մեզի ուրիշ նպաստ չկայ բայց ե-
թէ մեր զօրութիւնը»։

ՓԱԿԱԳԻԾ։ ( )

Փակագծին գործածութիւնը յայտնի է.
խօսքին մարմինէն դուրս՝ բայց անոր, իբր
յաւելուած կամ բացատրութի, յաւելուած
մաս մը զատելու համար կը գործածուի։

ԱՍ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆԸ ԵՐԵՍ ՅՑ ՄՈՒՑՈՒԱԾ Է։

։ 'է ։ յ ։ ց ։Նախդիր կամ Նախադրութիւնները ։ երբոր առանց ը ի հայցական ու տրական հոլով խնդիր կ'առնեն , հետեւեալ նշանակութիւնները կ'ունենան ։

'է կամ յ նախդիրներն երբոր առանց ը ի հայցական խնդիր կ'առնեն ։ Նախ՝ դէպ 'ի տեղ մը շարժում կը ցուցընեն ։ զորօրինակ ։ մատանել 'ի փոռն կամ 'ի փոռնա ։ արկանել 'ի քառնա ։ երթալ յեկեղեցի ։ և այլն ։

Երկրորդ գործիականին զօրութիւն կ'ունենայ ։ զորօրինակ՝ մկրտիլ 'ի հոգէ սուրբ և 'ի հուր ։ 'ի Խորէ և 'ի Տոքէք ապաշխարել ։ 'է կամ յ նախադրութեամբ հայցականին որ ինչպէս ըսինք ։ շարժում ցուցընելու համար է ։ առաջ նախդրիւ տրական կ'ըսուէր ։ և հոլովներուն կարգը կը գրուէր ։

Նոյն 'է և յ նախդիրներն ։ երբոր տրական խնդիր կ'առնեն ։ դադարում կը նշանակեն ։ զորօրինակ ։ նստիլ 'ի փառն ։ բնակիլ 'ի քաղաքի ։ կալ յեկեղեցոջ ։ և այլն ։

Ասոնք ալ առաջ ներգոյական կ'ըսուէր ։

Բայց անուններուն յոգնակիին մէջ ։ նոյնպէս Երրորդ հոլովման (գետ ։ գետոյ) մէջ ։ տրականն ու բացառականն մի և նոյն վերջաւորութիւնն ունենալուն համար ։ թէ շարժում և թէ դադարում ցուցընելու համար 'է և յ նախադրութիւնները միանակ առանց ը ի հայցական հոլով կ'առնեն ուստի կ'ըսուի միակերպ ։ ընկենուլ 'ի ջուր կամ 'ի ջուրը ։ և՝ բնակիլ 'ի ջուր կամ 'ի ջուրս ։

ԳՐՔՈՒԿԷՍ ԻՋԱՏ

ՀԱՅԿԱԶԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԱՐԴԵԱՄԲ ՏՊՈՒԱԾ ԳՐՔԵՐՆ ԵՆ

ԴԱՍԱԳԻՐՔ

1. Ա՛ՆՈՐԴ ՀԱՅ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ կամ Նոր Քերական և Հեգուրան։ 32 Երեսէ բաղկացեալ. գին 1 ղուրուշ։

2. ԹՈՒԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՌՕՏ. Թուագիտութեան սկզբունք, չորս գործողութիւնները թէ պարզ և թէ տասնորդական թիւերով կատարելու կը վարժեցընէ։ 128 Երեսէ բաղկացեալ. գին 3 ղուրուշ։

3. ՆԽԱԳԻՊԵԼԻՍ ՄԱՆԿԱՆՑ. Տղայք հեգով կարդալը սորվելէն վերջը ընթերցանութեան վարժըվելու համար յօրինուած. գին 5 ղուրուշ։

4. ՊԱՐԳԱՏ ՏՂԱՅՈՑ. Ներկայ գրքոյկս, որ տղոց պարտականութիւնները կը սորվեցընէ, ազգու խօսքերով և ընտիր պատմական օրինակներով։ Երեսէ բաղկացեալ. գին 4 ղուրուշ։

ԲԱՐՈՅԱԿԱՆՔ

5. ԱՆԳՈՒՆԳԵՊՐՈՍ. Աղեքսանդր Տիւմա մեծանուն հեղինակին մէկ ընտիր վիպասանութիւնը։ 75 Երեսէ բաղկացեալ. գին 3 ղուրուշ։

6. Խորոյանք Պլատոնայ. Հատոր Բ. Պլուտարքոս փիլիսոփային՝ ուսնկնդրութեան վրայ շինած մէկ ճառը. գին 2 ղուրուշ։

7. Խորոյանք Պլատոնայ. Հատոր Գ. Պլուտարքոս փիլիսոփային՝ ճըշմարիտ բարեկամը շողոքորթէն զատելու վրայ գրած մէկ ճառը. գին 3 ղուրուշ։

ԱՆՈՒԱՆՔ

ՄԸՏՆՋԵՆԱՒՈՐ ԲԱԺԱՆՈՐԴԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՆ

Ի յիշատակ անմահ հոգւոյ
Յակոբ Պատրիարքի Նալեան։
Ի յիշատակ անմահ հոգւոյ
Պաղտասար պատուելւոյ։
Ի յիշատակ անմահ հոգւոյ
Գրիգոր պատուելւոյ Փէշտիմալճեան։
Ի յիշատակ անմահ հոգւոյ
Նիկողայոսի Մ. Ջօրայեան։
Ի յիշատակ անմահ հոգւոյ
Երանուհի տիկնոջ Յ. Եէմէնիճեան։

Ալիքսան Յ. Խօրասանճեան
Ահարոն Վարպետեան
Անդրանիկ Պէյ Կրճիկեան
Գառնիկ Յ. Յովակիմեան
Գրիգոր Ատափազարցի Տէր Գէորգեան
Գրիգոր Խուրատաճեան
Գրիգորիկ Կ. Պալեան

Դանիէլ Մարկոսեան
Եսայի Մ. Անուխեան
Լէոն Մ. Գաբամաճեան
Կարապետ Սագայեան
Ճանիկ Պէյլիկճեան
Մկրտիչ Պէնտէրլեան
Յակոբ Ոսկան
Յակոբիկ Կ. Պալեան
Յարութիւն Մարգարեան
Յովհաննէս Յակոբեան
Յովհաննէս Յ. Ամիրաղով
Յովհաննէս Պ. Հովուեան
Յովհաննէս Սպարթալեան
Յոսէփ Գաբամաճեան
Նիկողայոս Տէր Շմաւոնեան
Նշան Հարէնց
Պօղոս Մէրասեէտիեան
Ռուբէն Յ. Քիւրքճեան
Սարգիս Մ. Գաբամաճեան
Ստեփան Ա. Ամիրաղով
Տիգրան Մ. Գաբամաճեան.

ՀԱՅԿ ԳՈՍՊՈՏՅԱՆԻ
ՏՐԻ ՅԱՄԵՆՏԱՆ
ԳՐՊԱՐԱՆԻՆ
ԱԿՆԷԳԵՄԻՆ